1905 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1905 Թ.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

1. Փոխանակուած հեռագիրներ 767
2. Շրջաբերական կոնդակ եկեղեցական կալուածներ վերադարձնելու և դպրոցներ բանալու մասին . 773

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

3. Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի. . . 777
4. Քաղուածք Սինոդի օրագրութիւններից. . . 784
5. Կովկասի փոխարքայութեան սահմաններում Հայ-Լուսաւորչական եկեղեցու դոյից կառավարութեան ժամանակաւոր կանոնները. 788
6. 1874 թուի յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոններ. 791

ԿՐՕՆԱԿԱՆ

7. 792
8. Մեռեալի խորհուրդը Թ. ռ. Գր. քհ. Նոր-Արևեանց. 793

ՄԱՅՐ ԱԹՈՌ ԵՒ ԹԵՄԵՐ 604

9. Վեհափառ Հայրապետն Ալէքսանդրապոլում. X. . 804
10. Վեհափառ Կաթուղիկոսի մուտքը Ս. Էջմիածին Ի. Ս. 808
11. Նուիրատուութիւն. 810
12. Ամերիկայի հայ դաղութը. 810

ՏԱՃԿԱՀԱՅՔ

13. Վանայ լուրեր 817
14. Եթովպիոյ հայոց հոգևոր հովիւը. . . . 819

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

15. Պրաւօսլաւ եկեղեցի Ռուսաց. 822
16. Կաթոլիկ եկեղեցի 829
17. Բողոքական եկեղեցի 830

ԳԻՏԱԿԱՆ

18. Քննադատութիւն «Государственный строй древней грузіи и древней арменіи» Ե. Ֆ. վ. Մ. . . 832
19. Եւրոպիոյ փիլիսոփայներու հայեացքը քրիստոնէութեան վրայ. Մարկոս Աղաբէգեանց. . . 837
20. Հոգեբանութեան տեղը դիտութիւնների շարքում. Պրոֆ. Ի. Դ. Օրշանսկի 848

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 755

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1905—ՌՅԾԴ

Տարի ԼԸ.	ՍԵՊՏԵՄԲԵՐ	Համար Թ.

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Дозволено цензурою 31 Августа 1905 г. г. Тифлисъ.



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլեանդիայի և այլն և այլն և այլն։

Յայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին։

Ռուսիոյ պետութիւնը ստեղծուել է թագաւորի ու ժողովրդի և ժողովրդի ու թագաւորի անքակտելի ամուր միութեամբ։ Թագաւորի և ժողովրդի համաձայնութիւնն ու միութիւնը բարոյական այն մեծ զօրութիւնն է, որից ստեղծուել է Ռուսիան դարերի ընթացքում, որը պաշտպանել է նրան ամեն տեսակ աղէտներից ու պատահարներից և թագաւորը հանդիսանում է իբրև դրաւական նրա միութեան, անկախութեան և ամբողջութեան, նիւթական բարօրութեան և հոգեկան զարգացման ներկայում և ապագայում։ 1903 թուի փետրուարի 26-ին տուած հրովարտակով հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակներին կոչում

էինք սերտօրէն միանալ կատարելագործելու պետական կարգը, ամուր կազմ սահմանելով տեղական կեանքի մէջ, և այն ժամանակ Մեր մտահոգութիւնն այն էր, որ ընտրողական հասարակական հաստատութիւնները համաձայնեցնենք կառավարչական իշխանութիւնների հետ և արմատախիլ անենք նրանց միջև եղած պառակտումը, որն այնքան կործանիչ ազդեցութիւն ունի պետական կեանքի կանոնաւոր ընթացքի վրայ։ Այս մասին չեն դադարել մտածել Ինքնակալ թագաւորները, Մեր նախորդները։

Այժմ հասել է ժամանակը, հետևելով նրանց բարի ձեռներէցութեան, կանչել ընտրել մարդիկ ամբողջ Ռուսաստանից, որ մշտնջենապէս և գործնականապէս մասնակցեն օրէնքների կազմութեան, այս բանի համար մտցնելով պետական բարձր հաստատութիւնների կազմի մէջ մի առանձին օրէնսդրական հաստատութիւն, որին իրաւունք է տրւում մշակելու և քննադատելու օրինագծերը և քննելու պետական ելևմտացոյցերը։

Այս նկատումներով, անխախտ պահպանելով Ռուսական կայսրութեան հիմնական օրէնքը Ինքնակալ իշխանութեան էութեան մասին, Մենք բարոյ համարեցինք հիմնել պետական դուման և կանոնաւորութիւն հաստատեցինք դումայի ընտրութիւններին վերաբերեալ, տարածելով սոյն օրէնքների զօրութիւնը ամբողջ կայսրութեան վրայ, այն փոփոխութիւններով միայն, որոնք հարկաւոր կրդատուեն առանձին

պայմանների մէջ գտնուող նրա մի քանի ծայրերի համար, Ֆինլեանդիայի Մեծ Իշխանութեան ընտրեալների պետական դումայում ունենալիք մասնակցութեան կարգի մասին, կայսրութեան համար ընդհանուր և այդ երկրի օրէնսդրութեանց խնդիրների վերաբերմամբ, Մենք ցուցումներ կը տանք առանձին:

Ընդ սմին Մենք հրամայեցինք ներքին գործերի մինիստրին անյապաղ կանոններ ներկայացնել Մեզ ի հաստատութիւն պետական դումայի ընտրութիւնների կանոնադրութիւնը գործադրելու մասին այնպէս, որ 50 նահանգներից և Դոնի Օ.օրքի շրջանից ընտրուած անդամները կարող լինին դումա գալ 1906 թուի յունուարի կէսից ոչ ուշ:

Մենք Մեզ ենք վերապահում ամբողջովին պետական դումայի հաստատութեան յետագայ կատարելագործութեան հոգացողութիւնը, և երբ կեանքն ինքը ցոյց կը տայ նրա հաստատութեան մէջ այն փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք կարող են կատարելապէս գոհացում տալ ժամանակի պահանջներին և պետական բարօրութեան, չենք յապաղիլ այս մասին պատշաճաւոր ցուցումները տալ իր ժամանակին: Հաւատացած ենք, որ ամբողջ բնակչութեան վստահութեամբ ընտրուած մարդիկ, որոնք այժմ կանչւում են մասնակցելու կառավարութեան հետ միասին օրէնսդրական աշխատանքին, ցոյց կըտան ամբողջ Ռուսիային, որ իրենք արժանի են թագաւորի այն վստա-

հութեան, որով նրանք կանչուում են սոյն մեծ գործին մասնակցելու, և կատարելապէս համերաշխ պետական միւս հաստատութիւնների և Մեզնից նշանակուած իշխանութիւնների հետ, օգտակար աջակցութիւն ցոյց կը տան Մեզ ի բարօրութիւն ընդհանուր մայր-Ռուսիայի հաստատելու պետութեան միութիւնը, ապահովութիւնն ու վեհութիւնը և ժողովրդական կարգն ու բարօրութիւնը։

Ստուծոյ օրհնութիւնը հայցելով Մեր ձեռքով հիմնուող պետական հաստատութեան աշխատանքների վրայ, Մենք, անսասան հաւատով առ Ստուծոյ ողորմութիւնն և առ պատմական այն անշեղ վիճակը, որ որոշել է Ստուածային նախախնամութիւնը Մեր թանկագին հայրենիքի համար, հաստատապէս հաւատում ենք, որ ամենակարող Ստուծոյ օգնութեամբ և իր բոլոր զաւակների միահամուռ ջանքերով Ռուսիան դուրս կը գայ յաղթական ներկայումս իրեն հասած ծանր փորձանքներից և կը վերածնուի իր հազարամեայ պատմութեամբ դրոշմուած հզօրութեան, վեհութեան և փառքի մէջ։

Տրուած է Պետերհոֆում օգոստոսի 6-ին, Քրիստոսի Ծննդեան հազար ինն հարիւր հինգերորդ, իսկ Մեր թագաւորութեան տասն և մէկերորդ տարին։

Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրուած է՝ ՆԻԿՈԼԱՅ։

ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Թիֆլիս, ամենայն Հայոց Կաթուղիկոսին։

Անկեղծ շնորհակալութիւն ձերդ Վեհափառութեան արտայայտած զգացմունքների համար։ Աստուած իմաստնացնի հայ հօտը արդարացնելու իմ նրան ցոյց տուած վստահութիւնը։ ՆԻԿՕԼԱՅ։

ՓՈԽԱՐՔԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆ-ՀԵՌԱԳԻՐԸ

Թիֆլիս.

Նորին սրբութեան Ամենայն Հայոց Կաթուղիկոսին։

Արտայայտելով Ձերդ սրբութեան իմ խորին երախտագիտութիւնը Ձեր բարի ցանկութիւնների առիթով ինձ և իմ ընտանեացս, վստահանում եմ յայտնել, որ Կովկասի հայերը կը կարողանան իրանց հաւատարիմ հպատակութեամբ ապացուցանել Թագաւոր Կայսրին, թէ որքան շնորհապարտ են Նորին Մեծութեան իրանց ցոյց տուած Արքայական շնորհաց համար։ Ցանձնում եմ ինձ ձեր սուրբ աղօթքին։

Կոմս Վորոնցով-Դաշկով

Վեհափառ Կաթուղիկոսի կոմից ուղղած Հեռագիրը

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ.

Քո թագաւորութեան հասած մեծ փորձութեան տարում, որը վշտով է լցրել սիրտդ, Դու արքայական գթա-

ռատութեամբդ յիշեցիր Քեզ հաւատարիմ հայ ժողովրդին և վստահութեան հետ միասին վերադարձրիր նրան լուսաւորութիւն տարածելու գործունէութեան ընդարձակ միջոցներ։ Մեծ է ամբողջ հօտիս երախտագիտական ուրախութիւնը ինչպէս այստեղ, այնպէս էլ աշխարհի ուրիշ մասերում։ Խորին երախտագիտութեան և հիացման զգացմամբ է լցւում և Քո հռանդուն աղօթարարի սիրտը, որ ապրել կարողացայ մինչև ունեցածս անդրդուելի հաւատոյ իրագործումը Քո արդարադատութեան և մարդասէր իմաստութեան մասին։ Այսօր հէնց առաջին կիւրակէ օրը Քո կամքն յայտարարելուց յետոյ, Վանաց Մայր եկեղեցում տեղական ամբողջ հոգևորականութեան մասնակցութեամբ ես ամբողջ հօտիս հետ աղօթեցի, Տէր Թագաւոր, Քո և կայսերական Ընտանիքի առողջութեան և երկարակեցութեան համար։

Ջերմ էր մեր աղօթքը։ Թող Ամենակալը առաքի սփոփանք և ուրախութիւն՝ Մեծ սրտիդ, վերականգնելով արտաքին հաստատուն խաղաղութիւնը և ներքին անդորրութիւնը Քո ամբողջ ժողովրդի երջանկութեան համար։

ՄԿՐՏԻՉ Ա. Կաթուղիկոս ամենայն Հայոց.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՑ ԿՈՄՍ ՎՕՐՕՆՑՕՎ-ԴԱՇԿՕՎԻՆ

«Կիսլովոդսկ, Նորին Մեծութեան Փոխարքայ կոմս ՎՕրՕնցով-Դաշկովին.

Վերառաքելով իմ հօտիս հետ միասին ջերմ աղօթքներ Մեծ Թագաւոր Կայսրի բարեկեցութեան համար, հայ եկեղեցուն և հայկական ազգին ցոյց տուած շնորհի մասին, ես յայտնում եմ Ձերդ Պայծառափայլութեան խորին երախտագիտութիւն Ձեր արդար միջնորդութեան համար. օրհնում եմ Ձեզ և Ձեր ընտանիքը, ցանկանալով Ձեզ ոյժ՝ իրագործելու Ձեր խնամքին յանձնած երկրի համար մշակած բարի ծրագիրները։

ՄԿՐՏԻՉ Ա. Կաթուղիկոս ամենայն Հայոց.

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Կիսլովոդսկ, Նորին Պայծառափայլութիւն Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին Նորին Մեծութեան Փոխարքային Կովկասում։

Այսօր Վանքի Մայր եկեղեցում Թիֆլիսի հայոց եկեղեցիների ամբողջ հոգևորականութեան պաշտօնակցութեամբ՝ սուրբ պատարագից յետոյ Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը հազարաւոր ամբողջ հօտի հետ ջերմ աղօթքներ առաքեց Ամենաբարձրեալին Թագաւոր Կայսրի և Օգոստափառ ընտանիքի առողջութեան և արիշատութեան համար, որ ամենաողորմածաբար հրամայել է հայոց եկեղեցուն և ազգին լուսաւորիչ ընդարձակ ինքնագործունէութեան միջոցներ տալ և հայոց եկեղեցուն յետ դարձնել եկեղեցապատկան գոյքերը ազատօրէն տնօրինելու դարերով սրբագործուած իրաւունքը։ Հայ հասարակութիւնը, որ խորին երախտիքի զգացմունքով է համակուած դէպի Ձեր Պայծառափայլութիւնը՝ Բարձրագոյն կամքի այդ սրդարամիտ ակտին միջնորդ լինելու համար, ջերմապէս աղօթում է Ամենակարող Աստուծուն, որ երկար կեանք տայ Ձեզ և Նորին Պայծառափայլութեան կոմսուհի Ելիսավետա Անդրէեվնային, որ այնչափ սրտանց ուրախակից հանդիսացաւ հայ ժողովրդի այս մեծ ուրախութեանը,—հայ ազգը, որ իսկապէս դրոշմեց Ձեր թանկագին անունները իր երախտագէտ սրտում։

Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից տեղական եկեղեցիների երէցփոխներ՝ Արշակ Բաբեան, Աւետիս Արասխանեան, Ստեփան Մնացականեան, Բարսեղ Աւանեան, Առաքել Աւագեան, Մկրտիչ Դասպարեան, Ալէքսանդր Քալանթարեան, Առաքել Վարդապետեան։

ԱԴԱՆԱՑԻՑ

Մկրտիչ Կաթուղիկոսին Ամենայն Հայոց

Եկեղեցական կալուածներ վերադարձնելու և դպրոցներ վերաբանալու լուրը անվերջ ուրախութիւն պատճառեց. աղօթում ենք Նորին Կայսերական Մեծութեան կենաց և բարեբաղդութեան և Զերդ Վեհափառութեան համար։

Սահակ Կաթուղիկոս Կիլիկիոյ.

ԵՐՈՒՍԱՂԷՄԻՑ

Շնորհակալութիւն ենք յայտնում Զերդ Սրբութեան մեզ հեռագրով իմացնելու համար Կայսերական նոր ուկազի մասին։ Մենք երբէք չենք դադարել յուսալուց, հաւատալով Նորին Մեծութեան Կայսեր մարդասիրութեան։ Մեր աղօթքներով միանում ենք Ձեր ուրախութեանց։

Յարութիւն Պատրիարք.

ԲԵՐԱՑԻՑ (Պոլիս).

Կայսերական ամենաողորմած ուկազի հրատարակութիւնը կալուածներ վերադարձնելու և դպրոցներ վերաբանալու մասին անհուն ուրախութիւն պատճառեց մեզ. շնորհաւորում ենք Զերդ Սրբութեան և արտասուաթոր աչք օրհնութիւն կը հայցենք։

Մաղաքիա պատրիարք.

Սուրպիոյ Առաջնորդից.

Հանդերձ ժողովրդաբ անհուն խնդակցութիւն կը յայտնենք Վեհափառութեանդ կալուածներ վերադարձնելու համար։

Իրուջեան եպիսկոպոս

ԱՄԵՐԻԿԱՑԻՑ (Մորէստէր Մասից).

Ընդունեցէք մեր սրտի և հոգւոյ անսահման ուրախակցութիւնը։ Աղօթում ենք Աբարչին, որ գիտէ չարչարել և միևնոյն ժամանակ մխիթարել մեզ։

Արքեպիսկոպոս Սարաջեան.

ՓԱՐԻԶԻՑ

Սրտագին խնդակցութիւններս կը յայտնենք Վեհափառ Սրբութեանդ ընդունած սիրոփանաց համար։

Խոնարհ ուղիղ հոգեւոր հովիւ
եւ հոգաբարձուք հայոց Փարիզու.

ՍԻԼԻՍՏՐԻԱՑԻՑ.

Սիլիստրիայի հայերս անհունապէս ուրախացանք ստանալով Ռուսիոյ Վեհափառ Ցարի կայսերական ուկազի հրատարակման լուրը հայապատկան կալուածներու և վարժարաններու բացման մասին, որոնց համար այսօր կատարուեցաւ գոհաբանական մաղթանք, լիաբերան մաղթելով, որ Մեծազօր Աստուած պարգևէ Ձեր սուրբ Օծութեան երկար և ուրախ կեանք ի փառս Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ, հայցելով Հայրապետական օրհնութիւն, մնամք Ձեր սուրբ Օծութեան հարազատ զաւակներ։

Ի դիմաց թաղական խորհրդի
Նախագահ Հիրիլեան, հաջի
Արդայեան Վահան Աբեղադիր.

ԹԱՒՐԻԶԻՑ

Նշանաւոր է այսօր. իբրև ժողովրդական մեծ տօն կը տօնենք ամեն տարի։

Երիտասարդութիւն.

Բացի վերև առաջ բերած արտասահմանեան հեռագիրներից՝ ստացուած են Ռուսաստանի բոլոր ծայրերից հարիւրաւոր հեռագիրներ այն մեծ ուրախութեան և միխիթարութեան մասին, որ պատճառեց Կայսերական Ամենաողորմած ուկազը հայ ժողովրդին։ Ամենայն տեղ կատարուած են մաղթանքներ Նորին Կայսերական Մեծութեան և ամբողջ արքայական տան ապահով անդորրութեան և երկարակեցութեան համար։

Օգոստոսի 20-ին Թիֆլիզում Փոխարքայի խորհրդի նիստն էր նշանակուած կալուածներ և դպրոցներ վերադարձնելու վերաբերեալ ձեւականութիւնները որոշելու մասին և 20-ին Սինոդը Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի համաձայն որոշեց ստանալ Երևանի պետական բանկում եղած 16,000 ռուբլի գումարը։

ՇՐՋԱԲԵՐԱԿՆ ԿՈՆԴԱԿ ԵԿԵՂԵՑԱԿՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անահասանելի կամքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն հայոց ծայրագոյն պատրիարք նամազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի:

Սիրելեաց Մերոց և օրհնեալ հարազատից Մայր Աթոռոյս համայնից հայազանց՝ Շնորհազարդ Եղբօր Մերում Դիտապետի Տանն Կիլիկիոյ՝ Տ. Սահակ Ս. կաթուղիկոսի՝ Ամենապատիւ սրբազան պատրիարքաց Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ՝ Տ. Յարութիւն և Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսաց՝ գերաշնորհեպիսկոպոսաց՝ հոգեշնորհ փոխանորդաց՝ բարեշնորհ վանահարց և վարդապետաց՝ արժանապատիւ աւագ երիցանց՝ սրբանուէր քահանայից՝ մաքրակենցաղ կուսանաց՝ շնորհունակ ջարկաւագաց՝ դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ՝ պերճաշուք իշխանաւորաց՝ գերազնիւ աստիճանաւորաց՝ տոհմային ազնուականաց՝ պատուելի վաճառականաց՝ մեծապատիւ հոգաբարձուաց՝ յարգելի երեսփոխանաց՝ մեծարելի ուսուցչաց և ուսուցչուհեաց՝ ժրաջան երիտասարդաց՝ վաստակաւէր արհեստաւորաց՝ քրանաջան մշակաց և երկրագործաց՝ պարկեշտասուն տիկնանց և օրիորդաց և ամենայն

չափու հասակի ի Քրիստոս հաւատացելոց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, որք ծնեալ և մնեալ կայք ի ծոց կաթուղիկէ Եկեղեցւոյ Հայաստանեայց, ողջոյն և օրհնութիւն յԱթոռակալէն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ բազմասցի ի ձեզ։ Ողորմութիւն աստուածային, խաղաղութիւն փրկչին և շնորհ Ս. Հոգւոյն եղիցի ի վերայ համայնիցդ։ Ամէն։

Ողջոյն Քեզ, եկեղեցի Հայոց, նորոգեալ և զարդարեալ, քանզի ի Քեզ ծագեաց վերստին շողն աստուածային և վերացաւ ի Քէն քօղն ագոյն։ Ողջոյն Քեզ, տառապեալ ժողովուրդ Հայոց, որ տօնես այսօր զտօն նաւակատեաց և ցնծութեան Տօրն Քո Եկեղեցւոյ՝ ի շնորհս Տեծի Հովանաւորին Քո և Ամենաբարեպաշտ Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի։ Ողորմութիւն աստուածային տարածեցաւ այսօր ի վերայ Քո, յեւ տառապանաց վերջին ամաց փառազարդեցաւ եկեղեցին և մխիթարեցար դու լիապէս, ժողովուրդ Հայոց։ Եւ ես նորոգեալ ծերութեամբ իմով՝ խնդակից փառաց իմոյ եկեղեցւոյ և ուրախակից հարազատիցդ իմոց՝ սիրելեաց, ողջունեմ քեզ վասն մեծի շնորհացն կայսերականի և շնորհաւորեմ զտօն ցնծութեան Քո։ Օրհնեալ է Աստուած, որ խնայեաց յեկեղեցի Մխածնի Որդւոյ իւրոյ և ի սգաւոր ժողովուրդ նորա. ցնծացէք ընդ սաղմոսերգուին և ասացէք. «Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն, ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ»։ Այլ և հանապազոր-

զեմ զիմ նուագն առ Աստուած իմ՝ «գոհացայց զքէն, Տէր, բոլորով սրտիւ իմով, պատմեցից զամենայն սքանչելիս քո, ուրախ եղէց և ցնծացայց ի քեզ, սաղմոս ասացից անուան քում բարձրեալ»:

Տառապանք քո և նեղութիւնք, զոր կրեցեր յանձին առ ի պաշտպանութիւն սեփական իրաւանց եկեղեցւոյ քո սրբոյ, ընդունելի եղեն յաչս Ամենակալ Տեառն զօրութեանց, որ շարժեաց զսիրտ և զգութ արդարադատ թագաւորին Մերոյ, զի սիրտ թագաւորաց ի ձեռս Աստուծոյ, և Ողորմած Կայսրն Մեր վերադարձոյց եկեղեցւոյ մերում զգարաւոր արտօնութիւնս նորա և շնորհեաց նմա զհոգ դաստիարկութեան զաւակաց քոց: Արդ՝ որ արժանացար վերնոյին մեծի վստահութեան կայսերականի և շնորհաց՝ յետ բաւական նեղասակրութեանց և տօնես այսօր զտօն նաւակատեաց եկեղեցւոյ, յուշ լիցին քեզ աւուրք տառապանաց քոց, յուշ լիցին քեզ աւուրք սգոյ քո, և դու ուխտեա առաջի Աստուծոյ սիրել յաւէտ և պաշտել զհարազատ Այրն քո զսուրբ եկեղեցին Հայաստանեայց. ուխտեա սիրել զեղբայրն քո, զհարազատն և զհամազգին. կալ մնալ սիրով խաղաղութեամբ և համերաշխութեամբ ընդ միմեանս:

Իսկ ես՝ ի մուտս արևու իմոյ՝ աղօթեմ և աղաչեմ զԱ՛ծին Բանն Աստուած, զի հաստատուն և յարատև պահեսցէ զՏաճարն իւր սուրբ զԱ՛այր Աթոռն Հայաստանեայց, աղօ-

թեմ զի շնորհեսցէ Տէր կեանս երկարս և անփորձս Մեծի Թագաւորին մերում և Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ-ի, որ բանիւ հրամանի իւրոյ երարձ զքօղն ոգոյ և տառապանաց եկեղեցւոյս և ժողովրդեանս: Զեռն Տեառն ընկալցի զնա և բազուկ Ամենակալին զօրացուսցէ զնա: Դու ևս մաղթեա՛ ի բոլոր սրտէ, զի Տէր զօրութեանց լիցի ընդ նմա ի տուէ և ի գիշերի, պահելով զնորին Մեծութիւն առողջ և անփորձ հանդերձ ժառանգաւք և արքայազն հարազատաւք: Եւ օրհնեսցէ Տէր զՁեզ զամենեսեանսդ երկնային օրհնութեամբ ի տրիտուր ջանից Ձերոց և վաստակոց, զոր վաստակեցայք և աշխատ եղէք բանիւ և գրով, աղերսանաւք և աղաչանաւք շարժել զսիրտ Մեծի Միապետին խնայել յեկեղեցի և ի մանկունս նորա: Տացէ Տէր ամենեցունցդ վարձս ըստ վաստակոց Ձերոց, աճեցուցանելով և բազմացուցանելով զՁեզ և զզաւակունս Ձեր և պահեսցէ զՁեզ աննկուն հոգւով, սուրբ սրտիւ, հաստատուն հաւատով, միաբան սիրով և համերաշխ գործունէութեամբ ընդ հովանեաւ մերն լուսոյ Ս. Էջմիածնի ի փառս Աստուածութեան իւրոյ: Ամէն:

Ի վերայ իսկականին ստորագրել է

Գրիգոր Կարապետեան ամենայն Հայոց.

Տուաւ կոնդակս շնորհաւորական յամի շնորհաց փրկչին 1905. յեօթներորդում աւուր ամսեանն օգոստոսի և ըստ Տումարիս մերում ՌՃԾԴ և Հայրապետութեան մերոյ ԺԲ. ամի։

Թ. 664.

Ի ք. Տիխիս.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն հայ ժողովրդեան Ատրպատականի, որով յորդորեցաւ խաղաղ և զգոյշ լինել ի տալոյ տեղի խռովութեան ընդ պարսիկս։ Թ. 489.

— Ցանուն Փոխանորդի վիճակին հայոց Աղէքսանդրապոլու, որով պատուիրեցաւ շարունակել զսաղմոսն կամաւոր տրոց ժողովրդեան վասն տուչութեան քաղուածոց յարձանագրական մատենից յօգուտ թեմական Դպրանոցին Երևանայ։ Թ. 492.

— Ցանուն Ցանձնաժողովոյ արկածելոց Բաքուայ, որով յանձնարարեցաւ ընդունել նուէրս նաև յօգուտ արկածելոց Նախիջևանի, գաւառի նորին և Շարուր-Դարալագեազ գաւառի։ Թ. 505.

— Ընդհանրական յանուն հայ ժողովրդեան Արցախոյ վասն հաստատութեան Տ. Աշոտ եպիսկոպոսի Առաջնորդ թեմին։ Թ. 510.

— Ցանուն վիճ. Կոնսիստ. հայոց Վրաստանի և Իմերէթի, որով արտօնեցաւ Տիգրանայ Ղազարեան մտանել ի նոր ամուսնութիւն։ Թ. 513.

— Ցանուն վանահօր Սևանայ վանուց Տ. Սարգիս եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել զզիչաղցի Արմենակն Աբգարեան ի սարկաւագ։ Թ. 514.

— Ցանուն Տ. Եղիշէ Ծ. վարդապետի Մուրադեան, որով կարգեցաւ տեսուչ տպարանի Մայր Աթոռոյ և օգնական նորին Տ. Խորէն վարդապետն Մուրադբէգեան. Թ. 525.

— Ցանուն Թեմական Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ տալ Բենիկ վարդապետի ի ծախս բժշկութեան 300 ր.։ Թ. 527.

— Ցանուն Տ. Եղնիկ ա. քահանայի Երզնկեան, որով հրամայեցաւ պսակել զտիկին Նադէժդայն Փիլիպոսեան ընդ կենակցին իւրոյ Եազօնի Շահազիզեան։ Թ. 530.

— Ցանուն վիճ. Կոնսիստորիայի Վրաստանի և Իմերէթի, որով արտօնեցաւ պսակ Տփխիսեցի Բախշոյի (Տիգրանայ) Ղազարեան յետ միամսեայ ապաշխարանաց։ Թ. 531.

— Ցանուն նորին, որով պատուիրեցաւ տալ մի հարիւր ռուբլի ի ծախս բժշկութեան Տ. Մխիթար վարդապետի։ Թ. 532.

— Ցանուն Տ. Եփրեմ վարդապետի, որով պատուիրեցաւ յետ այսու ևս յղել ի Դիւան զվարձս կալուածոց վանօրէիցն Վասպուրականի և թէ ի դէպս անհրաժեշտութեան կարէ զիջանել վարձակալաց երեսուն տոկոս միայն։ Թ. 536.

— Ցանուն Տ. Թեմական Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով չնորհեցան ապառիկ բաժանորդագինք «Արարատ» ամսագրի, որ ի վերայ քահանայից Սղնախի, պայմանաւ՝ զի յետ այսու վճարեսցեն։ Թ. 539.

— Ցանուն Տ. Ներսէս վարդապետի Թովմա-Աղայեան ի Բերլին, որով արտօնեցաւ՝ մկրտել զհրէուհի Էլզա Շարմաք ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ։ Թ. 555.

— Ցանուն Տ. Աւետիս քահանայի Շաղոյեան ի Գահիրէ, որով յայտնեցաւ զստացմանէ 30, 11, 13 անգլիական լիրայից ի նպաստ Մայր Աթոռոյ։ Թ. 557.

— Ցանուն առաջնորդ. տեղապահ Ցարութիւն քահանայի Յակոբեան, որով յայտնեցաւ զստացմանէ չորս հարիւր լիսուն և եօթն ռուբլեաց։ Թ. 558.

— Ցանուն Ամեն. պատրիարքի հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ ընդունել զԴարեգին Նշանեան ընդ կնոջ իւրում ի ծոց հայոց եկեղեցւոյ, բարձեալ համարելով զհայրապետական դատապարտութիւնն։ Թ. 561.

— Ցանուն Ամեն. պատրիարքին հայոց Թուրքիոյ, որով պատուիրեցաւ տալ ընթացս գործոց պսակալուծութեան Մ. Ց. Շնորհքի Կ. Պոլսեցւոյ։ Թ. 562.

— Ցանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ տալ ընդ փոյթ պատասխանի Նախարարութեան Ներքին Գործոց ըստ գործոց բացման թեմական Դպրանոցին Աստրախանի։ Թ. 570.

— Ցանուն Նորին, որով տուաւ հրահանգութիւն վասն ընդունելութեան կրօնափոխ հայոց և այլ քրիստոնէից ի ծոց հայ եկեղեցւոյ։ Թ. 571.

— Ցանուն վիճ. Կոնսիստորիային հայոց Երևանի, որով արտօնեցաւ տալ հրաման պսակի Կարապետի Անապատցեան Մահմուդչուղ գեղջ։ Թ. 592.

— Ցանուն Նորին, որով տուաւ իրաւունք վերստին ամուսնութեան Շաշլուի Խաչատրեան բնակչուհւոյ Տեղ գեղջ Տաթևու։ Թ. 597.

— Ցանուն Հոգ. Կառավարութեան հայոց Կարուց, որով լուծեցաւ պսակն Մարգարտի Մխիթարեան Նորատին գիւղացւոյ Մշոյ ընդ մահմեդականացեալ առն նորա Ցովհաննիսի Մելոյեան, տալով իրաւունս կնոջն վերստին ամուսնութեան։ Թ. 609.

— Ցանուն Նորընտիր հոգաբարձութեան շինութեան եկեղեցւոյն Կաղզուանի, որով հաստատեցաւ ի պաշտման իւրում։ Թ. 614.

— Յանուն Թեմական Վրաստանի և Իմերէթի, որով կարգեցաւ Տ. Կորիւն վարդապետն Փոխանորդ վիճակին Գանձակայ։ Թ. 617.

— Յանուն Տ. Կորիւն վարդապետի ի նոյն միտս։ Թ. 618.

— Յանուն վիճ. Կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, որով թոյլ տուաւ երկրորդ պսակ Օլինկայի Տ. Ղևոնդեան։ Թ. 622.

— Յանուն Տ. Նահապետ եպիսկոպոսի, Մեսրոպ և Յուսիկ վարդապետաց և այլոց, որով հրամայեցաւ կազմել նոր ծրագիր ուսումնարանական։ Թ. 623.

— Յանուն Տ. Կորիւն վարդապետի, որով պատուիրեցաւ նմա զամենայն գործս Դիւանի և զկնիքս յանձնել Տ. Յուսիկ վարդապետի։ Թ. 625.

— Յանուն Տ. Յուսիկ վարդապետի, որով կարգեցաւ Դիւանապետ Հայրապետական Դիւանի։ Թ. 626.

— Յանուն վիճ. Կոնսիստորիային հայոց Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ լուծանել զպսակ Տաճկաստանցի Յովհաննէսի Պողոսեանց և Սաթենկան Պապիկեան Պողոսեանց։ Թ. 642.

— Յանուն վիճ. Կոնսիստորիային հայոց Երևանի, որով նշանակեցաւ Լևոն վարդապետի Փսերեան 60 ռուբլի ռոճիկ յամիսն։ Թ. 649.

— Յանուն Թեմական հայոց Վրաստանի և Իմերէթի, որով Տ. Խորէն վարդապետն Մուրադբէգեան հաստատեցաւ ի պաշտաման փոխանորդի վիճակին հայոց Գօրեոյ։ Թ. 657.

— Յանուն Առաջնորդ. տեղապահի Թեմին հայոց Ատրպատականի, որով պատուիրեցաւ դադարեցուցանել ի քահանայագործութենէ անորոշ ժամանակաւ զՂևոնդ քահանայն Տ. Աւետիսեանց ի պատճառս անվայել արարմանցն։ Թ. 658.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով առաքեցաւ քննական գործ զարարմանց Գրիգոր ա. քահանայի Մատինեանց Տփխեաց և պատուիրեցաւ ի կատար ածել զեղբակացութիւն վիճ. Կոնսիստորիային հայոց Վրաստանի և Իմերէթի, յաւելլով՝ եթէ քահանայն այն զրկեալ է ի Հայրապետական պարգևաց։ Թ. 652.

— Յանուն Թեմական հայոց Վրաստանի և Իմերէթի, որով տուաւ տեղեկութիւն, եթէ քննական գործ զարարմանց Գրիգոր ա. քահանայի Մատինեանց առաքեցաւ ի Սինոդն Ս. Էջմիածնի։ Թ. 661.

— Ընդհանրական յանուն ազգիս հայոց առթիւ հրատարակման Բարձրագոյն հրովարտակի 1-ն օգոստոսի զվերադարձուցմանէ եկեղեցական կալուածոց և զբացմանէ եկեղեցական դպրոցաց հայոց։ Թ. 664.

— Յանուն Տ. Խորէն վարդապետի Մուրադբէգեան, որով կարգեցաւ ի պաշտօն Փոխանորդի վիճակին հայոց Գօրւոյ։ Թ. 665.

— Յանուն Գեր. Տ. Ղևոնդ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռնադրել ի սարկաւագ զմիաբան Մայր Աթոռոյս զշուշեցի Նիկողայոսն Յովհաննիսեան։ Թ. 695.

— Յանուն Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան, տեսչի Թեմական Դպրանոցին հայոց Երևանի, որով կարգեցաւ տեսուչ Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ։ Թ. 698.

— Յանուն Հոգաբարձութեան Թեմական Դպրանոցին Երևանայ, որով տուաւ տեղեկութիւն զիմաստից յիշեալ կոնդակի և պատուիրեցաւ առնել ընտրութիւն նոր տեսչի վասն Դպրանոցին։ Թ. 699.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, որով պատուիրեցաւ կարգադրել ստանալ զվոխադրեալ յանուն Սինոդի ի Դեպարտամենէ օտար դաւանութեանց զ11708 ր. 75 կ. և յանուն վիճ. Կոնսիստորիային Երևանի զ1305 ր. 76 կ. գումարս յարքունի դրամատանէ Երևանեան բաժնի։ Թ. 700.

— Ցանուն տեսչի Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ Տ. Գարեգին վարդապետի, ընդ որում յղեցան խնդրագիրք նորեկ խնդրատու աշակերտաց և պատուիրեցաւ սկսանել զհարցաքննութիւնն ընդունելութեան աշակերտաց։ Թ. 703.

— Ցանուն Տ. Եղիշէ Ծ. վարդապետի Մուրադեան, որով կարգեցաւ «Տպարանական վարչութիւն» ընդ նախագահութեամբ նորին և անդամովք Խահակ վարդապետի Տ. Միքայէլեան և Իսրայէլ սարկաւագի Յովհաննիսեան։ Թ. 704.

— Ցանուն Տ. Բարգէն վարդապետի, որով հրամայեցաւ զամենայն գործս և զհաշիւս տպարանի Մայր Աթոռոյ յանձել Նորոդ կարգեալ Տպարանական Վարչութեան։ Թ. 705.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն բժիշկ Յովհաննիսի Լօրիս-Մելիքեան ի Փարիզ։ Թ. 538.

— Ցանուն քերց Միանսարեանց ի Մոսկուա Եղիսաբէթի և Մարիամու վասն նուիրաբերութեանց նոցա՝ գումարաւ երեք հազար ռուբլեաց վանաց Ս. Էջմիածնի և Հոգ. Ճեմարանի նորին։ Թ. 581.

— Ցանուն Միքայէլի Վարդազարեանց Թելաւեցւոյ վասն վերաշինելոյ զղանգակատունս Ս. Սարգիս վանացն Տփխեաց։ Թ. 645.

— Ցանուն Բարսեղ Էֆ-ի Իսթանպօլուեան, ընդհանուր գանձապետի գանձանակագրամոց Մայր Տաճարի Ս. Էջմիածնի, վասն ստացման տասն օսմանեան լիրայից։ Թ. 693.

— Ցանուն Տիկին Շուշանայ և Մկրտչի Թորոսեանց, վասն նուիրաբերութեան միոյ շուրջառի 200 ռուբլի գումարին ի յիշատակ հանգուցեալ Պօղոս որդւոյ նոցա։ Թ. 694.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ—վկայական յանուն Տ. Աշոտ վարդապետի Շախեան վասն ձեռնադրութեան Նորին յաստիճան եպիսկոպոսութեան։ Թ. 508.

— Ցանուն Նորին, որով շնորհեցաւ պանակէ եպիսկոպոսական։ Թ. 509.

— Ցանուն Տ. Նահապետ վարդապետի վասն ձեռնադրութեան Նորին յաստիճան եպիսկոպոսութեան։ Թ. 511.

— Ցանուն Նորին, որով շնորհեցաւ պանակէ եպիսկոպոսական։ Թ. 512.

— Քահանայական լանջախաչի յանուն Թովմաս քահանայի Թովմա-Աղայեան Արդաբիլ քաղաքի Առաքելական։ Թ 563.

— Քահանայական լանջախաչի յանուն Սրապիոն քահանայի Սամուէլեան Խարկով քաղաքի։ Թ. 578.

— Քահանայական լանջախաչի յանուն Խորէն քահանայի Մնացականեան աղօթատան հայոց Կիևի։ Թ. 588.

— Ցանուն Թեմական հայոց Վրաստանի և Իմերէթի Տ. Գարեգին եպիսկոպոսի, որով շնորհեցաւ նմա պատիւ Արքեպիսկոպոսութեան։ Թ. 660,

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յուլիսի 27-ին Սինոդը լուծեց Յովհաննէս Տէր Եսայեանի և Արուսեակ Մայիլեանի պսակը ամուսնական անհաւատարմութեան պատճառաւ և իրաւունք տուաւ Արուսեակ Մայիլեանին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Քաղաքիկ գիւղի բնակիչ Դերասիմ (նոյն և Կարապետ) Շիրազեանցին յիշեալ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար։

Յուլիսի 29-ին Սինոդը լուծեց Բօրչալուի գաւառի Շնող գիւղի բնակիչ Շաքար և Սօնա Ուլուխանեանների պսակը կնոջ անհաւատարմութեան պատճառաւ և թոյլ տուաւ Շաքարին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը որոշեց ընդունել հոգևորականութեան մէջ որպէս միաբան Մայր Աթոռոյ Նիկողայոս Յովհաննիսեանցին, իսկ ձեռնադրութեան համար ամենախոնարհաբար դիմել Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց, խնդրելով հրաման տալ Վանական կառավարութեան, որ նորա անունը մտցնի Մայր Աթոռիս միաբանութեան ցանկը։

Օգոստոսի 1-ին Սինոդը որոշեց յետ ուղարկել Զալթրեան գաւառամասի Եկատերինէ աւանի եկեղեցու յատակագիծը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայ Կոնսիստորիային և յայտնել, որ Բարձրագոյն հրամանաւ թոյլատրուած է յիշեալ եկեղեցու կառուցումը։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ներքին Ադեամանի ծխատէր Յովհաննէս քահանայ Տէր Ոսկանեանցին նորէն քահանայագործել, բաւ համարելով նրա կրած ապաշխարանքը, որի մասին որոշեց տեղեկագրել Երևանի Կոնսիստորիային։

Օգոստոսի 3-ին Սինոդը որոշեց յետ ուղարկել Գեորգ-չայ աւանի Ժողովրդական խնդիրը Շամախու Կոնսիստորիային և յայտնել, որ յիշեալ աւանի աղօթատան շինութեան դէմ արգելք չկայ. բայց միևնոյն ժամանակ պատուիրել, որ աղօթատների շինութեան վերաբերեալ օրինական պահանջներն համաձայն Նորին Կայսերական Մեծութեան սոյն տարուայ ապրիլի 17-ի Հրովարտակի՝ անթերի կատարեն։

Օգոստոսի 5-ին Սինոդը որոշեց ուղարկել Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային Ախալքալաքի գաւառի Բուռնաշէթ գիւղի եկեղեցու յատակագիծը և յայտնել, որ Բարձրագոյն հրամանով յիշեալ եկեղեցու շինութիւնն արդէն թոյլատրուած է։

Նոյն թուին Սինոդը լուծեց Տփխիսի բնակչուհի Նունէ Ցարութիւնեանի և Աղէքսանդր Ցարութիւնեանի պսակը՝ վերջինս անյայտ բացակայելու պատճառով և իրաւունք տուաւ Նունէին նորէն ամուսնանալու, որի մասին և յայտնեց Վրաստանի և Իմերէթի վիճ. Կոնսիստորիային։

Նոյն թուին և նոյն պատճառով Սինոդը լուծեց Տփխիսի բնակչուհի Մարիամ և Լևոն Կարապետեանների պսակը և իրաւունք տուաւ Մարիամին նորէն ամուսնանալու, որի մասին և հրամանագրեց Վրաստանի և Իմերէթի վիճ. Կոնսիստորիային։

Օգոստոսի 10-ին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային լուծուած համարել Աղէքսանդրապոլի գաւառի Բողդոզան գիւղի բնակիչ Գէորգ Ցարութիւնեանի և Մանուշակ Ցարութիւնեանի պսակը և նախապէս ենթարկելով նրանց ապօրինի կենակցութեան պատճառաւ եռամսեայ ապաշխարանքի, երկուսին էլ իրաւունք տալ ամուսնանալու։

Օգոստոսի 19-ին Սինոդը ի նկատի ունենալով, որ Բաքու քաղաքի եկեղեցու շինութեան գործը սկսուած

է 1898 թուից, որից յետոյ ժողովուրդը սպասում է հոգևոր իշխանութեան տնօրինութեան. երկրորդ որ եկեղեցու շինութեան տեղը Բարձրագոյն բարեհաճութեամբ արդէն յատկացուած է և դրամագլուխն էլ պատրաստ և երրորդ, որ ապրիլի 17-ի Բարձրագոյն հրամանի համաձայն եկեղեցու շինութեան համար հարկաւոր է մի միայն յատակագծի հաստատութիւնը, որոշեց խնդրել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի Դիւանից կարգադրութիւն, որ եկեղեցու յատակագիծը Վրաստանի Էկզարխի դիւանից ուղարկուի Բաքուի Նահանգական Վարչութեան Շինարարական Բաժնին ի հաստատութիւն, որպէս զի հնար լինի փութացնել եկեղեցու շինութեան գործը։

Օգոստոսի 17-ին Սինոդը լուծեց Դանձակի նահանգի Ալան գիւղի բնակիչ Վասիլ Պետրոսեանի և Աննա Պետրոսեանի ամուսնութիւնը վերջնիս անհաւատարմութեան պատճառաւ և իրաւունք տուաւ միայն Վասիլ Պետրոսեանին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց խիստ յանդիմանութիւն կարդալ Աղէքսանդրապոլի հոգևոր կառավարութեան իւր իշխանութեան՝ Երևանի Կոնսիստորիայի բաղմադիմի հրամաններ չը կատարելու և նրանց չը պատասխանելու համար և պատուիրել կառավարութեան, որ երկու շաբաթուայ ընթացքում անպատճառ ներկայացնի Կոնսիստորիային պահանջած դրամները։ Սոյն վճռի համար հրաման տալ Կոնսիստորիային՝ պատուիրելով, որ կատարման մասին իւր ժամանակին յայտնի Սինոդին։

Նոյն թուին Սինոդը որոշեց իսպառ դադարեցնել Նոր Բայազիդի գաւառի Աղվարա գիւղի ծխատէր Ղազար քահանայ Տէր Գաբրիէլեանցին, պահանջել նրանից ամառահաս 6 ռ. 10 կոպէկը և ստորագրութիւն առնել, որ այսուհետև չը պարապի հմայութեամբ և կախարդութեամբ, որ հակառակ դէպքում բոլորովին զրկուելու է քահանա-

յական կոչումից։ Վճռիս կատարման համար հրաման տալ վիճակային Կոնսիստորիային, պատուիրելով կարգադրութիւն անել քահանայի ընտանեաց սննդի և նրա ծխականներին հովուելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց. աչքի առաջ ունենալով Ամարասի վանքի վանահայր Նիկողայոս վարդապետի և Վահան վարդապետ Գէորգեանի դայթակղեցուցիչ վարքը, նրանցից առաջինին արձակել վանահայրութիւնից, թողնելով նոյն վանքում որպէս միաբան. խնդրել Վեհափառ կաթողիկոսից, որ Ամարասի վանքի վանահայր կարգի ընդունակ և արժանաւոր մինին և երրորդ պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային, որ շուտով՝ երկու շաբաթուայ ընթացքում ուղարկի Վահան վարդապետ Գէորգեանին Սևանայ վանքը, իսկ եթէ նա դժկամակի կատարել սոյն հրամանը, այն դէպքում ուղարկել նրան ոստիկանութեան ձեռքով և հետևանքի մասին յայտնել Սինոդին. չորրորդ պատուիրել Սևանայ վանուց վանահօր, որ Վահան վարդապետին վանք հասնելուց յետոյ՝ զրկի փիլոնից և վեղարից և թողնի նրան վանքում որպէս ապաշխարող անորոշ ժամանակով։

Նոյն թուին Սինոդը լուծեց Զանգեզուրի գաւառի Ալիղուլի գիւղի բնակիչ Աւանէս Բաղդասարեանի և Դանայի Ղազարեանի ամուսնութիւնը վերջնիս անհաւատարմութեան պատճառաւ և իրաւունք տուաւ Աւանէսին նորէն ամուսնանալու։

Կովկասի փոխարքայութեան սահմաններում Հայ-Լուսաւորչական եկեղեցու գոյից կառավարութեան ժամանակաւոր կանոններ:

Ա. Եկեղեցական գոյքերի վերաբերեալ կանոններ.

1. Հայ-Լուսաւորչական եկեղեցիների գոյից կառավարութիւնը յանձնւում է ծխական հոգաբարձութեանց, որոնք բաղկացած պէտք է լինին եկեղեցու երեցփոխանից և 2—4 անդամից հաւասար իրաւունքներով, որոնց ընտրում են ծխականներն իրենց միջից եռամեայ ժամանակով:

2. Եկեղեցական հոգաբարձուների ընտրութիւնը կատարւում է ծխականների ընդհանուր ժողովում ներկայ եղողների ձայնից առաւելութեամբ և հաստատւում թեմական առաջնորդից:

3. Ծխականների ընդհանուր ժողովում ձայնի իրաւունք ունին այն բոլոր այր մարդիկ, որոնք առնուազն երկու տարի նոյն եկեղեցու ծուխ են, 25 տարեկան են և օրինական իրաւունք ունին հասարակական պարտականութիւններ կատարելու:

4. Ծխական հոգաբարձուների պարտականութիւնն է օրինաւոր թոյլտուութեամբ բանալու ծխի համար դպրոցներ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5. Եթէ եկեղեցական եկամուտները բաւական չլինին ծխի բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու, հոգաբարձութիւնը կազմում է ծխականներից միանուագ կամ պարբերաբար դրամով կամ բնական որոշ տուրք ժողովելու նախագիծ: Այդ նախագիծն առաջարկւում է ծխական ընդհանուր ժողովի քննութեան և օրինաւոր կերպով ընդունելուց ու համախօսական կազմելուց յետոյ՝ պարտաւոր է դառնում համաձայնութիւն տուողների համար:

6. Հոգաբարձութիւնը կազմում է իւրաքանչիւր տարուայ ելևմտից նախահաշիւ, որը առաջարկւում ծխական ժողովի հաւանութեան և հաստատւում է թեմական առաջնորդից։

7. Ծխական հոգաբարձուները պարտաւոր են հաշիւ ներկայացնել թեմական առաջնորդին և թէ ծխական ընդհանուր ժողովին, որոնք այդ հաշիւների վերստուգութեան համար ընտրում են վերաստուգող յանձնաժողով։

Ա. Հոգևոր դպրանոցներին պատկանող գոյից կառավարութեան մասին։

1. Հոգևոր դպրանոցների գոյքը (համաձայն 1896 թուին հրատարակուած օրինաց XI հատորի I մասի 1206 յօդուածի) կառավարում են 12 հոգուց բաղկացած հոգաբարձական առանձին խորհուրդներ, որոնց նախագահում է առաջնորդը։

2. Հոգաբարձական խորհրդի անդամների ընտրութեան համար թեմական առաջնորդի, կամ նրա կողմից յատկապէս նշանակուած անձի նախագահութեամբ հրաւիրւում է թեմի ընտրողների ժողով՝ դպրանոց գտնուած քաղաքի իւրաքանչիւր եկեղեցուց ծխական ընդհանուր ժողովի ձայնից մեծամասնութեամբ ընտրուած երկու հոգի, թեմի միւս քաղաքների եկեղեցիներից իւրաքանչիւրի կողմից նոյն ձևով ընտրուած մի հոգի, գիւղական շրջաններից իւրաքանչիւր գործակալութիւնից մի մի հոգի, որոնք պէտք է ընտրուեն գիւղական եկեղեցիների ներկայացուցիչների կողմից։ Հոգաբարձութեան անդամներն ընտրւում են 4 տարի ժամանակով։

3. Հոգաբարձական խորհրդի անդամներն իրենց պաշտօնում հաստատւում են Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կողմից։

4. Հոգաբարձական կազմի կէսը երկու տարուց յե-

տոյ թողնում է իւր պաշտօնը՝ առաջին խորհրդի կէսը վիճակով, իսկ այնուհետև հերթով։

5. Թեմի ընտրողների ժողովը հոգաբարձական ժողովի իրաւասութեան շրջանի համար ընտրում է վերաստուգող յանձնաժողով, որի եզրակացութիւնը հաղորդւում է Ս. Էջմիածնի Սինօդին։

6. Կանխապէս կազմած նախահաշիւը, ինչպէս և հոգաբարձական ժողովի հաշիւը հաստատւում է Ս. Էջմիածնի Սինօդի կողմից։

Գ. Վանքապատկան կալուածների մասին։

1. Վանքապատկան գոյից կառավարութիւնը յանձնւում է վանքական իշխանութեան։

2. Վանքապատկան գոյքի կանոնաւոր կառավարութեան վրայ հսկելու համար թեմական առաջնորդները կարող են հրաւիրել վանական վարչութեանց օժանդակ և աշխարհական անձինք։

Իսկականը ստորագրած է.

Սեաsu Սեկրետար Բaroն Նոլդէ.

Ուղիղ է Ն. Կ. Մ. Կովկասի. փոխարքայի դիւանատան փոխ դիւանապետի փոխարէն Ն. Նիկոլսկի.

Համիմատեց դիւանատան գործաւար Վ. Վալկեւիչ։

1874 թուի յունվարի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոններ, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի կողմից

---

1) *Համաձայն օրէնքների ժողովածուի* XI *հատորի,* I *մասի,* 975-*դ յօդուածի, հայ-լուսաւորչական հոգևորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմնել և կառավարել եկեղեցական դպրոցներ, նոյնպէս և հոգալ մտցնելու դասատուութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանել բարի վարք ուսուցանողների և աշակերտների մէջ։*

2) *Ժողովրդական դպրոցների տեսուչների* (инспекторъ) *վրայ, հայ հոգևորականութեան հիմնելիք և վարելիք ընդհանուր կրթական եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերմամբ, պարտաւորութիւն է դրուում, համաձայն* 1873 *թուի նոյեմբերի* 22-*ին Բարձրագոյն հաստատուած Պետական Խորհրդի կարծիքին՝ հսկողութիւն ունենալ,* 1) *որ բոլոր դպրոցներում աւանդուի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ աւանդում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդեն նաև ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն՝ ռուսերէն լեզուով.*

2) *Որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուս սահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ։ Իսկ միջամտել տնտեսական մասի մէջ կամ նրան կօնտրոլի ենթարկել՝ տեսուչներին իրաւունք չէ տրուում։*

3) *Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունին հոգևորականներ պատրաստել՝ չեն ենթարկուում ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և գտնուում են հոգևոր իշխանութեան բացառական վարչութեան տակ։ Այս դպրոցների ուսման դասընթացի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն։* (*յօդ.* 1004)

ԿՐՕՆԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐՈՒՄ „ՀՐԱՇԱԼԻ ՆԱԻԱՍԱՐԴ“ ՎԵՐՆԱԳՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ ԼՈՅՍ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ:

ՄԵՌԵԱԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Բառութեան սերմերից).

Եգիպտոսի հռչակաւոր Ռամզէս թագաւորի պալատում տիրում էր մեռելային լռութիւն։ Պալատականները շարժւում էին ստուերի նման անլսելի կերպով։ Թագաւորը ծանր հիւանդ էր։ Նրա ժամերը համարուած էին։ Մահուան օրը նա կանչեց իւր Մինեֆդա թագաժառանգին և ասաց նրան։

—«Որդեակ իմ, շուտով դու կնստես թագաւորական գահը. ծանր է այդ ժառանգութիւնը։ Ո՞րքան ցաւալի է, որ կեանքի իմաստութիւնը գալիս է ծերութեան հետ զուգընթաց. երբ արդէն ուշ է լինում նրանից օգտուելը։ Մի բան միայն կասեմ քեզ՝ մի հետևիր իմ օրինակին։ Ես մտածել եմ միմիայն իմ փառքի, յաղթութիւնների, տիրապետութիւնների մասին։ Այդ բոլորին էլ հասայ, բայց ինչ գնով. ես քարուքանդ եմ արել հարիւրաւոր քաղաքներ, ամայի եմ դարձրել ծաղկեալ երկիրներ, կոտորել եմ հարիւր-հազարաւոր թէ իմ և թէ օտար զինուորներ, թափել եմ արեան գետեր և արտասուքի վտակներ հոսեցրել։ Ինձ փառաբանում էին, ընդառաջ դուրս գալիս բարձրաբարբառ աղաղակներով, բայց այդ բոլորը այժմս լռել է. իսկ վիրաւորեալների և գերեալների հառաչանքները, որբուկների լացն ու կոծը ականջներիս մէջ աւելի և աւելի սաստկանում է։ Տիրապետողները,—ամենամեծ յիմարներն են։ Եւ վերջապէս հարևան երկիրներ տիրապետելու մէջ չէ թագաւորի իսկական փառքը։ Ինքդ սեպհական երկրիդ մէջ կունենաս անհամար թշնամիներ—ժողովրդի աղքատութիւնը, հիւանդութիւնն ու քաղցածութիւնը, թոյլերի ճնշումն, զո-

բեղների անօրէնութիւնները։ Հարկաւոր է այդ թշնամի-ների հետ գործ տեսնել։ Եւ ոչնչով երբէք դու այնպէս չես փառաւորի քո անունդ, ինչպէս այն ժամանակ, երբ խաղաղ, իմաստուն, խոնարհ, արդարադատ թագաւորութեամբ երջանկացնես ժողովրդիդ։ Զկայ աւելի փառաւոր յաղթութիւն, քան յաղթել չարութեանը մարդկանց մէջ. ոչ թէ թշնամու դաշտը ողողել նրա արիւնով, այլ քո երկիրը ողողել սիրով և արդարութեամբ։ Իմացիր, որ թագաւորի հոգսը պէտք է լինի՝ ոչ թէ իրեն փառք ձեռք բերելը, այլ ժողովրդի բարօրութիւնը։ Դու երիտասարդ ես, ինքդ քեզ զսպիր միշտ, հաւատ մի ընծայիր գովասանական բաղդր խօսքերին—դառն դեղը բժշկում է հիւանդութիւնը, իսկ քաղցրեղէնը մարդուս առողջութիւնը խանգարում։ Ցիշիր, որ դահ բարձրանալով՝ ծառայութեան ես գնում, որ դու այժմ ամբողջովին ժողովրդի համար ես և ոչ թէ ժողովուրդը քեզ համար։ Իսկ եթէ խորհրդի կարօտութիւն ունենաս, դիմիր քո նախկին դաստիարակին՝ իմաստուն Գիկոսին։ Իսկ այժմ մնաս բարև, թող երկինքը օրհնի քեզ դահ բարձրանալուդ օրը, իսկ ժողովուրդը օրհնի վախճանիդ օրը։ Ռամզէսը մեռաւ։ Եգիպտական սովորութեամբ նրա մարմինը զմռսեցին, կտաւով փաթաթեցին և դրին գերեզմանի մէջ՝ ստորերկրեայ տաճարում։ Դահ բարձրացաւ Մինեֆդան։ Սպասում էին աղմկալի խնջոյքների, հանդիսաւոր ատենախմբութիւնների, իսկ պալատականները ակնկալում էին շքեղ ընծաների և պարգևների։ Բայց յոյսերը ի դերև ելան։ Երիտասարդ թագաւորը ամբողջովին խորասուզուեց գործի մէջ։ Նա ներկայ էր լինում խորհուրդների, աշխատում էր հասկանալ օրէնքների միտքը, շրջում էր նահանգներն ու գաւառները, հարթում ճանապարհներ, փորում ջրանցքներ և ջրհորներ։ Ամբողջ օրերով աշխատում էր ինքը և ստիպում էր պալատականներին ևս աշխատել։ Շատերին դուր չէր գալիս այդ։

Թագաւորին ասում էին.

—Արքայ, լաւ կլինէր, եթէ հանգստանայիր և մի

փոքր զուարճանայիր. հրամայիր մենք տոնախմբութիւններ կսարքենք, աշխարհ կզարմացնենք շքեղութեամբ և փայլով։

—Ո՛չ, պատասխանեց թագաւորը, երբ երեխաները հիւանդ են կամ տխուր, հայրը չի կարող ուրախանալ։ Ես ևս չեմ կարող ուրախութիւններ անել, երբ ժողովրդի մէջ դեռ ևս կան այնչափ անբարեկարգութիւններ։

Անցաւ մի, երկու, երեք տարի։ Ամենուրեք թագաւորում էր խաղաղութիւն և արդարադատութիւն. ժողովուրդը սկսեց վերանորոգուել։ Գիւղերը վերաշինուեցին, քաղաքներն ընդարձակուեցին, բոլորն ուրախ էին, բաւական. սիրով փառաբանում էին թագաւորի անունը։ Միայն զօրապետները տխուր էին։ Ռամզէսի ժամանակ նրանք փառքի և պատուի մէջ էին, մեծամեծ պարգևներ էին ստանում, իսկ այժմ ստիպուած էին յետին տեղը բռնել։ Վերջապէս պարապութիւնից ձանձրացան և դիմելով Մինեֆդային, սկսեցին դրդել նրան, որ պատերազմ սկսի։

—Արքա՛յ, բացականչեցին նրանք, առաջնորդի՛ր մեզ կռուի. մեր հայրենիքը վտանգի մէջ է. թշնամեաց ոյժը օր ըստ օրէ աւելանում է։ Քո մեծ ծնողը բոլոր հարեւանների ոյժը քայքայեց, իսկ քո իշխանութեան տարիներին նրանց ոյժը աւելանում է։ Ուշ կլինի, երբ նրանք պատրաստուին և մեզ վրայ յարձակում գործեն։ Ցանուն երկրի բարօրութեան առաջնորդի՛ր մեզ, արքայ, կռուի դաշտ. մենք բոլորս պատրաստ ենք մեռնել քո փառքի համար։ Դու երիտասարդ ես, ցոյց տուր ուրեմն, որ քո մէջ բաբախում է քաջ սիրտ։ Լցրու աշխարհը քո անուան փառքով, թող մինչև երկրի ծայրերը ճանաչեն Մեծ-Մինեֆդային։

Նենդաւոր խօսքերը յափշտակեցին երիտասարդ թագաւորին, ինչպէս քաղցր ըմպելիք արբեցրին նրա խելքը։ Թագաւորը սկսեց պատերազմի պատրաստութիւն տեսնել. զօրքեր հաւաքուեցան, պաշարներ դիզուեցան, սրեր կոփուեցին, նետեր և աղեղներ պատրաստուեցին։ Խաղաղ

աշխատանքները դադարեցին, գիւղացիների ձեռքից խըլուեցին հացի և ուտելիքի պաշարները, դարբիններին վեր դցեցին դուքանների, դերանդիների և մանգաղների պատրաստութիւնը։ Գիկոսը տխրութեամբ շարժում էր գլուխը, սպասում էր, որ թագաւորն ինքը խօսեցնի, վերջապէս չըհամբերեց և ասաց.

—Իմ բարի Մինեֆդա, մի խաբուիր շողոքորթ խօսքերից, փառք մի փնտրիր հարևաններիդ մօտ, երբ նոյն փառքը կարող ես ձեռք բերել տանը։ Մեծը նա չէ, ով իւր հետ բերում է սպանութիւն, քանդումն, արտասուք, մեծը նա է, որին ամեն տեղ դիմաւորում են խնդութեամբ, որը իբրև արեգակ բերում է ջերմութիւն, լոյս, բաւականութիւն և ուրախութիւն։ Հարևաններիդ ոյժից մի վախիր, եթէ նրանց ոյժը աւելանում է, չէ որ քո զօրութիւնն էլ չի պակասում։ Եւ վերջապէս ժամանակ է, արքայ, դէն ձգել գաղանների սովորութիւնը, որ միշտ աշխատում են կծել իրար, կարծելով որ դրացին էլ նոյնն է մտածում։ Հաւատա ինձ, իմ նախկին սանիկ, հարևան երկիրները, ինչպէս և քո ժողովուրդը, կամենում են միայն մի բան՝-խաղաղ աշխատել և բարեկարգել իրանց կեանքը։ Արդեւք մի լինիր նրանց այդ բանի մէջ։

Մինեֆդա չէր կարողանում խելացի խօսքեր լսել. նա թունաւորուած էր հաճոյախօսութիւններից, նրա գլուխը մթագնուած էր համաշխարհային փառքի ցնորքով, թէ ինչպէս պէտք է մուտք գործէ նորանոր տերութիւններ իբրև յաղթող, ինչպէս օտար թագաւորներ և իշխաններ շղթայակապ պէտքէ գնան իւր կառքի յետևից։

—Նայիր, արքայ, որ ինքդ չընկնես փորձանքի մէջ։ Զինուորական բաղդը խաբուսիկ է. այդ նոյնն է, ինչ որ ամպերին նայելով եղանակ դուշակելը. իրիկուանից կըսպասես, որ առաւօտը պարզ կլինի, կզարթես, կտեսնես որ անձրևը փարչերով է տեղում։

—Մի վախիր, իմ ծերուկ Գիկոս։ Ես ամեն բան չափել-կշռել եմ։ Հարցրել եմ դուշակ—քրմերին. նրանք խոստանում են ճիշտ և կատարեալ յաղթութիւն։ Սուրբ

կոկորդիլոսները, ինչպէս հաւատացնում են քրմերը, իրանց աւազաններին մէջ ուրախութիւնից վեր են ցատկել «պատերազմ» խօսքը լսելով. սուրբ արագիլը անհամար դորտ է կերել, որ նշանակում է, թէ ես անհամար թշնամի պէտք է կոտորեմ, իսկ սուրբ կատուները խլացուցիչ կերպով մլաւում են «մեաւ, մեաւ» այսինքն «գնա, գնա».

Այդ բոլորը, արքայ, պալատականներիդ նենգամտութիւնն ու շողոքորթութիւնն է, պատասխանեց Գիկոսը։ Մի շտապիր, լաւ մտածիր, կոկորդիլոսները միշտ ցատկրտում են աւազաններում, մանաւանդ երբ կերակրի են սպասում, իսկ արագիլը, ինչպէս և դու ինքդ, եթէ մի քանի օր չարունակ չկերակրեն, ագահութեամբ կուտէ, իսկ կատուներին ես ինքս, քո խոնարհ ծառան, կոտրպեմ մլաւելու, եթէ գաղտագողի քարշեմ նրանց պոչից. թեթեւամիտ մի լինիր Մինեգդա.

—Բայց միայն այդ չէ, ընդհատեց սրտնեղութեամբ Մինեգդան. ես գուշակ կանչեցի, նա ալիւր մաղեց և և ալիւրի վրայ կազմուած դծերից յաղթութիւն գուշակեց. «ինչպէս ցիր ու ցան եղաւ ալիւրը, ասաց նա, այնպէս էլ ցիր ու ցան կլինին քո թշնամիները»։

—Ը՞նչ, մամռաց Գիկոսը։ Ծառաների և խաբեբաների մէջ ամենամեծն է քո գուշակը. մաղը ինքը չի խօսում. իսկ նրա փոխարէն կարելի է խօսել, ինչ որ կամենաս, նա չի վիճել հետդ։ Եթէ ուզում ես, ես էլ շուտ տամ մաղը և ասեմ. Տեսա՞ր, ինչպէս թռաւ ալիւրը, այդպէս էլ դանդաղն կողմեր կթռչեն և քո զինուորները պատերազմի դաշտում»։ Ի՞նչ կասես դրա դէմ։

—Այս կասեմ—հանաքչի ես Գիկոս։ Մի՞թէ խաբում է և աստղաբաշխը, որ աստղերին նայելով գուշակեց յաղթութիւն։ Չէ, թող դատարկ վէճերդ և ել վերջի խնջոյքիս։

Ծանր հառաչ քաշեց Գիկոսը և ասաց։

—Ի՞նչ արած։ Երևում է չեմ կարող յաղթել շողոքորթութեան ձայնին. ստիպուած եմ դիմել հանդուցեալ Ռամզէսի օգնութեան։ Չէի ուզում. բայց պէտք է բաց

անեմ գաղտնիքը։ Արքայ, դու լսեցիր կենդանիների խորհուրդը. լսիր և մեռեալին. գնանք քո հօր գերեզմանը։

—Մեռեալները ոչ խօսում են և ոչ լսում, գոչեց Մինեֆդան, նրանք համր են և խուլ։

—Այդ ճիշտ է, պատասխանեց Դիկոսը. բայց չէ՞ որ համր և խուլեն և՛ քո մաղը, և՛ ատաղերը, իսկ դու նրանց լսեցիր. խորհրդակցեցիր կատուների, արագիլների, կոկորդիլոսների հետ, այժմ էլ խորհրդակցիր հօրդ հետ։

Մինեֆդան լռեց։ Իջան գերեզման՝ ստորերկրեայ տաճարը, բարձրացրին դագաղի վրայից երեք ոսկեայ կափարիչները, որտեղ Եգիպտոսի սովորութեամբ հանգչում էր Ռամզէս փարաւոնի մարմինը՝ կանգնած դիրքով։ Թագաւորը շփոթուեց, արտասուքը սքօղեց աչքերը. վերջապէս ուշքը հաւաքեց և հանդարտութեամբ շշնչաց.

—Տեսնում ես, Դիկոս, հանգուցեալը լռում է. մենք ի զուր անհանգ... Թագաւորը չկարողացաւ վերջացնել։ Դիկոսը դիպաւ դիակի ուսին, չորացած ձեռքը մեկնուեց և կարծես Մինեֆդային տալով երկարացրեց մի թուղթ։

—Մի վախիր, արքայ, ասաց Դիկոսը՝ բռնելով վախեցած Մինեֆդային՝ այդ՝ հանգուցեալը խորհուրդ է տալիս քեզ, կարդա.

Երիտասարդ թագաւորը նայեց, թղթի վրայ գրուած էր.

«Չի կարելի տեսնել արեգակը մառախուղի մէջ.

«Մի որոնիր իմաստութիւն շողոքորթ խօսքերի մէջ.

«Դու ուզում ես տիրել ողջ աշխարհին.

«Նոյն իսկ թագաւորին միմիայն գերեզմանն է պէտք.

«Ցիշիր, մենք բոլորս պէտք է դառնանք մի ափ հող.

«Մեզանից յիշատակ կմնայ միմիայն բարի գործ։

Մինեֆդան մտայուզուեց։ Երկար ժամանակ կանգնած մնաց թղթի առաջ։ Երեկոյ էր արդէն. արեգակը իջել էր. իսկ թագաւորը դեռ ևս կանգնած էր տաճարում։ Դիշերը ուշ նա լուսրէն հեռացաւ Դիկոսի հետ։

—Վաղը, թանկագին ուսուցիչ, արձակիր զօրքերին. թող ամեն մարդ դառնայ իւր տունը. ասաց Մինեֆդան բաժանուելով. քանի ես կենդանի եմ՝ պատերազմ չի

լինիլ։ Եւ Եդիպտոսում լսուեցան ուրախ երգերի ձայներ. ժողովուրդը բարգաւաճում էր, իսկ ողջ աշխարհը փառաբանում էր խաղաղասէր Մինեֆդային։

Պեսրովից թարգմ. Դրիգոր Բենյ. Նոր-Արեւեանց.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Եւ թեմեր

Օգոստոսի 7-ին նշանակուած էր մաղթանք այն մեծ շնորհաց համար, որին բաղդ ունեցաւ արժանանալու հայ ազգը՝ ամբողջ քսան տարուայ տառապանքից և կրած մեծամեծ զրկանքներից յետոյ։ Այդ օրը դասհացողական պատարագ և մաղթանք պէտք է տեղի ունենար Թիֆլիզի Վանաց մայր եկեղեցում եկեղեցական կալուածներ յետ ստանալու և դպրոցների վերաբացման համար։ Պատարագիչ էր Թիֆլիզի թեմի առաջնորդ Գեր. Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը։ Պատարագի վերջում պատարագիչ արքեպիսկոպոսը Նահապետ եպիսկոպոսի, բազմաթիւ վարդապետների և Թիֆլիզ քաղաքի քահանաների ամբողջ դասի հետ դուրս եկաւ թափորով Վանքի բակը, որտեղ խռնուած էր մոտ 20,000 ժողովուրդ և որտեղ պէտք է կատարուէր կայսերական մաղթանքը։ Այդ միջոցին վեհարանից հայրապետական շքով բարեհաճեց իջնել Ն. Ս. Մերուանազարդ Հայրապետը ամպհովանու տակ։ Նորին Սրբութեան երևալուն պէս այդ բիւրաւոր ժողովրդի բերանից լսուեց որոտաձայն կեցցէ Կայսր, կեցցէ Վեհափառ Հայրապետը։ Մաղթանքը սկսեց Նորին սրբութիւնը և երբ սկսուեց մեծ աղօթքի ընթերցանութիւնը, ամբողջ ժողովուրդը որպէս մի մարդ ծնկաչոք միացաւ այդ աղօթքին։ Մաղթանքի ժամանակ խօսուեցին ճառեր.

ժողովրդի աչքերին փայլում էր ուրախության արտասուք և ամեն ոք աշխատում էր զգայակցել ուրիշներին. շնորհաւորում էին, աչքալոյս էին տալիս իրար և ընդհանուր գոհունակութեամբ ցրուեցին տները՝ օրհնելով Կայսեր կեանքը և այդ մարդասիրական ակտի պատճառ եղողներին, որոնք վերացրին հայ եկեղեցու սուգը և ժողովրդի վերաբերութեամբ բիւրոկրատների ստեղծած մեղադրանքն ու անվստահութիւնը։

Նոյն մաղթանքի ժամանակ կարդացուեց Վեհափառ Կաթուղիկոսի ընդհանրական կոնդակը, որը տպուած է սոյն համարի ճակատին։

Համաձայն Նորին Սրբութեան շրջաբերական հեռագրի նոյն օրը մաղթանք կատարուեց նաև Մայր Տաճարում՝ իմման սեղանի առաջ։ Այդ օրը պատարագիչ էր Նորին Վեհափառութեան տեղապահ Գերապատիւ Տէր Աբրահամէս ս. արքեպիսկոպոսը. պատարագից յետոյ՝ նախ քան մաղթանքը՝ Եղիշէ Ծ. վարդապետ Մուրադեանը բացատրեց ժողովրդին այն բացասական ընթացքը, որը մտաւ ռուսական կառավարութեան մէջ ութսունական թուականներից յետոյ և պատճառ դարձաւ ամբողջ երկրի յետամնացութեան։ Այսպիսի սխալ ընթացքի և գործունէութեան ժամանակ անմասն չը մնաց նաև հայ ժողովուրդը և եկեղեցին բազմաթիւ զրկանքներից և իրաւանց սահմանափակումներից, որպիսիք այժմ Նորին Կայսերական Մեծութեան ամենաողորմած հրամանով վերացուեցին մեզանից և հնարաւորութիւն տրուեց խաղաղ քաղաքակրթական աշխատանքի։ Վերջացնելով քարոզը, յորդոր կարդաց աղօթել առ Աստուած Նորին Կայսերական Մեծութեան և այն բոլոր լուսամիտ պաշտօնեաների և հպատակների համար, որոնք աշխատում են յանուն արդարութեան և երկրի ու ժողովրդի բարօրութեան և յառաջադիմութեան։ Այնուհետև սկսուեց կայսերական մաղթանքը ամբողջ միաբանութեան մասնակցութեամբ և

Միածնաէջ տաճարի կամարների տակ սրտի խորքերից հնչեցին «Եւ արդ մեք ամենեքեան» և «Օրհնեսցի»։ Տաճարում և բակում հաւաքուած էր չը տեսնուած բազմութիւն՝ նոյն իսկ շրջակայ գիւղերից եկած։ Մաղթանքից յետոյ տաճարի առաջ ժողովրդին կարդացուեց և բացատրուեց Բարձրագոյն ուկազը, որը լսելուց յետոյ ժողովուրդը սրոտաձայն դոչեց կեցցէ Կայսր, կեցցէ Վեհափառ Հայրապետը։ Նոյն օրը հոգեհանդիստ կատարուեց սև օրերի ժամանակուայ զոհերի համար և ժողովուրդը ցրուեց դէպի Ներսիսեան լիճը։

Այդ օրը միաբանութեան կողմից հեռագիր ուղարկուեց Թիֆլիզ Նորին Վեհափառութեան՝ թարգման հանդիսանալու Կովկասի պայծառափայլ Փոխարքայի և Նորին Կայսերական Մեծութեան առաջ և միաբանութեան ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքները տարածելու Կայսերական գահոյից առաջ։ Ամբողջ Վաղարշապատն այդ օրը զարդարուած էր դրօշակներով և արտակարգ կեանք և խնդութիւն էր տիրում ամեն տեղ։

ԿԱՐՍ

Օգոստոսի 5-ին։ Այսօր տեղւոյս փոխանորդ Մամբրէ վարդապետի հանդիսադրութեամբ և խուռն ժողովրդի մասնակցութեամբ մաղթանք կատարուեց եկեղեցական կալուածներ վերադարձնելու և դպրոցներ բանալու առթիւ։ Մաղթանքի ժամանակ փոխանորդը քարոզ խօսեց։

ԲԱԹՈՒՄ

Օգոստոսի 7-ին։ Այսօր պատարագից յետոյ ահագին բազմութեան ներկայութեամբ հայոց եկեղեցում կատարուեց կայսերական մաղթանք եկեղեցական կալուածներ վերադարձնելու և դպրոցներ վերաբանալու առթիւ։

ԳԱՆՁԱԿ

Այսօր՝ հանդիսաւոր պատարագից յետոյ՝ հայոց եկեղեցում ժողովրդի ահագին բազմութեան ներկայութեամբ կատարուեց գոհաբանական մաղթանք Նորին Կայսերական Մեծութեան և Արքայական ընտանիքի արիշատութեան համար։ Ամբողջ հոգևորականութիւնն ու ժողովուրդը ծնկաչոք աղօթում էր պաշտելի Արքայի և Նրա զօրաց յաղթութեան համար. շատերի աչքին փայլում էին ուրախութեան և գոհունակութեան արցունքներ։

ՇՈՒՇԻ

Ամսոյ 3-ին, երբ այստեղ Վեհափառ Կաթուղիկոսից թեմիս առաջնորդի անունով հեռագիր ստացուեց հայ լուսաւորչական եկեղեցապատկան կալուածներ և եկեղեցական դպրոցներ վերադարձնելու մասին, այդ օրը Շուշին կատարելապէս տօնական տպաւորութիւն էր ստացել։ Ժամի 11-ին բոլոր խանութները փակուեցին, երկու սեռից բաղկացած հասարակութիւնը հաւաքուել էր Ղազանչեցոց եկեղեցու բակը, ուր և գնացել էր մեծ հանդիսաւորութեամբ թեմիս առաջնորդը քահանայական դասով աւետիք տալու հայ ժողովրդին և մաղթանք կատարելու։ Սրբազան առաջնորդը սեղան բարձրանալով, նախ կարդաց Վեհափառի հեռագիրը, ապա մի հակիրճ ճառ խօսեց, շեշտելով, որ այսօրուան օրը մեծ տօն է Կովկասի հայ ժողովրդի համար, որի առաջ գործունէութեան լայն ասպարէզ է բացւում և հրաւէր կարդաց, որ հայ ժողովուրդը եռանդուն գործունէութիւն ցոյց տայ դպրոցների վերաբացման և բարեկարգութեան գործում. դրանից յետոյ ուրախ տրամադրութեան ներքոյ նոյն հանդիսով ցրուեցան տները։

ԿԱՂԶՈՒԱՆ

Օգոստոսի 5-ին «Այսօր ազգային տօն է. մի փառաւոր ու չը տեսնուած հանդէս։ Հազարաւոր երկսեռ բազմութիւն եկեղեցու շուրջը հաւաքուած՝ սպասում էր հանդիսի բացվելուն։ Արտաքոյ կարգի ձևով եկեղեցու զանգերը զօղանջում էին. իսկ եկեղեցում պատարագ էր մատուցւում։ Պատարագից վերջը երգեցիկ խումբը «Ուրախ լեր ս. եկեղեցի» շարականը երգելով պատշաճաւոր հանդիսաւորութեամբ դիմեց դէպի բազմութեան կեդրոնում պատրաստուած սեղանը, ուր և պատարագիչ քահանան ժողովրդին աւետեց ուսումնարանների բացուելու լուրը և անմիջապէս սկսուեց Կայսերական մաղթանքը։ Մաղթանքից յետոյ խօսուեցան մի քանի ճառեր, երբ մէջ ընդ մէջ երգում էին պատշաճաւոր երգեր, նուագում էր տեղական սահմանապահ զօրքի երաժշտական խումբը և ասիական դափ ու զուռնան, իսկ ժողովրդից շատերը, խիստ զգացված այս անզուգական հանդիսից, ուրախութեան արտասուքն աչքերին, ամեն մի ճառից վերջը օդը թնդացնում էին կեցցէներով։ Երիտասարդներից մէկը ճառում շեշտեց, որ դպրոցների փակման դէպքը մեզ—հայերիս համար մի իրատական—փորձառու դաս եղաւ։ Մենք կորցնելուց զգացինք մեր կորստի մեծութիւնը, իսկ այժմ վերստին ձեռք բերելով այն, աւելի եռանդով ու ջերմ սիրով կընդդիմենք նրան այդ մեր բոլոր իրձերի և յոյսերի աղբիւր հիմնարկութիւնը՝ օրհնելով նրա դռները բաց անողի կեանքը։ Հանդիսից յետոյ ժողովրդի մի մասը դրօշակներով ու երաժշտութեամբ գնաց գաւառապետի մօտ և խնդրեց, որ ամբողջ հայ հասարակութեան անունով մի շնորհակալութեան հեռագիր ուղարկուի Կայսեր։ Գաւառապետը շնորհակալ լինելով խոստացաւ գրել տալ և մի ժամից վերջը յանձնել հասարակութեան, որ և կատարուեց։ Միաժամանակ մի հեռագիր էլ խփուեց մեր ծերունազարդ Հայրապետին։ Եկեղեցու շուրջը ծածանվում են բազմաթիւ

դրօշակներ, մինչև երեկոյ երգի և երաժշտութեան ձայնը չի կտրու

այնտեղ էր, խանութները փակ էին, գիւղը զարդարուած էր դրօշակներով։

Ալէքսանդրապոլում՝ ենթադրելով, որ օգոստոսի 9-ին Նորին Վեհափառութիւնը մուտ կգործի քաղաք, բոլոր խանութները փակել էին, ոչ մի մշակ չէր գնացել աշխատանքի, այլ ամենքը խռնուած փողոցներում և յաջորդաբանի շուրջը, անհամբեր սպասում էին երկաթուղու գնացքին։ Նոյն օրը ս. Էջմիածնից միաբանութեան կողմից Վեհափառ Հայրապետին դիմաւորելու էին գնացել Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանցն և Սինոդի անդամ Մատթէոս վարդապետը։

Քաղաքը տօնական կերպարանք ունէր. ամեն տան ու խանութի վրա ծածանւում էին դրօշակներ, իսկ յաջորդարանի փողոց նայող պատշգամբը զարդարուած գոյնզգոյն լաստերներով, կանաչ դիրլեանդներով՝ դրասանդներով և սիրուն ծաղկեպսակի մէջ ծերունի Հայրապետի պատկերն էր դրված. դիմացի տանիքների վրա արուեստական ծառաստան էին կանգնել։ Փոքր երեխաներն ու պատանիները անդադար վազվզում և աշխատում էին ըստ ամենայնի շքեղացնել տեսարանը։ Յատուկ մասնաժողովը, որ ընտրված էր երիտասարդներից ընդունելութեան մասին հոգալու, ջանք չէր խնայել շքեղութեան մասին։ Սակայն այդ օրը քաղաքագլխի հեռագիրը յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը Ալէքսանդրապոլ կհասնի օգոստոս 10-ի ցերեկուայ գնացքով։ Այս լուրը կայծակի արագութեամբ տարածուեց քաղաքի մէջ և ամենքը գնացին իրանց դորձին՝ յաջորդ օրուայ թողնելով իրանց ուրախութեան արտայայտութիւնը։ Օգոստոս 10-ի առաւօտից հազարաւոր բազմութիւն լցրել էին փողոցներն ու երկաթուղու կայարանը։ Մարդ, կին, երեխայ ամենքը դուրս էին եկել դիմաւորելու հայոց Հայրիկին, իրանց ուրախութիւնն յայտնելու այն մեծ յաջողութեան համար, որ ոչ միայն եկեղեցական կալուածները յետ ստացաւ, այլ շնորհիւ նրա՝ լայն բացվեցան փակ դպրոցների դռները, որին այնքան անձկանօք սպասում էր Ալէքսանդրապոլ բազմահայ քա-

ղաքը։ Վեհափառ Հայրապետի գնացքն անցնող փողոցներում շարժուելու տեղ չկար։ Հինգ տեղ կանգնեցրած էին յաղթական կամարներ. Վեհափառի պատկերները պոակների մէջ կախուած էին կամարների ճակատից։ Եկեղեցական դասը շուրջառով, խաչով խաչվառով սպասում էր յաջորդարանի փողոցի ծայրին։

Ժամը 11 40-ին գնացքը կանգ առաւ Ալէքսանդրապոլի կայարանում, ուր ընդ առաջ էին գնացել Ս. Էջմիածնի պատուիրակները, Կոմիտաս վարդապետը, Ալէքսանդրապոլի հոգևոր կառավարութեան անդամները և տեղական զօրքի հրամանատարի ներկայացուցիչներ՝ մի գեներալ և մի պոլկովնիկ։ Վեհափառին ուղեկցում էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը, դիւանապետ Ցուսիկ, Ալէքսանդրապոլի և Կարսի փոխանորդներ Կիւրեղ և Մամբրէ վարդապետները, Ալէքսանդրապոլի գաւառապետն ու քաղաքագլուխը։

Կայարանում դիմաւորողները Վեհափառ Հայրապետի աջը համբուրելով ու օրհնութիւնն ստանալով դուրս եկան սալոն վագոնից։ Անհամար բազմութեան կեցցէների և զինուորական երաժշտական խմբի նուագածութեան ուղեկցութեամբ Նորին սրբութիւնը բազմեց իրեն համար յատուկ պատրաստած Խալաթեանների կառքը։ Դեռ մի քանի քայլ չէր շարժուել գնացքը, երբ կանգ առաւ. բանից դուրս եկաւ, որ դպրոցական աշակերտ պատանիները Ծերունի Հայրապետին առաւել պատուած լինելու համար բաց էին արել ձիերը և իրանք էին քաշում։ Վեհափառը այս նկատելով սաստիկ զայրացած ցած իջաւ կառքից և ուրիշ կառք նստելով շարունակեց ճանապարհը։ Տասնեակ հազարաւոր բազմութեան մէջ կարգ պահպանելն անհնարին դարձաւ։ Ուղիղ կէս ժամ տևեց կայարանից մինչև յաջորդարան հասնելը։ Մուտքի առաջ երգում էր օրիորդներից բաղկացած երաժշտական խումբը, որը Հայրիկի վեր բարձրանալու ժամանակ երգեց. «Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք . . .» երգը։

Վեհափառ Հայրապետը մտնելով իր սենեակները,

անմիջապէս հրաւիրեց բժ. Ն. Տէր Սահակեանին յոգնաժութիւնից թոյլ զգալով իրան։ Այդ օրը ոչ սքի չընդունեց։

Երեկոյեան հրավառութիւն կար, նուագում էր զինուորական երաժշտական խումբը և տեղական զուռնան։ Ժողովրդի ոգևորութիւնը անցել էր ամեն չափ ու սահման։ Օգոստոսի 11-ին ներկայացան Ալէքսանդրապոլի և շրջակայքից ժողուած հայ հասարակութեան ներկայացուցիչները՝ շնորհաւորելու Վեհափառ Հայրապետին և ստանալու նրա ս. օրհնութիւնը։ Ներկայացաւ նաև տեղական պարսիկների կողմից պատգամաւորութիւն, որոնք ի միջի այլոց իրանց ցաւակցութիւնը յայտնեցին հայերի և պարսիկների մէջ տեղի ունեցող թշնամական գործողութիւնների առթիւ։ Վեհափառ Հայրապետը նրանց յորդորեց հաշտ ապրել իրանց դրացի հայերի հետ, որովհետև Ռուսաստանի բարեխնամութեան այս մեծ և պատմական շրջանում միևնոյն երկրի մէջ դարերով ապրողների եղբայրական համերաշխութիւնից կախուած է նրանց բարեկեցութիւնը։

Շաբաթ օգոստոսի 13-ին Շողակաթի տօնին ս. Փրկիչ եկեղեցում պատարագ մատոյց Գարեգին արքեպիսկոպոսը և հայրապետական մաղթանքից առաջ համառօտ քարոզ խօսեց նշանակալից օրուայ առթիւ։ Ժողովուրդ քիչ կար, որովհետև այդ մասին չէր յայտարարուած։

Ամսի 14-ին վերափոխման տօնին ս. Աստուածածին եկեղեցում պատարագեց Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեանը։ Պատարագի վերջին եկեղեցի իջաւ ծերունազարդ Հայրապետը և օրհնեց ժողովրդին։ Կէս օրից յետոյ բարեհաճեց զբօսանքի դուրս գալ դէպի Արփաչայ, որ խմանալով երիտասարդները ձիաւորուած ուղեկցում էին նորին Սրբութեան կառքին։

Օգոստոս 15-ին առաւօտեան գնացքով Վեհափառ Հայրապետը մեկնեց Ալէքսանդրապոլից՝ ուղեկցութեամբ Գրիգոր եպիսկոպոսի, Յուսիկ, Կոմիտաս և Մատթէոս վարդապետների։ Էջմիածին-Իգդիր տանող խճուղու վրա կանգ առաւ գնացքը, ուր ժողոված էր մեծ բազմութիւն կառքերով ու ձիերով։ Երբ Վեհափառ Հայրապետը երե-

ւաց վագոնից, օդը թնդաց կեցցէներով։ Դիմաւորելու էին եկել Սինօդի անդամ Արիստակէս և Յովհաննէս եպիսկոպոսները և Վաղարշապատի քահանաները։

X.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՒՏՔԸ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՆ.

Արդէն առաւօտեան հեռագիր ստացուեց Ս. Էջմիածնում, որ Վեհափառը Աղէքսանդրապոլից ճանապարհ ընկաւ դէպի Մ. Աթոռ. ուստի դերապատիւ տեղակալը Յովհաննէս եպ. Շիրակունու հետ մեկնեց Էջմիածին կայարան դիմաւորելու Նորին Սրբութեան. իսկ վանքում և գիւղում պատրաստութիւն էին տեսնում Վեհին շքով ընդունելու։

Ժամը 4-ին հնչեցին վանքի զանգերը. միաբաններն եկեղեցի շտապեցին, ուր ամեն ինչ տօնական կերպարանք էր ստացել։ Ժամերգութիւնից յետոյ միաբանները շուրջառ առնելով՝ երկու կարգ շարուեցան Տրդատայ կոչուած դռան երկու կողմը, ուր սպասեցին մօտ կէս ժամ. շրջակայքը լի էր ժողովրդի բազմութեամբ. լիքն էր եկեղեցին, նորա գաւիթը և մինչև Տրդատայ դուռը տանող ամբողջ սալայատակի երկու կողմերը։ Գիւղի պատշգամբները և պատերը զարդարուած էին պսակներով, երփներանգ ծաղիկներով, գորգերով, դրօշակներով, Էջմիածնի և Նորին Ս. Օծութեան պատկերներով։ Տրդատայ դուռը զարդարուած էր կամարակապ պսակներով, իսկ այն ճանապարհը, որով պիտի անցնէր Նորին Սրբութիւնը, ծածկուած էր կանաչ—թարմ տերևներով և ծաղիկներով։ Ճանապարհի երկու կողմը շարժական պատեր էին ներկայացնում մարդիկ, կանայք և օրիորդներ։

Բոլոր աչքերը յառած էին դէպի այն կողմը, որտեղից պիտի դար Վեհափառը։ Վերջապէս մի ձիաւոր աւետեց

Նորա գալուստը։ Մի քանի րոպէից յետոյ հրապարակը լցուեցաւ դրօշակակիր ֆիւսորներով և կանաչազարդ կառքերով, որոնց միջից Նորին Ս. Օծութեան կառքը առաջ անցաւ և մօտեցաւ եկեղեցական դասին։ Լուսարարապետը մատոյց խաչ և գաւազան. նա մտաւ ամպհովանու տակ և թափորը շարժուեց։ Երգեցիկ խումբը սկսեց «Հրաշափառ շարականը», թափորի առջևով գնում էին խաչ—գաւազան կրող երկու վարդապետներ, միաբանութիւնը և ապա խաչ ու խաչվառ կրողների ստուար շարքը. այնուհետև չորս սարկաւագներ խնկարկում էին ամպհովանու տակ համբաքայլ առաջացող Հայրապետին, որի առջևից տանում էին հայրապետական քողը։ Վեհափառի երևալուն պէս եկեղեցու զանգերի ձայնը խլացաւ ժողովրդի «կեցցէների» ահագին դղրդոցից։ Նորին Ս. Օծութիւնը օրհնում և խաչակնքում էր ժողովրդին մինչև եկեղեցի հասնելը, որտեղ բաղմեց իւր համար պատրաստած յատուկ աթոռի վերայ։ Կարդաց «Ուրախ եղէ ես» սաղմոսը. այնուհետև համբուրելով իջման սեղանի խաչն ու Աւետարանը և օրհնելով ժողովրդին, մեկնեց վեհարան կեցցէների ձայնի տակ։

Այդ օրը Երեկոյեան վանքի գաւթում հրավառութիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ երգում էին բաղմաթիւ խմբեր, նուագում և պարում էին, և «կեցցէ» կանչում մինչև ուշ գիշեր։

Ռ. Ս.

Թագաւոր Կայսրը անցեալ յուլիսի 14-ին ամենաողորմածաբար հրամայել է վերացնել 1897 թուի հոկտեմբերի 30-ին կայացած որոշումը, որով Վահան վարդապետ Տէր Գրիգորեանին արգելուած էր Կովկասի սահմաններում և մայրաքաղաքում ապրելը։ Ցիշեալ Բարձրագոյն կամքն արդէն յայտնուած է տ. Վահան վարդապետին, որն աղատ է այսուհետև Կովկաս վերադառնալու և ապրելու ամենուրէք։

Եկատերինոսլաւ նահանգի Լուգանսկ քաղաքի բնակիչ՝ Նոր-Նախիջևանցի Սարգիս Խաչատրեան Փափազեանն այս օրերս նուիրեց Լուգանսկ քաղաքի հայ Աղօթատան մի մեծ զանգակ, նուիրեց նաև քսան և հինգ ռուբլի երրորդ զանգակ դնելու համար տեղական հայազգիներէ ստորագրութեամբ հաւաքուած գումարի մէջ. իսկ երկրորդ զանգակը նուիրեց տիկին Դշխուհի Դէորգեան Աճէմեան։

Վերոյիշեալ նուիրատուաց խորին շնորհակալութիւն Լուգանսկ քաղաքի հայ Աղօթատան Հոգաբարձութեան կողմանէ։

Այլ և Տաւրիկեան նահանգի Նողայսկ քաղաքի բնակիչ՝ Նոր-Նախիջևանցի՝ ի նորումս հանգուցեալ Ծերունի Յակոբ Պողոսեան Խուվաթեան՝ կտակաւ յօգուտ տեղական հայ եկեղեցւոյ Հոգաբարձութեան ուանդած է քառասէն խանութ՝ չորս հազար ռուբլի արժողութեամբ։ Հանգուցեալը տասներկու տարի էլ երեսփոխան եղած է եկեղեցւոյն։

Ուստի, իրեն այսօրինակ ծառայութեան և նուիրատաց փոխարէն մաղթեմք յամենեցուն Պարգևատուէն ստանալ յօթևանս արդարոց։

Անդամ Հոգաբարձութեանց հայ Աղօթատան Լուգանսկի և եկեղեցւոյն Հայոց Նողայսկ քաղաքի, Սարգիս ա. քահանայ Մարտիրոսեան.

Ի 19 օգոստոսի 1905 ամի
Բանմուտ (Եկատերինոսլաւ նահանգի)։

Ամերիկայի հայ գաղութը յաճախ իր վրայ խօսել կուտայ։ Ամերիկան իբր գաղթավայր մը մեծ ձգողութիւն մը ունի վերջերս և հայ գաղթային հոսանքը նախամեծարաբար դէպի Նոր Աշխարհը կ'ուղղուի։ Ցաջողութիւնը սակայն այնքան հեշտ չէ և եկողներէն շատերը յուսախաբ կելլան։ Անոնք միայն կը յաջողին, որոնք յաջողելու հանգամանքներն ունին։ Սոյն պարագայի մէջ որ և է

ճիւղի մէջ Ամերիկան վարդի անկողիններու երկիրը չէ։ Գործաւոր ստուար դասակարգի մը մօտ քիչ շատ ամեն գործ և զբաղում ներկայացուած է հոս, բայց արդ կը փափագեմ, որ գրուիթեանս շարժառիթին ընտրեմ ուսանողական յաջողութիւն մը, որ մեծ պատիւ կը բերէ հայ մտքին։

Պ. Դէորդ Թուրեան երկու տարի առաջ իր ընթացքը աւարտած էր տեղւոյս Հարվարդի համալսարանին մէջ, կրթական հոյակապ հաստատութեան, որ մեծ մարդերու յիշատակաւոր շարք մը ընծայէ ամերիկեան ժողովրդին։ Արդի նախագահը՝ Թէոդոր Ռուզվէլտ ինքն ալ Հարվըրդի շրջանաւարտ մըն է 1880-ի շրջանին և դեռ մի քանի օրեր առաջ էր, որ քաղաքս այցելելով իւր դասակիցների հետ, կանխական ծրագրի մը համաձայն, մեծ դումար մը հանգանակեցին և նուիրեցին իրենց Alma Mater-ին ի յիշատակ իրենց քսան և հինգ ամեակի։ Այս տեսակ մեծ հաստատութեան շրջանի ուսանողական նշանակելի յաջողութեամբ աւարտելէ և պատկաւոր գրականութեան (B. A.) աստիճանը ստանալէ յետոյ, տարի մըն ալ հետևեցաւ միևնոյն վարժարանի Արևելեան լեզուներու և պատմութեան դասընթացքին, հետևելով միևնոյն ժամանակ իր աստուածաբանական ճիւղին Քեմպրիճի եպիսկոպոսական դպրոցին մէջ, ուր նա շրջանաւարտ հանդիսացաւ այս ամառ վարպետ գրականութեան (M. A.) տիտղոսով, ինչպէս նաև պատկաւոր աստուածաբանութեան (B. D.) աստիճանով։ Ազգային տագնապի այս օրերուն մէջ, մխիթարական երևոյթ մըն է ուսանողական այս տեսակ ուշագրաւ յաջողութիւնները, որոնք քաղաքակիրթ աշխարհի այս կամ այն մասին մէջ կ'ուզան անժխտելի կերպով հաստատել հայ մտքին գերազանց ճկունութիւնը և կարողութիւնը։

Պ. Գ. Թուրեան իր ընթացաւարտութեան ճառին նիւթ ընտրած էր «Հայ եկեղեցւոյ խորհրդատեսրը»։ Դպրոցին տեսչութիւնը այնքան հաւնած է այս երկասիրութեան, որ որոշած է իր ծախքով հրատարակել զայն և

միանգամայն հոգալ պ. Թուրեանի ճամբու ծախքը, զինք էջմիածին զրկելու և տեղւոյդ ճոխ գրադարանին միջոցաւ իր երկասիրութիւնը ընդարձակելու և աւելի ճոխ ու վաւերական ընելու զայն։ Հաւանաբար այս տողերը տպուած պահուն պ. Թուրեան արդէն հասած կլինի էջմիածին և ձեռնարկած իր գործին։ Այս տողերով Ամերիկայի հայութեան յարգանքը և գնահատումը կը յայտնենք իր այդ արժանաւոր զաւակին կրթական մեծ յաջողութեան համար և կ'աւելացնենք թէ, մեր դաղութը գերազանցապէս պէտք ունի այդ ոգիով և մէթոդով իւր իսկ ծոցին մէջ պատրաստուած ուսանողներու ապագայ արդիւնալից եկեղեցական գործունէութեան։

ԲՕՍՏՕՆ

Կ. Ց. Գարկիլեան.

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Պօլսոյ թերթերում կարդում ենք.—

Շնորհուած է Նիքսարի ազգային դպրոցի վերաշինութեան և մի յարկ աւելացնելու կայսերական բարեհաճ իրադէն։ Շէնքը պէտք է բաւականացնի 400 աշակերտի։

Ստացուած է Պիլէճիկի նորընտիր առաջնորդական Փոխանորդ Թաթուլ վարդապետ Դուրեանի հաստատութեան հրամանագիրը։

Երուսաղէմի վանուց նախորդ ելևմտից տեսուչ Տ. Ղևոնդ վարդապետ Մագուտեանը իր գրպանի-տետրակ անուանած և օթէլներու շինութեանց հաշիւներու տեղեկագիրը հաշուեքննիչ Մասնախումբը վաղուան նիստի մէջ պէտք է քննի սոյն մատուցեալ շինուածոց մանրամասն հաշիւները և թեր ու դէմ

պիտի բերէ Երուսաղէմէն յունիսի 8-ի թուով ղրկուած ընդարձակ տեղեկագրի հետ, որի մէջ քսան երեք գլուխներով ամէն ինչ պարզուած և լուսաբանուած է, զոհացումն տալով վարչութեան կողմանէ եղած ծանուցեալ ինքը հարցումներուն։

Նիկոմիդիոյ վիճակի Կէյվէի Միջագիւղի եկեղեցու կողոպտման պատճառաւ Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսը անձամբ քննութիւն կատարելով, դիւղացիներին հրաւիրել է եկեղեցի և բոլորին երդուցեր է Աւետարանի վրայ։ Բանտարկուած երկու քահանաներից մինին ազատ արձակել է, իսկ տէր Օհան քահանան հարցաքննութեան է ենթարկուել։

Ռուսճուդից խեղկատակ պատկառելիութեան մի լուր են հաղորդում։—

Առաջնակարգ վաճառատան մի պաշտօնեայ Մելքոն Յ. Կարկանեան սնրահարուում է ռումանացի Էլիզա անուն դեղեցիկ և հարուստ օրիորդի վրայ։ Էլիզան պայման է դնում, որ օրինաւոր կերպով ամուսնանան, հակառակ դէպքում արձակման թուղթ է պահանջում։ Մելքոն դիմում է տեղւոյն աւագերէց Կարապետ քահանայի, վերցնում է նրա վակեղն ու փիլոնը, հագցնում է այն փառաւոր մօրուքով օժտուած Յակոբ անունով մի բանջարավաճառի և որպէս քահանայ կը տանի հարսնեւորն։ Պատկը կը կատարուի, ներկայ եղողները կը շնորհաւորեն նորապսակ զոյգը, բանջարավաճառ քահանան տալիս է իւր օրհնութիւնը։ Սակայն տիկին Կարկանեան ըմբռնելով իրողութիւնը, դատարան կը դիմէ՝ մեղադրելով իւր ամուսնուն և նրա խորհրդակիցներին այդպիսի կեղծիքի մէջ։ Տէր Կարապետ քահանան, Մելքոն և Էլիզա մօտերս պէտք է ներկայանան դատարան։ Էլիզայի զայրոյթի շարժառիթն այն է՝ թէ ինչպէս եկեղեցական օրէնքները խաղալիք կը դառնան և ինքը կը համբուրէ բանջարավաճառի քիրտ ձեռքը։

Իզմիրից յուլիսի 11-ի թուով գրում են.—

Երէկ կիւրակէ կէս օրին յեռոյ Գարաթաշի եկեղեցու մէջ ? տեղի ունեցաւ նոյն արուարձանի վարժարանի տարեկան հանդէսը վայելուչ շքեղութեամբ։ Տաճարն ամբողջովին լեցուած էր ծնողներու և կրթասէրներու երկսեռ ոտուար բազմու-

թեամբ։ Հանդէսը սկսուեց 4½-ին նախագահութեամբ տէր Եղիշէ եպիսկոպոս Դուրեանի՝ իր շուրջն ունենալով Խաչերեան վարդապետին, տեղւոյն քահանային և ուսումնական խորհրդի անդամներին։ Բացման երգից յետոյ սկսուեց աշակերտների դասախօսութիւնները ու ոտանաւորների արտասանութիւնը, որոնք հաճելի տպաւորութիւն թողին և ջերմապէս ծափահարուեցան։ Վարժուհու խօսած բանախօսութիւնից յետոյ նախագահ սրբազանի գեղեցիկ բանախօսութիւնն ու «պահպանիչը» վերջակէտ եղան այս պարզ, սակայն սիրուն հանդիսին։ Ներկայ եղողները ջերմապէս շնորհաւորեցին հաստատութեան աշխատաւորները, ոյք այնքան աշխուժով և համակրանքով վարած են այս կրթական գործին։

Երուսաղէմի հաշուեքննիչ յանձնաժողովն այսօր դումարուեցաւ Պատրիարքարանի մէջ ատենապետութեամբ Խորենեան Գրիգոր էֆ.-ի, և հրաւիրելով տէր Ղեւոնդ վարդապետը, զանազան հարցումներ ըրաւ և տուած բացատրութիւնները լսեց։ Ղեւոնդ վարդապետ ուզեց իմանալ, թէ իբրև ամբաստանեա՞լ կը հրաւիրուի։ Պատասխանուեցաւ թէ յանձնաժողովը լոկ քննութեան համար է և ոչ ոքի չի ամբաստանում։

—Երուսաղէմից պատրիարքը դրել է Պօլիս, որ վանքի հաշիւների քննութեան առթիւ եթէ լուսաբանութեան կարօտ կէտեր գտնուին, հարկաւոր է լսել Ղեւոնդ վարդապետի բացատրութիւնները։ Եթէ պէտք լինին պատրաստ է նաև երկու վարդապետ ղրկել Պօլիս իրենց դիտողութիւնները բերանացի հաղորդելու։

Տ. Ղեւոնդ վարդապետ երէկ իրիկուն Յանձնաժողովի նկատից յետոյ տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք հօր հետ։ Կը լսենք թէ այս տեսակցութեան մէջ ս. Պատրիարքը միանգամ ևս շեշտել է՝ թէ ինքը և Կեդրոնական Վարչութիւնը ամենևին չեն ուզում, որ ազգը նորից հրաւիրուի Երուսաղէմի վանքի պարտիքը գոցելու մասին հաղարաւոր լիրաներ վճարելու։ Այս նկատումն ուրիշ բոլոր նկատումներից գեր ի վերէ։ Ուստի Ղեւոնդ վարդապետից պիտի պահանջուի ճշտել, թէ որչափ է վանքի պարտքը և պարզել, թէ ինչպէս է դոյացել այն և միջոց ցոյց տալ, թէ ինչպէս գոցել այդ պարտքը առանց ազգի վրայ մի նոր բեռ դնելու։ Ապա թէ ոչ, Կ. Պօլսոյ Պատրիարքարանը

բնաւ վատիրադ չունի Երուսաղէմի Պատրիարքարանի Ներքին գործերին խառնուելու։

Գաւառների մէջ կատարուած նոր մարդահամարից երևացել է, որ Եդեսիայ մէջ բաւական թուով ազգայիններ արձանագրուած են օտարազգաւանների տոմարի մէջ, թէ և հայ եկեղեցին կը հայթայթէ իրենց հոգևոր մատակարարութիւնը։ Այսպիսիները եղած յորդորներու վրայ նորից արձանագրուել են Հայ Եկեղեցու տոմարին մէջ։

Երեւելիում կարդում ենք. կըսուի թէ դպրեվանքին այս տարուան նորընծաներէն տ. Շաւարշ և տ. Շահէ սրեղանները Եւրոպա պիտի ղրկուին իրենց աստուածաբանական հմտութիւնը կատարելագործելու համար աստուածաբանական համալսարանի մը մէջ։

Ռուսճուքի հարուստ վաճառականներից պ. Սարգիս Գոյումճեան, իր սեպհական հողի վրայ, որ 300 ոսկի արժէ, ուզել է շինել տալ օրիորդաց վարժարան, որի ցածի յարկը արդէն աւարտած է, իսկ ամբողջութիւնը պատրաստ պէտք է լինի առաջիկայ ուսումնական տարուայ սկզբին։ Շէնքի համար մօտ 500 ոսկի պէտք է ծախսուի։

Հանգուցեալ դօքտոր Խօրասանճեանը իւր կենդանութեան ժամանակ վատիրադ յայտնած էր գեղատան համար յատուկ շէնք շինել։ Այժմ Խօրասանճեանի որդին ու ընտանիքը յատուկ գեղարանի շինութեան համար յատկացրել են հինգ հարիւր քսան և հինգ ոսկի։

Մշոյ տ. Կարապետի վանքը, որուն վերանորոգութեան պէտքը բաւական տարիներէ ի վեր Պատրիարքարանի ուշադրութեան առարկայ եղած էր, այս անգամ գործնական ձև մը պիտի ստանայ և Պատրիարքարանը դաւառական եկեղեցիներու յատկացեալ ղրամէն գումար մը յատկացնելով, պիտի նորոգել

տայ այդ վանքը՝ որուն միաբանութիւնը այս իմաստով շատ անգամ դիմումներ ըրած է արդէն պատրիարքարան։

Երուսաղէմէ կ՚գրեն մեզ.—Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը՝ յուլիս 20 թուականը հեռագրով հարկ համարած էր հրաժարեցնել Տ. Գէորգ եպս. Երէցեանը Պօլսոյ Պատր. Փոխանորդութեան պաշտօնէն։ Յուլիս 23ին պաշտօնագիր մ՚ուղղեց շեշտելով իր հրաժարեցուցման էական պատճառները, և միանգամայն յայտնելով թէ «մինչև ցարդ համբերեցի հայրական ներողամտութեամբ այն ամեն արարքներուդ դէմ, զոր թէ՛ նկատմամբ մեր անձին և թէ նկատմամբ միաբանական ուխտիս ի գործ դրիք վերջին 3—4 տարիներու մէջ ծանօթ հաշուական խնդրոյն առթիւ»։ Այս պաշտօնագրով միանգամայն կ՚զեկուցանէ Տ. Գէորգ եպս. Երէցեանին՝ թէ «իբրև Պատրիարք Հայոց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Աթոռոյն, կ՚ծանուցանեմ, որ անմիջապէս վերթաք մեր փոխանորդարանի բոլոր գործերը, Եէտի գուլէի, Եալովայի ագարակաց և այլ աթոռապատկան վաղֆներու հաշիւներն ու գոյքերն անմիջապէս յանձնել Արժ. Տ. Արիստակէս վարդապետ Խաչատուրեանի»։ Եւ կ՚վերջացնէ իր պաշտօնագիրը սա ըացայայտ խօսքերով.

«Պէտք է գիտնաք, որ այս կերպով միայն կրնայ հաղիւ մինչև ատենման մը թեթևնալ ձեր պատասխանատուութիւնը»։ Հրաժարեցուցեալ Պատր. Փոխանորդին պաշտօնանկութեան համար արդարութեան գործոց Բարձր. Նախարարին և Տ. Մաղաքիա Ս. Պատրիարքին ալ հեռագրաւ հաղորդեց իրողութիւնը։ Ինչպէս որ այսօր ալ՝ ի Պատրիարքարան պաշտօնագիր մ՚ուղղեց Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը, ներփակելով Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեանին հասցէին ուղղած յանդիմանագրին պատճէնը։

Այս տարի ամենևին դանձանակի արդիւնք չէր նշանակուած Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեանի ամոսատերակներուն մէջ, մինչդեռ փութիկոտութիւն կ՚ունենայ ծախուց մէջ նշանակելու Համբարձման տօնին առթիւ Ազգ. Հիւանդանոցի տուած 2 Օտմ. ոսկւոյ նուէրը։ Հոգ չէ թէ Պօլսոյ լրագիրք, ի պաշտօնէ հրչակեցին զայն՝ Տ. Գէորգ Եպսկ. Երէցեանի իբր անձնական մի նուէրը։

Աղգ. Պատրիարքարանէ լուր կ'տրուի մեզ՝ թէ Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ եպսկ. Երէցեան Երուսաղէմ հրաւիրուած չէ, այլ պարզապէս պաշտօնական եղած է, և այս անօրինութիւնն ի պաշտօնէ հաղորդուած է Երուսաղէմէն Դատական Նախարարութեան։

Տ. Գէորգ եպսկ. Երէցեան երկու բողոքագիրներ ղրկած է, մին Երուսաղէմի Ս. Պատրիարքին՝ իբրև նախագահի միաբանական ժողովոյ, և միւսը՝ Ս. Պատրիարք Հօր՝ իբրև նախագահի Աղգ. Կեդր. Վարչութեան, բացատրութիւն պահանջելով այն հարկեցուցիչ պատճառներուն համար, որոնց վրայ հիմնուած է իր պաշտօնէն դադարման անօրինութիւնը։

Երուսաղէմի Ս. Պատրիարքն հեռագրաւ ծանուցած է Ս. Պատրիարք Հօր, թէ ժառանգաւորաց վարժարանի տեսուչ կարգուած է Տ. Դանիէլ Ծ. վարդ. Ցակոբեան, ինչպէս երէկ գրեցինք, ժառանգաւորաց վարժարանի Տեսուչ Տ. Եղիշէ Ծ. վարդ. Զիլինկիրեան Երուսաղէմի Պօլսոյ Պատր. Փոխանորդի պաշտօնին կոչուած է։

ՎԱՆԱՑ ԼՈՒՐԵՐ

Տեղւոյս Նորահաստատ Կեդրոնականը վերջերս յաջողեցաւ արհեստանոց մը ալ կցել իր կրթական գործին, ուր նոյն դպրոցի աշակերտները ուսման հետ պիտի սորվին նաև արհեստը, որ առ այժմ կը բաղկանայ միայն կերպասագործութենէ եւրոպական թելերով։ Այս արհեստանոցին համար յատկացուած է նոյն դպրոցի վարի յարկը, ընդ վարպետութեամբ և վերին հսկողութեամբ մասնագէտ Աւետիս էֆ. Կաթողիկոսեանի, որ մեր արհեստաւորաց մէջ ընտրեալ տաղանդ մըն է իր հնարագիտական ընդունակութեամբ, այնպէս որ՝ նոյնիսկ պարսկական ցիսի գործելու ալ ձեռնարկած ըլլալով, վերջերս անոր համեմատ եւրոպական գործիք մըն ալ բերել տուաւ, ինչպէս որ ամենայն ճարտարութեամբ և յաջողութեամբ կրնայ գործել ամենէն կնճռոտ կերպասները իրենց նագծներով, և այս ամենը բոլորովին ինքնագործագործման ուժով ձեռք բերած ըլլալով՝ առանց վարպետի օգնութեան։ Այս արհեստանոցին համար առայժմ

յատկացուած է 80 ոսկի, որմէ գոյացած շահը բաժնուած է հինգ մասերու վրայ. այս մասերէն երեք հինգերորդը յիշեալ վարպետին և մնացած երկու հինգերորդ դպրոցին պատկանելու պայմանաւ։ Եթէ այս ձեռնարկին մէջ տեսնուելու ըլլայ ակնկալուած յաջողութիւնը, ապագային ուրիշ արհեստներ ալ պիտի ոկսին նոյն արհեստանոցին մէջ։ Սրտագին յաջողութիւն կը մաղթենք։

Սալնապատու իդական որբանոցի Հոգաբարձութիւն գնմած է բարերարուհի Տիկին Նատիրեանցին, խնդրելով որ վուճացնէ իր սովորական 60 ոսկւոյ տարեկան նպաստը։ Էջմիածնէն կը գրուի, թէ նոյն տիկինը ներկայիս մէջ ի վիճակի չէ նոյն նպաստը ղրկելու, ինչպէս առ այժմ պիտի չկրնայ ղրկել նաև տեղւոյս կեդրոնականին համար խոստացած 400 ռուպլիի նպաստը։

Առոր համար այժմեան միացեալ Հոգաբարձութիւնը լուծեց վերոյիշեալ որբանոցի կրթական պաշտօնէութիւնը այն պայմանով, որ եթէ մինչև յառաջիկայ դպրոցական շրջանին ակնկալուած օգնութիւնները հասնելու ըլլան, նորէն պիտի վերահաստատէ կրթական գործը. իսկ եթէ ոչ, միայն նոյն սանուհիներուն կեանքի անհրաժեշտ պէտքերը պիտի հոգացուին առանց ուսմունք աւանդելու մինչև ց'նոր տնօրինութիւն։

Աղթամարի ժառանգաւորաց վարժարանը, որ հանդուցեալ Կաթողիկոսի և Նախկին տեղապահի օրերէն ի վեր աննշան և ապարդիւն վիճակ մ'ունեցած է, աշակերտաց թիւը 15—20 էն վեր չանցնելով, յառաջիկայ դպրոցական շրջանին կանոնաւոր դպրոցի մը հանգամանքը պիտի ստանայ աշակերտաց թիւն հեռդհեռէ աւելցուելով։ Նաև դպրոցը կղզիէն դուրս փոխադրուելով։ Առ այժմ Ախաւանից մէջ շինուելու վրայ է ընդարձակ ու երկյարկանի շէնք մը, որ պիտի բաղկանայ դասարաններէ, լայնարձակ ոալօնէ, ճաշարանէ և ննջարանէ։ Այս դպրոցն ըլլալով եւ Աղթամարի թեմին կեդրոնականը, հոն պիտի պատրաստուին քահանայացուներ և ուսուցիչներ նոյն թեմին համար։ Արդեօք չարժէր, որ մեր կրթասէր բարերարներն հնչուն քաջալերութեամբ օգնութեան ձեռք կարկառեն այս ինքնայորդոր ձեռնարկին, զայն յարատևութեան շաւղին մէջ դնելու համար, ի խրախոյս ծերունազարդ տեղապահին և միաբանութեան, նաև յօգուտ այն աղքատիկ թեմին հայ ուսանողութեան։

Նարեկայ վանահայր Դանիէլ ծ. վ. Զատոյեան ատենէ մ'ի վեր Աղթամար կանչուած ըլլալով տեղային պէտքերուն համար, անոր տեղ զրկուած էր նոյն վանուց նախկին վանահայր խիզանցի Յովհաննէս Վ. Յակոբեանը, բայց սա վերջերս վախճանած ըլլալով, այժմ թափուր կ'մնայ նոյն վանքը վանահայրական պաշտօնէութենէ:

Վերջերս Աղթամարի կողմէն Մոկս գաւառի Կաթող. Տեղապահ կարգուեցաւ Վահրամ վարդ. Կանաչեան. կ'յուսացուի, որ սոյն երիտասարդ աբեղան օգտակար պիտի ըլլայ նոյն տեղի ժողովրդեան համար թէ՛ կրօնական և թէ կրթական տեսակէտով, մանաւանդ որ ինք ատեն մը Արմաշի մեջ ուսանելով, օգտուած է ըստ բաւականին, և ի հարկէ աւելի օգտուած պիտի ըլլար, եթէ հիւանդութեան մը պատճառաւ չստիպուէր հրաժարիլ տարաժամ:



ԵԹՈՎՊԻՈՑ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԸ

Եթովպիոյ հոգևոր հովիւ Տ. Մկրտիչ քահանայ Զէլատեան հետևեալ մտերմական նամակն ուղղած է իր բարեկամներէն մէկուն, մանրամասնօրէն նկարագրելով Մենելիք Կայսեր կողմէ գտած համակիր ընդունելութիւնը:

«Շնորհիւ Բարձրելոյն և հոգածութեամբն ուղեկցիս, 13 օրէն ողջամբ հասայ Շուլա ըստուած վայրը, մերձ Ատիս—Ապապայի և հոն կանգ առի: Օրը կիրակի էր. մեր հոն ժամանման լուրը շուտով հասաւ ազգայիններուն ականջը, որոնցմէ ոմանք փութացած էին քովս գալ. ասոնց խորհուրդով և կարգադրութեամբ նոյն օրը հօ՛ն գիշերեցի:

«Մեր ժամանելուն լուրն առած էր Եթովպիոյ Վեհ. Կայսրը, և հրամայած էր իր ոսկերչապետին՝ պ. Յակոբ Պաղտասարեանի, որ իր նորակառոյց փառաւոր տունը դրուի մեր տրամադրութեան ներքև, իսկ զարդերը, կահն ու կարասին կայսերական Պալատէն հոգացուին. նաև Ն. Վեհափառութեան կողմէ ականաւոր անձնաւորութիւն մ'ալ կ'կարգուի մեզ դիմաւորելու համար: Երկուշաբթիի բարի աղօթարանը կ'բացուէր գեղեցկօրէն, արշալոյսը դեցուհիի դիւթիչ գեղեցկութեամբը կ'փայլէր. աղօթարանի զենիթին վրայ. արդէն եկած էի վրանէն դուրս, և բնութեան այդ գեղեցկութիւնը, օդին թարմութիւնը, հովին զովութիւնը կ'ըմբոշխնէի կուշտ ու կուռ: Եւ ահա՛, շատ չան-

ցած վրանիս շուրջը խռնուած էին ազգայինները, հպարտօրէն տեղաւորուած՝ երիվարներու և ջորիներու հատատալինդ քամակներու վրայ։ Լանջախաչը կերերար վշտակոծ լանջիս վրայ։ Ազգայիններ՝ ժպիտ ի շրթունս, մէկիկ մէկիկ, մօտեցան համբուրեցին աջս, և բարի գալուստ մաղթեցին։ Յոյն երևելիներն ալ եղբայրսիրական նախանձախնդրութեամբ առի՝ փութացած էին ընդ առաջ գալ, շատ չանցած հասաւ և Վեհ. Կայսեր ներկայացուցիչը, համբուրեց Ս. Խաչը, ձեռքս սեղմեց կաթոգին և յանուն Ն. Վեհափառութեան բարի գալուստ մաղթեց։ Նոյն ձևով ես ալ պատասխանեցի Ն. Վսեմութեան։ Յետոյ մեզ համար պատրաստուած ջորիին վրայ բարձրանալով, թափօր կազմեցինք։ 50 ի չափ ղէնուորներ այդ թափօրին առջևէն կերթային։ Երկու ժամէն հազիւ մտանք մայրաքաղաքն Եթովպիոյ։ Յոյն լուսանկարիչ մը, երկու տեղ լուսանկարեց կայսեր ներկայացուցիչն և զիս։ Երբ հասանք մեզ համար պատրաստուած տան առջև, վար իջանք ջորիներէն, և ուղղուեցանք դէպի դահլիճը, որու պատշգամի երկու կողմերը կծածանէին Եթովպական յաղթական դրօշները։ Իսկ դահլիճին ճակատը կղարդարէր Ն. Վեհափառութեան մեծադիր պատկերը։ Վեհ. Մենելիք Բ. Կայսեր ներկայացուցչին շնորհակալութիւնս յայտնեցի և խնդրեցի իրմէ, որ փրկիչաւանդ ողջոյններուս հետ և ամենախոնարհ յարգանքներս մատուցանէ Վեհ. Կայսեր և Կայսրուհւոյն։ Յետոյ յանուն հոգևոր իշխանութեան ողջունեցի հայ գաղութին և օրհնեցի զիրենք։ Երիտասարդ մը, ի դիմաց հայ համայնքին, դրաւոր ուղերձ մը կարդաց յուզեալ շեշտով, իսկ հայ—բողոքականներէն մին՝ բանախօսութիւն մ՚ըրաւ։ Ստիպուեցայ նորէն ոտքի ելնել, բայց այս անգամ չկրցի խօսիլ։ Յուզուած էի։ Երկու վայրկենի չափ գամուած մնացի գրասեղանիս առջևն, ժողովուրդն իր ակնարկները սևեռած էր արտասուաթոր աչքերուս։ Օրհնեցի զիրենք, և իրենց բարեբաղդութեան համար ծառայելու տրամադրութիւնս յայտնեցի և ուխտեցի։ Յոյն մ՚ևս ի դիմաց յունաց ճառ մը խօսեցաւ։

«Նոյն օրը Վեհ. Կայսրը պ. Պաղտասարեանը կանչելով իր քովը՝ որպիսութիւնը կհարցնէ, ապա կհրամայէ, որպէս զի պատուաւորութեան մէջ ո՛և է պակասութիւն մը տեղի չունենայ և բոլոր ծախքերն հոգացուին Կայսերական անձնական դանձարանէն։ Ամսոյս 25 ին, Մենելիք Կայսեր բացարձակ արտօնութեամբը, այցելութիւն տուի Նորին Վեհափառութեան, հետս ունենալով Տեարք Յակոբ Պաղտասարեան, Մարգար Միրզաեան, Սարգիս Աղնաւորեան և Պետրոս Պոյաճեան։ Նախ՝ հիւրասրահն

առաջնորդուեցանք, ուր՝ Վեհ. կայսեր խորհրդականը՝ Մ. Իլլք ներկայանալով, յանուն Ն. Վեհափառութեան ողջունեց զմեզ՝ Ս. Խաչը համբուրելով և ապա առաջնորդեց զմեզ մեր հետեւորդներով դէպի կայսերական նորակառոյց պալատը. կայսրն իր բարձր դահոյից վրայ բազմած էր շրջապատուած ներքին, արտաքին և կրօնական դործոց բարձրաստիճան նախարարներովը, ամենքն ալ ոտքի վրայ. երբ մօտեցայ կայսեր, Նորին Վեհափառութիւն իսկոյն ոտքի ելաւ, գլխարկը վար առաւ և համբուրեց Ս. Խաչը, յետոյ սիրալիր ոեղմեց ձեռքս և հրաման ըրաւ, որպէս զի Նոտիմ լինձ համար պատրաստուած աթոռին վրայ. նստեցայ և սկսայ նախ շնորհակալութիւն յայտնել իր բարեացակամութեան և անհուն սիրոյն, զոր կրտածէ Հայոց և իր հովուին, և յանուն Ս. Պատրիարք Հօր ողջունեցի զինքը. կայսրը ժպտադին շնորհակալութիւն յայտնեց և խոստացաւ միշտ սիրել իր հովանիին ներքև դտնուող Հայերը: Յետոյ ոտքի ելայ և պատկառանօք մատուցի իրեն պատրիարքական պաշտօնական գրութիւններն և Ս. Միւռոնը: Կայսրն իսկոյն ոտքի ելաւ, առաւ ձեռքէս և համբուրեց Ս. Միւռոնը. յետոյ իրեն յանձնեցի Նոյն պատկառանօք՝ Բարթող փաշայի նուէրը, գրութիւնն և պատկերը: Կայսրն երբ տեսաւ Ս. դերեզմանը, ելաւ ոտքի, գլխարկը վար առաւ, խոնարհեցաւ, համբուրեց և սկսաւ հիացմամբ դիտել և շատ դոհ մնաց ու կրկնակի յայտնեց շնորհակալութիւնը: Վայրկեան մը լռութենէ վերջ, կիւրակէ օրը պատարագելու փափաք յայտնեցի իր Վեհափառ Թանկագին կենաց աղօթելու համար: Վեհափառ Կայսրը հաճութեամբ արտօնեց: 20 վայրկեան տևեց տեսակցութիւնը. հրաժեշտ առի Նորին Վեհափառութենէն և մեկնեցայ. մինիստրը մինչև արտաքին դուռն առաջնորդեց մեզ: Պաշտօնական այցելութիւններ տակաւ առ տակաւ տեղի կունենան, ամենուրեք սիրալիր ընդունելութիւն. կայսեր մինիստրին ալ այցելութիւն տուի. ինքն ալ օր մը վերջ փոխադարձ այցելութեան եկաւ: Կիւրակէ օր հանդիսաւորապէս պատարագեցի. Հայ գաղութը գրեթէ ամբողջովին ներկայ էր. ներկայ էին նաև յոյներ և հապէշներ:— Պատրիարքական կոնդակը կարդացուեցաւ. յետոյ «Սիրեցէք զմիմեանս» ընդանին վրայ քարոզեցի: Այսօր կամ վաղը Վեհ. Կայսեր Նորէն պիտի ներկայանամ և եկեղեցիի մը շինութեան արտօնութիւնը պիտի խնդրեմ. կյուսամ թէ յաջողիմ:

Վեսակիր Մկրտիչ Բեն. Զրդաեան.

Ատիս Ապապա, Մայիս 30.

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՀՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՑ

Հոգեւոր դպրոցի բարեփոխութեան մասին, Церкв. Вѣстникъ-ի № 27-ում կարդում ենք· Русское—Слово-ի № 162-ում տպուած դպրանոցի տեսչի նամակը իսկապէս մի կատարեալ մեղադրական թերթ է հոգեւոր դպրոցի դէմ: Նամակագիրը դպրոցն է համարում հովուական գործունէութեան և առհասարակ եկեղեցական կեանքի անկման պատճառը:

—«Կասկած չկայ, որ ներկայ հոգեւոր դպրոցը իւր նպատակին բաւարարութիւն չի տալիս: Դպրոցաւարտ հոգեւորականութիւնը կորցրել է իւր նշանակութիւնը և անջատուել ու հեռացել ժողովրդից, կաղմել է ամենքի և նոյն իսկ իրեն համար անհամակրելի մի առանձին դասակարգ, (կաստա): Դպրանոցական հովիւներն ու ուսուցիչները ոչ թէ ժողովրդական լուսաւորութեան գործի գլուխ չեն անցած, այլ ընդհակառակն յաճախ անյաղթելի արգելք են հանդիսանում ուրիշների լուսամիտ ձեռնարկութեանց: Նշանակելին այն է, որ մեր՝ վերածնութիւն և ազատութիւն ձեռք բերող ազգութեանց առաջնորդ է հանդիսանում լուսաւորուած հոգեւորականութիւնը, ինչպէս օրինակ ֆինլեանդացիների, լեհացիների, գերմանացիների, կովկասեան ազգութիւնների, մեր հնաճէանների և աղանդաւորների մօտ:

Ցաւալի բացառութիւն են կազմում էստոնները, լատիշները և պրաւօսլաւ ռուսները: Առաջին երկուսի և նրանց հոգեւորականների միջի անհամաձայնութիւնը նրանումն է կայանում, որ պատօրները դերմանացի են և բարօնների (իշխանների) կողմից նշանակուած, պրաւօսլաւների մօտ գլխաւոր պատճառը հանդիսանում է մեռած դպրոցը: Սկսա այդ պատճառով էլ հովուական գործունէութեան վերածնութիւնն էլ կախուած է մի միայն դպրոցից· դպրոցումն է հոգեւորականութեան և ժողովրդի փրկութիւնը: Արդեօք այս ոսկորները չէ՞ն կենդանանալ: Երեք անյոյս հիւանդութիւններով են վարակուած հոգեւոր դպրոցները և այլանդակում են ինքանց մէջ գերուած սաներին, բոլորովին չը պատրաստելով նրանցից հայրենիքի արժանաւոր զաւակներ:

Առաջին հիւանդութիւնն է ուսուցանելու արտաքոց և ոչ մի բանի նմանութիւն չունեցող դասաւանդութեան հին սխոլաստիքական ծրագիրը։ Երկրորդ հիւանդութիւնը դասակարգայնութիւն է, որը հակառակ ժամանակի և կատարուող դէպքերի, պահպանում է դպրանոցականի մակաբուծական տրադիցիաները։ Երրորդ հիւանդութիւնը հետևանք է նախորդի. դրանք դպրանոցական հանրակացարաններ են, որտեղ ցայսօր պահպանւում և ամրանում է անասելի ճնշող փարիսեցիական—բռնապետական կեանքի նիստ ու կացը՝ ստորացուցիչ և անբնական խնամակալութեամբ, որոնք անգութ կերպով համաչափում են 14 տարեկան մանուկներից սկսած մինչև 22 և 25 տարեկան հասակը, երբ երիտասարդներն աւարտում են ուսման դասընթացը»։

Բարեփոխութիւնը նախ և առաջ դպրոցը պէտք է դարձնի ընդհանուր կրթական հաստատութիւն, որտեղ աստուածաբանական դիտելիքները պէտք է աւանդուին 5-դ և 6-դ դասարաններում և երկրորդ պէտք է դառնան հանրամատչելի։ Հեղինակը երազում է այդ ձևով ստեղծել «ժողովրդական միջնակարգ դպրոց», որը միանգամայն համապատասխան լինի կեանքի պահանջներին, որովհետև գիմնազիօնը՝ իւր ծրագրով և թանկութեամբ ժողովրդին անմատչելի է։ Դպրոցը ժողովրդին մօտեցնելու նպատակաւ առաջարկւում է դպրանոցի առաջին դասարանը փոխադրել գաւառական հոգևոր ուսումնարանը՝ ստեղծելով այդպիսով գաւառական հինգ դասարանեան ուսումնարաններ և երեքդասարանեան նահանգական դպրանոցներ, որոնց պէտք է աւելացուի և զուտ աստուածաբանական գիտութիւնների երկու դասարանը։ Բացի դրանից առաջարկւում է ըոլորովին վերացնել հանրակացարանները։

—Պէտք է նկատած, որ վերոյգրեալ տողերի հեղինակի նկատած բացասական կողմերը բաւականին շատ դէպքերում նկատւում է և մեր կրթուած հոգևորականութեան մէջ։ Մեզ մօտ էլ նրանց որոշ դոյնի ներկայացուցիչները երկար ժամանակ ձգտեցին կատարեալ կանացնել դպրոցը և դպրանոցաւարտներին. եօթանասնամեան թուականների համեմատաբար ազատ ծրագիրը սխոլաստիքականացրին, հանրակացարանները դեռ մի քանի տեղ կան և միայն դասակարգայնութիւնից են ազատ մեր դպրոցները։ Կեանքի մէջ էլ մենք ունեցանք բազմաթիւ երևոյթներ, երբ դպրանոցականները փոխանակ գաղափարով ու գործով ոգևորուելու և հովուական վսեմ գործունէութեան ծառայելու, դարձան հոգևոր արհեստաւորներ, ծիսակատարներ, բացի կարիերայից ուրիշ շատ քիչ բանով ոգևորուեցին ու զբաղուեցին

և ժողովրդի աչքում այդպիսիները երբէք բարձր չեղան իրենց նախորդ՝ համեմատաբար աւելի քիչ ուսումնական ունեցողներից: Զարեաց պատճառը՝ բացի արտաքին բաղմաթիւ հանգամանքներից, արդեօք մասամբ էլ դպրոցների թերութիւններից չէ առաջ դալիս: Կարծում ենք, որ պատասխանը դրական է և այժմ երբ մենք կոչուած ենք լուսաւորութեան ընդարձակ գործունէութեան, արդեօք պարտաւոր չենք խելացի հոգատարութեամբ ուսումնասիրելու մեր դպրոցների դրական և բացասական կողմերը և օր առաջ ցանկալի ուղղութիւն և ծաւալ տալու նրանց:

Նոյն թերթը հաղորդում է, որ Ստաւրապոլում, երբ այնտեղի եկեղեցիներից մինում տեղի ունէր Կրիւշկով միսսիոնէր աւագ քահանայի և Լարիոնով ազանդաւորի մէջ ընդդիմախօսութիւն 500 ունկնդիրների ներկայութեամբ, խօսակցութիւնը սուր կերպարանք ստացաւ և հնածէս Լ. բացականչեց պրաւօսլաւներին դիմելով. «Դուք Աստուծոյ անունն անիծում էք, ձեր եկեղեցին անիծել է խաչելութիւնը, իսկ դու հայր Կ. աղօթում ես ըստ աւանդութեան ոտանայի». շատերը ոպառնալից աղմուկով յարձակուեցին Լարիոնովի վրայ, բայց նա ծածկուեց բեմի ետևը: Շնորհիւ հովուական յորդորների եկեղեցում բարեկարգութիւնը վերականգնուեց և բացի Լարիոնովից և նրա վեց համախոհներից՝ ամենքը թողին եկեղեցին և հեռացան: Քարոզիչ քահանան առաւել բարոյ համարեց փակել նրանց եկեղեցումն ու հեռանալ: Եկեղեցու բանալին նախ տրուեց մայր եկեղեցու աւագ քահանային և ապա ոստիկանապետին: Եկեղեցուց դուրս գալուց յետոյ ժողովուրդը կանգնեց դրան մօտ և փողոցից իրեն միացածների հետ կռվելով ոտագին ամբոխ, ոստիկանութիւնից պահանջում էին իրեն յանձնել հնածէսներին. հակառակ դէպքում ոպառնում էր բռնի դուրս քաշել նրանց: Քահանայը ժողովրդին համոզում էին խաղաղուել և ցրուել տները, բայց նրանց յորդորներն արդիւնք չունեցան: Մարմնաւոր իշխանութեան կարգադրութեամբ եկեղեցու կից հրապարակը շրջապատուեց զինուած զինուորներով: Հարկաւոր եղաւ դիմել հրազէնքի, որի ժամանակ ոպանուեցին և վիրաւորուեցին 50 հոգի:

Տխուր պատահար. որքան ցաւալի է, որ տեղական հոգևոր իշխանութիւնը այժ չունեցաւ զուտ եկեղեցական գործում և չը մերժեց զինուորական այժի այդ արիւնոտ միջամտութիւնը:

—Կարող ենք նկատել, որ բարոյական աւետարանական

ոյժ ունեցող հոգևորականութիւնը այդ ձևով չէր աշխատել համոզել հնածէաններին, ազատ կը թողնէր նրանց և իւրաքանչիւր քայլափոխում ցոյց տալով իւր գործի և դաւանանքի համերաշխութիւնը, առանց հրապարակական վիճաբանութեան կը կարողանար համոզել իւր ընդդիմախօսներին: Բայց ցաւալին այն է, որ հէնց Աւետարանի անոահման սէրն ու գործնական քրիստոնէութիւն է պակասում մեզ և դրա համար էլ այդքան բացասական հետևանքների է հասնում մեր նոր ձևի քարոզչութեան եղանակը քրիստոնէաների մէջ քրիստոնէութիւն տարածելիս:

Ս. Խ. ստորագրութեամբ մէկը, որ իրեն անուանում է ճգնաւոր և հեռացած «դժգոհութեան հովերով լեցուն պրաւօսլաւ եկեղեցուց» Ս. Պետ. Վեդոմոստի № 171 առաջարկում է եկեղեցական քարեկարգումների համար հետևեալ ծրագիրը: Եկեղեցական կեանքի հիմնական պակասութիւնը նրանումն է, որ հոգևորականութիւնը հանդիսանում է պետական պաշտօնէութիւն և վայելում կառավարութեան հովանաւորութիւնը: Այդ պատճառով հոգևորականութեան մէջ զարգանում է պաշտօնէականութիւն և առաջ է գալիս ծխականների և հովուի անջատումն:

«Ինձ երբէք չի ուրախացնում պետութեան կողմից մեր հոգևորականութեան ցոյց տուած աւելորդ հովանաւորութիւնը: Դա այն հետևանքը կունենայ, որ մեր հոգևորականութիւնը կը դադարի և շատ տեղ արդէն իսկ դադարել է երկրի աղը լինելուց: Այժմ մեր հովիւների մէջ նկատւում է ոչ ցանկալի մի ձգտումն՝ պետական չինովնիկ (պաշտօնեայ) դառնալու: Ես կարծում եմ, որ փայլուն կոճակներով և մուդիրներով (շքազգեստով) կրթուած երիտասարդ քահանաները, շուտով թոյլտուութիւն կը խնդրեն կօկարդ (գլխարկի նշան) և ուսանիշներ գործածելու: Նրանք իրենց այդ միջնորդութիւնը կը պատճառաբանեն նրանով, որ ժողովուրդը նրանց չի լսում, բայց եթէ նրանք դարդարուեն որոշ տարազով, ժողովուրդը կը սկսի կատարել նրանց պահանջները, որովհետև մեր ժողովուրդը ցայսօր չափազանց վախում է չինովնիկից՝ ինչպէս ծծումբից ու մեռաղից:

Չինովնիկ հոգևորականութիւնից ազատուելու համար հոգևորականութիւնը իւր պետական խնամակալութիւնը պէտք է փոխի ժողովրդական խնամակալութեան, որն ի դէմս երկրի ներկայացուցչական կազմակերպութեան (զէմստվոյի), իւր վրայ պէտք է վերցնի հոգևորականների նիւթական և իրաւատիրական

ապահովութիւնը։ Աստուծուն և մերձաւորին ծառայող հոգևորականութիւնը հասարակութեան աւելի է հարկաւոր, քան թէ պետութեան, այդ պատճառով էլ հոգևորականներին նիւթական ապահովողը պէտք է ժողովուրդը լինի։

Ժողովրդից որոշ ռոճկով ապահովուած հովիւները, ապատուած իրենց պաշտօնին անհամապատասխան գործերին ծառայելուց, հասարակութեան զարգացման և վերանորոգման գործում մեծ ծառայութիւն կը մատուցանէին։ Ես զարմանում եմ, թէ ինչու զէմստվօն չի աշխատում, որ հոգևորականներին պահելու գործն իւր ձեռքն անցնի։ Իւրաքանչիւր հովիւ պէտք է դառնայ զէմստվայնի գործիչ և հոգայ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման մասին։ Ինձ թւում է, որ զէմստվօն իրաւունք ունի իւր ժողովներում արծարծելու մեր հոգևորականների նիւթական և իրաւաբանական խնդիրները»։

„Образованіе“ ամսագրի Յուլիսի համարում Ալէքսանդր Եաբլոնովսկին գրում է.—

«Ես արդէն դէպք ունեցայ խօսելու Սերպուխովի եպիսկոպոս Նիկոնի հովուական գործունէութեան մասին, որը յարձակողական դաշն կապելով „Московскія Вѣдомости“ թերթի խմբագրի հետ, նրա հետ միասին կատարում էր կռապաշտական քարոզութիւն և հրաւիրում ռուս ժողովրդին ատելութեան և թշնամանքի։ Այժմ կրկին ու կրկին ստիպուած ենք դառնալ կրկին ռուսական եկեղեցու այդ գործչին, որովհետև նա բանաւոր քարոզներից անցաւ գրականութեան և ժողովրդին բաժանում է իւր հեղինակած գրքոյկները և կոչերը, որոնցով ռուս ժողովուրդը հրաւիրւում է աւերածութեան և վերջնականապէս ոչնչացնելու զէմստվօ, քաղաքային խորհուրդներ, շատ ազնուական ժողովներ, ուսուցչապետներին, իրաւաբաններին և բժիշկներին»։

Ես չեմ ուզում քննել, թէ ինչու Սերպուխովի սրբազանը մոռացութեան է տուել մեզ մեղաւորներիս՝ գրող մարդկանց. չէ՞ որ մենք էլ որոշ պատուղներ ենք. և ուզիղն ասած յարգելի սրբազանին անախորժ բոպէներ շատ ենք պատճառել։ Բայց և այնպէս պէտք է համոզուած լինել, որ այդ ներումն միմիայն արտաքուստ է՝ երևութական. որովհետև իւր կոչի մէջ յարգելի սրբազանը ռուս ժողովրդին հրաւիրում է «ոչնչացնել այդ թունաւոր ապականութիւնը», իսկ որովհետև պ. պ. գրողներին չի կարելի փոքր ի շատէ թունաւոր անպիտանութիւնից ուրիշ տեղ դասել, հետևապէս մեզ մեղաւորներիս էլ Նիկոն եպիսկոպոսը

իւր հոգածութիւնից ազատ չի թողել։ Բայց նա այնուամենայնիւ առանձին ուշադրութիւն է դարձնում պրոֆէսորների, (թէև ոչ ըստ արժանւոյն, որովհետև դրողներն աւելի ոտոր են)։

...«Դուք մեր դժբաղդ երիտասարդութեան անարժան դաստիարակներդ, բացականչում է Նիկոն եպիսկոպոսը, դուք դիտնական պրոֆէսոր կոչուածներդ, որ ձեր դրդումներով կործանել էք երիտասարդ կեանքերի հաղարեակներ»։...

Ձեր պղնձէ ճակատն ու ռնդեղջիւրի կաշին, որի տակ ոչ սիրտ կայ և ոչ խիղճ, յորդորի ոչ մի խօսքից ազդուել չի կարող։

Ուրեմն անէծք ձեզ վերայ, քաղաքական վիարիսեցիներ։

Ռուս մարդիկ, թափեցէք ձեզանից այդ ամօթալի լուծը։ Բարձրաձայն և համարձակ յայտարարեցէք, որ խլացնել կարոզանաք սեփական և այլոց դորդոռոցը, արթնացնել շուարած կառավարութիւնը, պահպանել իշխանութիւնը և ճնշել խռովութեան և դաւաճանութեան այդ սողունը, ինչ բարձրութեան էլ նա անարգաբար հասած լինի»։ Այսպէս է դրում Աստուծոյ սեղանի սպասաւորը, խոնարհ Նիկոն եպիսկոպոսը։ Գրում և տարածում է այդ կոչերը քաղաքներում և գաւառներում իւր հօտը կրթելու համար։ Եւ թող ներուի ինձ յանդգնութիւնս, եթէ ես էլ, որպէս հօտի անդամներից մինը, դիմեմ սրբազանին հետևեալ հարցով. դուք արդեօք առողջ էք, սրբազան տէր, որ դանակ էք դնում ձեր տգէտ մերձաւորի ձեռքը և ականջին ասում. «սպանի՛ր, սպանէ՛ր» խօսքերը։ Ռուս հոգևորականութեան պատմութեան մէջ միայն մի դէպք է եղել, երբ քահանան օրհնում էր դանակները և ցօղում օրհնած ջրով օտար թշնամու հետ կռուելու համար, դա Մելքիսեդեկ Զնաչիօ-Եաւորսկին էր, որ ապրում էր Ումանի կոտորածի ժամանակ, բայց նա էլ դանակներն օրհնում էր արտաքին թշնամու հետ կռուելու համար։ Իսկ դուք, յարգելի սրբազան, ձեր դաւանելին հրաւիրում էք ոչ թէ օտարների դէմ ապստամբուելու, այլ եղբայրասպանութեան, կոտորածի և ձգտումէք ձեր խաւար ու տգէտ և դժբախտ եղբօրնի Քրիստոս, Կայէն դարձնել։ Աստուածանից հայցեցէք, որ նա ձեզ բժշկի, սրբազան, աղօթեցէք ձեր առողջութեան համար և յիշեցէք, որ Մովսիսական վեցերորդ պատգամնէ՝ «մի սպանանեը։»

Ես չըգիտեմ, թէ ինչ աչքով կընայի սրբազանը իմ այս յանդգնութեան վրայ (կարող է պատահել, որ նա նոր բրօշիւր դրի ինձ կեանքից զրկելու անհրաժեշտութեան մասին), բայց ճշմարիտ ես հանաք չեմ անում, երբ ասում եմ խեղճ սրբազանի հոգեկան հիւանդութեան մասին։ Այո՛, նա հիւանդ է և ծանր հիւանդ,

և կարող է պատահել, որ նրա հիւանդութիւնն այն շրջանն է մտել, երբ այլ ևս ուշ է բժշկուելու մասին խորհելը: Կարո՞ղ էք ձեզ երևակայել՝ մի եպիսկոպոս, հոգևոր մեծ իրաւասութեամբ և իշխանութեամբ օժտուած, բացարձակ, որ ցերեկով քարոզում է ոչ թէ Աստուծոյ բանը, ոչ թէ աւետարանական ճշմարտութիւն, այլ ժողովրդին կոչ է կարդում ոչնչացնել զէմստվո, քաղաքային վարչութիւններ, ուսումնականներին, բժիշկներին և այլն: Մի՞թէ առողջ դրութեամբ կարելի է այդպիսի կոչեր անելու համարձակութիւն ունենալ: Հեշտութեամբ կարող է լինել, որ Նիկոն եպիսկոպոսի հիւանդութիւնը սկսուած լինի վաղուց, բայց նրա դէպի բժիշկներն ունեցած ատելութեան շնորհիւ՝ մերժել է բժշկական օգնութիւնը և այժմ անբուժելի դրութեան է հասել: Հոգևորականների շրջանում այդպիսի դէպքեր յաճախ են լինում, մանաւանդ կուսակրօնների մէջ. դեղ ընդունելն ու բժիշկների մօտ բժշկուելը մեղք համարելով՝ այդ մարդիկ միշտ անուշադրութեան են մատնում հիւանդութիւնը, մանաւանդ հոգեկանը և շարունակում են պաշտօնավարել ու քահանայագործել մինչև որ հիւանդութիւնը խիստ կերպարանք է ընդունում և նոյն իսկ տգէտներին նկատելի է դառնում: Ես յիշում եմ, Խակիևակի տաճարից ադամանտներ գողացող Կոստանկու դատավարութեան ժամանակ կարելի եղաւ պարզել, որ Կոստանկու հայրը գիւղական քահանայ էր և շարունակում էր քահանայագործել և խորհուրդներ կատարել կատարեալ խելագարութեան ժամանակն էլ: Հարբեցող լինելով, այդ դժբաղդ քահանան գիշերները բարձրանում էր զանգակատուն և վրդովուած զանգահարում էր մինչև որ գիւղացիք ու գեղջկուհիք կիսամերկ ժողովւում էին ամբողջ գիւղից եկեղեցու առաջ:

—Ի՞նչ պատահեց, ո՞րտեղ է հրդէհը, կանչում էին գիւղացիք երկիւղից դողդողալով:

Իսկ քահանան զանգակատնից պատասխանում էր.

—Հրդէհ առ այժմ չկայ, բայց դուք՝ գիւղացիներդ՝ լինած օղի բերէք: Եւ զարմանալին այն է, որ զանգահարութեամբ հաւարներից յետոյ էլ այդ քահանան երկար ժամանակ քահանայագործում էր... Արդեօք նոյն բանը չի՞ պատահել և այժմ Սերպուխովի եպիսկոպոս Նիկոնի հետ:

Մօտերքս Թիֆլիզում Վրաստանի նոր էկզարխոս Նիկողայոս եպիսկոպոսի կարգադրութեամբ հրաւիրւում է Վրաստանի հոգևորականների համաժողով՝ հոգևորականութեան և եկեղեցու կարիքների մասին խորհրդածելու:

Լրագիրներում լուր կայ, որ այժմս Պետերբուրգում Ս. Սինոդում քննւում է Վրաց եկեղեցու անկախութեան խնդիրը:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ossezvatore Romano-ի № 121-ում հրատարակուած է Լեոն XIII պապի հիմնած պապական բիբլիական մասնաժողովի առաջին որոշումը:

Մասնաժողովին առաջարկուած էր հետևեալ հարցը.—«Նեբելի է արդեօք կաթոլիկ մեկնաբանին սուրբ գրքի մի քանի տեղերում հանդիպող դժուարութիւնները լուծելու համար, երբ ըստ երևոյթին հաղորդւում են միայն պատմական փաստեր, պնդել, որ նրանցում մենք դործ ունենք լուս. կամ ենթադրական այնպիսի ցիտատների հետ, որոնք ներշնչուած հեղինակի ձեռքով չեն գրուած և առուուածանից ներշնչուած հեղինակն ի նկատի չունի ընդունել կամ հաւանութիւն տալ նրանց և որ նրանք կարող չեն մոլորութիւնից ազատ համարուել»: Մասնաժողովը պատասխանեց. թոյլատրելի չէ, բացի այն դէպքից, երբ եկեղեցու ընդունածի ու դատողութեան հետ ապացուցուած կլինի լուրջ փաստերով, 1) որ սուրբ գիրք գրողը առաջ է բերում ուրիշի խօսքերը կամ փաստերը. 2) և որ նա հաւանութիւն չի տալիս և չի ընդունում նրանց, այնպէս որ կարելի է շատ արդարացի կերպով նկատել, որ նա իրենից չի խօսում: Փետրուարի 13-ին պապը հաւանութիւն է տուել այդ պատասխանին և հրամայել է հրատարակել:

Նոյն մասնաժողովի երկրորդ քարտուղար Ֆրանցիսկեան Ֆլէմինգի նախաձեռնութեամբ Ֆրանցիսկեաններն էլ Դոմինիկեանների նման, որոնք Երուսաղէմում ունին բիբլիական բարձրագոյն ուսումնարան Լագրանժի ղեկավարութեամբ, ցանկանում են իրենց Ս. Փրկչի վանքում բանալ բիբլիական ճեմարան: Ապագայ հիմնարկութեան մէջ ի մէջ այլոց մատչութիւն կայ սուրբ տեղերի և Ֆրանցիսկեան աւանդութիւնների պաշտպանութեան յատուկ ամբիոն հիմնել:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Յունիսի 13—14-ին Հանովերում տեղի ունեցած Աւետարանական—ընկերվարական համաժողովն՝ պարզ արտայայտած քաղաքական տենդենցիայով իւր վրայ դարձրեց պահպանողականների ուշադրութիւնը։ Մշակելով ընկերվարական խնդիրները աւետարանական գաղափարների տեսակէտից, ինչպէս որ հասկանում են դերմանական բողոքականների յառաջադէմ մասերը և իրեն դլխաւոր նպատակն ընտրելով ընկերվարական տրամադրութեան զարգացումը, համաժողովն, ի դէմս իւր մի քանի անդամների, շատ որոշ կերպով կողմնակից հանդիսացաւ ժամանակակից ընկերվարականութեան աշխատանքի իրական եղանակի։ Այդ համաժողովն իւր վրայ դարձրեց պահպանողականների ուշադրութիւնը մանաւանդ այն պատճառով, որ մարդիկ աւետարանական դաւանութեան դրօշակի տակ գործող անձինքներից և հիմնարկութիւններից ընկերվարական ասպարիզում հանդէս գալն ու պաշտպան հանդիսանալը չէին լսել։ Տէրերի ու բանւորների փոխադարձ յարաբերութեան մասին փոխանակ ընդհանուր դատողութիւնների, փոխանակ մի կողմ սիրոյ և հոգատարութեան ոգու, իսկ միւս կողմն էլ իրենց վիճակով գոհ մնալու և խոնարհ լինելու պահանջի, որ այնքան ընդհանուր է ուղղափառ պատօրների քարոզներում, համաժողովը պարզի պարզոյ անցաւ իրական ընկերվարական քաղաքականութեան կողմը։ Քարտուղար Շնէմէլինգերի կարդացած հաշիւը խրախուսում է աւետարանական բանուորների խմբակցութիւնները, որոնք դադարել են նախաձեռնողների հետ «բարի տրամադրութեամբ համաձայնութեան գալուն հաւատալուց» և հասել են դասակարգային կազմակերպութեան գիտակցութեան։ Ուսուցչապետ Զիվիկինգը ապացուցանում էր պրոցէսիօնալ բանուորների միութեանց նշանաւոր լինելը և ընական էր դանում նրանց ձգտումը դէպի ռամկավար—ընկերվարական կազմակերպութիւն։ Բանուորը չի կարող քաղաքականութիւնից հրաժարուիլ, ասում էր նա. դասակարգային կազմակերպութեամբ նա մասամբ միայն հասնում է իւր նպատակին և այդ պատճառով արհեստակցական օժանդակութիւնը պէտք է լրացուի պետական օժանդակութեամբ։ Մի այլ ճառախօս բացատրում էր արհեստակցական (համքեարական) կազմակերպութեան բարձր բարոյական նշանակութիւնը նրա համերաշխութեան և փոխադարձ պահպանութեան սկզբունքներով։ Աւետարանական տեսակէտից

արդարացի դանելով բանուորական դասակարգերի կողմից իրենց շահերի պաշտպանութիւնը, համաժողովի անդամները միւս կողմից յանուն ընկերվարական սկզբունքների իրենց պահանջներն էին յայտնում և դէպի եկեղեցին: Ուսուցչապետ Բաումգարտէնը մատնանիշ եղաւ եկեղեցական հիմնարկութեանց մի ամբողջ շարքի վրայ, որոնք գործում են հակաընկերվարական կերպով, այսինքն վիրաւորում են աւետարանական ժողովրդի վոխադարձ կապակցութեան զգացմունքը:

Այս շարքումն էր դասում նա այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք արգելում են չքաւոր մարդկանց լիակատար մասնակցութիւնը եկեղեցական գործերում և խարութիւն են դնում հարուստների և չքաւորների մէջ, եկեղեցիներում աթոռներ վարձու տալը, չքաւորների խմբական մկրտութիւններն ու պատկաղրութիւնները, որովհետև նրանք միջոցներ չունին կանոնաւոր վարձատրելու և այդ խորհուրդները տան մէջ կատարել տալու, մի քանի օրէնքների վարձատրութիւնը, բանուորներին անյարմար ժամանակ ժամակարգութիւն կատարելը, ծխերի ոչ թէ տեղագրական(թաղերով)բաժանումն, այլ ըստ սոցիալական դրութեան, օժանդակութիւն ստացող անձերին եկեղեցական գործերում ձայնի իրաւունքից զրկելը և այլն և այլն:

Պրոֆեսիոնալ բանուորների Կեօլնի համաժողովում, որը կայացաւ անցեալ մայիսին, պարզուեց, որ այդ կազմակերպութիւնները զարգանում են մեծ յաջողութեամբ, որոնք կարողացել են միացնել 1¼ միլիոն բանուորներին, այսինքն ամբողջ բանուորական դասակարգի մի քառորդ մասը՝ որը մեծ գումարներ ունի իւր տրամադրութեան տակ՝ պարզուեց նոյնպէս և նրանց սերտ կապը քաղաքական կազմակերպութեան հետ: Բայց այդ լաւատեսութիւնը համաժողովի կողմից դէպի ընկերվարական—ռամիկավարները բաւական եղաւ Norddeutsche Allg. Zeitung-ին, յարձակուելու համաժողովի վրայ՝ մեղադրելով, որ նա չը մնաց կրօնական—բարոյական շրջանակում և խառնուեց քաղաքականութեան՝ կուսակցական դիրք բռնելով:

Тексты и разысканія
по
Армяно—Грузинской филологіи

Книга VIII

ГОСУДАРСТВЕННЫЙ СТРОЙ ДРЕВНЕЙ ГРУЗІИ И ДРЕВНЕЙ АРМЕНІИ

Томъ I

Изслѣдованіе П. ДЖАВАХОВА
Петербургъ 1905 г.

Մարդկանց՝ ինչպէս անհատների, այնպէս էլ ամբողջ ազգերի բարեկամութեան հիմունքը փոխադարձ ծանօթութիւն է: Որքան շատ ենք հանդիպում մեզ ծանօթ անձին, որքան աւելի է պարզւում մեզ համար նրա անցեալն ու ներկան, նրա ընդունակութիւնները ու պահանջները, նրա կարիքները ու բարիքների ընդհանրութիւնը մերինի հետ, նրա ցաւերի և վէրքերի նոյնութիւնը մեզ տանջող ցաւերի և վերքերի հետ, այնքան աւելի սերտ կապէ հաստատւում, այնքան աւելի մեծ է լինում մեր ծանօթութիւնը և նա աւելի շուտով փոխւում է սերտ բարեկամութեան, որը և հանում է փոխադարձ անձնազոհութեան: Ուզում ենք ընկերը դանել, դործ ունել՝ մեզ ցոյց են տալիս այս կամ այն մարդու վրայ. մենք նախ քան գործին անցնելը, պատասխանում ենք, որ չենք ճանաչում ցոյց տուած մարդուն, որ նախ պէտք է մօտից ծանօթանալ և ապա միայն՝ փորք ինչ ուսումնասիրելուց ու ընտրութիւնն հաստատելուց յետոյ մենք վճռում ենք մեր անելիքը: Ասացինք որ նոյն ձևով է հաստատւում նաև ազգերի բարեկամութիւնը: Որքան աւելի լաւ են ուսումնասիրում ազգերն իրար, որքան աւելի շատ կէտեր են դանում համերաշխութեան, փոխադարձ շահերի ընդհանրութեան, վիճակակցութեան և այլն, այնքան առաւել սերտ է լինում նրանց բարեկամութիւնը և նրանց կապն անխզելի: Ներկայ ժամանակի բարեկամութեան չափն ու աստիճանը և համերաշխութեան կարիքը որոշելու համար բացի վերոյդրեալներից շատ մեծ նշանակութիւն ունի ազգերի պատմական անցեալը, նրանց քաղաքակրթական ջանքն ու արդիւնքը, նրանց

ընտանեկան և հասարակական կարմակերպութիւնը, շրջապատողները, նրանց քաղաքականութիւնը և յաւակնութիւնները։ Որքան խելացի, բազմակողմանի է լինում անցեալի ուսումնասիրութիւնը, որքան լաւ են ծանօթանում նոր սերունդները իրենց նախորդների պատմական կեանքի հետ, այնքան էլ դիւրին է լինում նրանց և յետնորդների սերտ բարեկամութիւնն ու համերաշխ գործունէութիւնը։

Առաջաւոր Ասիայում՝ Եւրոպայի և Ասիայի կամուրջ կոչուած մասում հազարաւոր տարիներից իվեր ապրում է երկու ազգ, նրանց ծագումը նրանց պատմաբանները համարում են մի մարդուց, մի ընտանիքից և դարերից իվեր ապրել են իրրև հարազատ եղբայրներ։ Շրջապատող ազգերի քաղաքականութիւնը նրանց վերաբերութեամբ եղել է նոյնը, թէ հալածանք և թէ տառապանք միասին են քաշել և ուրախութեան ուրախակցել։

Այդ ազգերն անցենկացրել դրացութեան մէջ դարեր, բայց երբէք իրար արիւն չեն թափել, երբէք սահմանների ընդարձակութեան կամ իրար հաշուին աշխարհակալութեան համար արիւնհեղութիւն չեն ունեցել և չկայ մեր պատմութեան մէջ փոքր ի շատէ աչքի ընկնող մի սև էջ, որ հակառակն ապացուցանէր։ Այդ երկու ազգերը վրացիք և հայերն են, որոնք ապրել են միասեռակ, զարգացել իրար հետ և զօրացել ու թուլացել նոյնպէս շատ քիչ բացառութեամբ՝ դարձեալ իրար հետ։

Նոյն դրութիւնը դեռ շարունակւում է անփոփոխ։ Բայց փոխուել է մի բան.— մինչդեռ մեր նախնիք քաջ տեղեակ էին իրար անցեալին. մինչդեռ վրացի դիւանագէտն ու հոգևորականը ծանօթ էր հայի անցեալին և ընդհակառակն, այժմ այդ երկու ազգերի զաւակներս մեր անդունութեամբ և անհեռատեսութեամբ զանցառութեան ենք տուել այդ պարտականութիւնը և ընականաբար զարմանալի չէ, որ տգէտ և անհեռատես զաւակների դէթ մի և այն էլ վիչացած մասի համար դժուար չէր թշնամական դգացմունքներ ոնուցանելն ու ընթացք տալը։ Սակայն դարերի ժառանգութիւնը այդպէս հեշտ չի ոչնչանում և այն կողոպտելը տարիների գործ չէ։ Վերջին տարիների բացասական երևոյթները, որոնք արդիւնք էին արտաքին հոսանքի և ազդեցութեան, որոնց պատուաստման համար en masse երկու ժողովուրդների սրտում հող չկար և լինել չէր կարող, ծնունդ տուին նաև դրակ[illegible]ն պահանջների, աւելի մեծ չափով հետաքրքրուլու իրար՝ թէ ներկայ և թէ անցեալ կեանքով. պարզելու անցեալի և ներկայի կարիքները և միացած ուժով ու նոյն ճա-

նապարհով դիմելու դէպի լուսաւոր և լաւագոյն ապագան։ Այդ ուղղութեամբ և ոգով գրուած աշխատութիւն էր պ. Վերմիշեանի սիրուն աշխատութիւնը՝ «Վրաստանայոց յարաբերութեան նիւթեր վերնագրով» ռուսաց լեզուով հրատարակուած, որով յարգելի հեղինակը պարզեց անհեռատես չորինիստների մեղադրանքը և գլխաւորապէս իշխան Ճաւճաւաձէի գրքինը—հայոց մասին։ Այդպիսի ոգի և ուղղութիւն ունին ուսուցչապետ Մառի զուտ գիտական աշխատութիւնները, որով նա պատմական անցեալ յիշատակարանների միջից ծաղկաքաղելով, ցոյց է տալիս, թէ որքան մեծ է եղել հայոց և վրաց քաղաքակրթական կապը։ Անցեալում և ինչ ասուիճանի կարևոր է երկու ազգերի պատմական աղբիւրների, յիշատակարանների, արձանագրութիւնների և ներկայ հասարակական կեանքի ուսումնասիրութիւնը նրանց անցեալը լիակատար կերպով պատկերացնելու և պատմութեան թերի կողմերը փոխադարձաբար լրացնելու համար։ Այդ ձևի լուրջ աշխատութիւն է և Ի. Ջաւախովի վերոյգրեալ աշխատութիւնը, որը հակառակ հին աղբիւրների սակաւութեան և թերութիւնների, գալիս է պարզելու, որ վրա-հայոց քաղաքական զարգացումը սկսուել է նոյն կորիզից, զարգացել նոյն շաւղով, նոյնպիսի հիմունքներով բաժանուել են երկրի մասերը և նրա վարիչները, և նոյն ձևով կազմուել է երկրի տիրող իշխանութիւնը։ Եւ այլապէս լինել ինքն ըստ ինքեան չէր կարող, որովհետև նախապատմական դարերից սկսած մենք դրացի էինք իրար և այնքան սերտ կապուած մեր ցաւերով և ուրախութեամբ, մեր հասարակական և պետական շահերով, որ պատմագիրները միևնոյն հօրից են սկսում մեր ծագման նկարագիրը և Հայկին ու Քարթլոսին համարում հարազատ եղբայրներ։ Բայց մեր նպատակը առասպելանման նիւթերի պարզաբանութիւնը չէ, այլ այն, որ պարզենք Ի. Ջաւախովի ուշադրութեան արժանի աշխատութիւնը և մեր պատմական կեանքի զարգացման նոյնութիւնը դեռ շատ և շատ հին դարերից։

Ի. Ջաւախովի յիշեալ աշխատութիւնը նուիրուած է ց՝այսօր հազիւ շօշափած հետաքրքրական խնդրին՝ հին Վրաստանի և Հայաստանի պետական կազմակերպութեան լուսաբանութեան։

Այժմ միայն, այս աշխատութիւնը աչքի անցկացնելուց յետոյ, պարզւում է, թէ մենք ինչ աղօտ և հարևանցի հասկացողութիւն ունէինք մեր անցեալ ընկերվարական կեանքի և կազմի, նրա զարգացման հիմունքի՝—ոգոմի և մեր հին հասարակական—պետական կեանքի կազմակերպութեան մասին։

Հեղինակը արդարացի նկատում է, որ «Հռոմէական և Սասա-

նեան տէրութեան քաղաքականութեան վերաբերեալ խնդիրները և նրանց ունեցած ազդեցութիւնը Վրաստանի վրայ դեռ շոշափուած անգամ չեն և որ ինքը մտադրութիւն ունի այդ բանին նուիրել առանձին հատոր. նոյնպէս առանձին հատորի նիւթ է դարձրել քարթվելի ցեղերի բնակութեան տարածման տեղերը. «որովհետև յիշեալ խնդրի մշակութեան համար հարկաւոր է յատուկ լինգվիստիքական՝ (համեմատական լեզուագիտական) ճանապարհորդութիւններ, որ այժմ անկարելի էր թւում»:

Այդ պատճառով ահա ներկայ հատորը նուիրուած է յատկապէս հին Վրաստանի և Հայաստանի պետական կազմակերպութեան: Այնուհետև յիշատակում է այն սակաւաթիւ գրական աղբիւրները, որոնցից օգտուել է: Վրաստանի հին անցեալի համար որպէս լաւագոյն և համարեա միակ աղբիւր ծառայել է Ստրաբօնը և մասամբ Քսէնոֆոնը, իսկ Հայաստանի համար ի նկատի է ունեցել Փաւստոս, Ղազար Փարպեցի և Եղիշէ:

Վրաստանի վերաբերութեամբ բերում է Ստրաբօնի հետևեալ հատուածը.—«Զորս տեսակ մարդիկ են ապրում այդ երկրում». ասում է Ստրաբօնը. «առաջինը և նրանցից գլխաւորը, որից թագաւոր են դնում մեռնողի (թագաւորի) ամենամօտ և աւագագոյն անձին. իսկ թագաւորից յետոյ երկրորդ անձնաւորութիւնը տեսնում է դատեր և առաջնորդում զօրաց: Երկրորդը բաղկացած է քուրմերից, որոնք միաժամանակ վճռում են և գրացիների հետ ունեցած վէճերը. երրորդը բաղկացած է նրանցից, որոնք պարապում են պատերազմական գործերով և երկրագործութեամբ, իսկ չորրորդը բաղկացած է հասարակ ժողովրդից, որոնք թագաւորի ստրուկներ են և թագաւորի կենսական անհրաժեշտ պիտոյքներն են հոգում: Նրանց բոլորի (Իբերիայի բնակիչների) գոյքը ընդհանուր ցեղական է. կառավարում և կարգադրում է այն՝ ցեղի աւագը: Այսպէս են իբերներն ու նրանց երկիրը»: Յարգելի գիտնականն այստեղից եզրակացնում է, որ քրիստոնէական շրջանի առաջին դարու սկզբին Վրաստանում մասնաւոր սեփականութիւն գոյութիւն չունէր, որ կալուածքը կազմում էր ընդհանուր ցեղական սեփականութիւն: Ցեղը կազմում էր այն ժամանակուայ վրաց հասարակական կազմակերպութեան հիմունքը, որ թագաւորի իշխանութիւնը նման էր իւրաքանչիւր ցեղի աւագի իշխանութեան և տարբերութիւնը միայն կայանում էր նրանում, որ թագաւորը միևնոյն ժամանակ այն ցեղի աւագն էր, որը իրաւունք ունէր իրեն միջից թագաւոր դնելու: Այսպիսով ցեղը և ցեղական

կազմակերպութիւնը հիմք պետք է համարուի ոչ միայն հասարակական կազմակերպութեան, այլ և Վրաստանի թագաւորական իշխանութեան:

Պարզաբանելով, որ մեփե և խելմծիփե վրացերէն բառերը գործածութեան մէջ են մտել աւելի ուշ և երբէք թագաւոր բառի միտք չունին հին ձեռագիրների մէջ գործածուած միջոցին, վրաց պատմութիւնից բերում է հատուածներ, որտեղ թագաւորը կոչուած է մամասախլիսի (տանուտէր)—Մցխէթայի տանուտէր: Շարունակելով իւր գիտական խուզարկութիւնները, երևում է, որ իւրաքանչիւր գիւղի աւագը և գլխաւորը պաշտօնեան կոչւում էր նոյնպէս տանուտէր և դատաւորներ ընտրւում էին պալատում կրթուածներից կամ այնտեղ եղածներից, հոգևորականներից, լաւ և մեծ վաճառականներից և կամ գիւղական լաւ տանուտէրներից: VII—X դարի մամասախլիս բառին փոխարինում է մքաւարի (գլխաւոր) կամ թաւի (գլուխ). ինչպէս օրինակ երիսքաւի, (ժողովրդապետ), ցիխիսքաւի (բերդապետ), խէվիսթաւի (ձորապետ):

Այսպիսով մենք գործածուած ենք տեսնում տանուտէր բառը հետևեալ ձևերով. տանուտէր գիւղի, տանուտէր Մցխէթի, տանուտէր Վրաստանի, հետևապէս միևնոյն անուն կրող մարդիկ իրարից տարբերւում էին մի միայն իրենց իշխանութեան սահմանների մեծութեամբ և ցեղական կազմակերպութիւնը Վրաստանում ոչ թէ միայն հասարակական, այլև պետական կեանքի հիմքն էր կազմում:

Այնուհետև յարգելի գիտնականը որոշում է, թէ ինչպէս էր բաժանւում հին Վրաստանը և ինչն էր կազմում բաժանման հիմքը: Բաժանման գլխաւոր հիմքը կազմել է (տուն) սախլի հասկացողութիւնը, որը գործ է ածուել ոսվորական տան նշանակութեամբ, բայց տրուել է նաև ամբողջ գիւղի, ձորի և ցեղի կալուածքին: Պարզելով Սոփելի բառի հին նշանակութիւնը, որը միանգամայն համապատասխան չէ ներկայ հասկացողութեան, որ հին ժամանակ սոփելի նշանակում էր երկիր, աշխարհ, իսկ գիւղի համար գործ էր դրւում դաբա բառը, որ ամրութիւն ունեցող գիւղը կոչւում էր քաղաք և հանդիսանում էր որպէս ամրոց պաշտպանութեան համար, կամ որպէս վաճառականութեան կեդրոն: Այսպիսով պարզաբանելով Վրաստանի հին անցեալը, երկրի բաժանումը և պետական կազմակերպութիւնը, գտնում է, որ դեռ քրիստոնէական առաջին դարում Վրաստանում և Հայաստանում գոյութիւն ունէր Ասորա—Իրանական առևտրական կուլտուրան և հասարակական կեանքը:

(Շարունակելի).

Ե. Ծ. Վ. Մ.

ԵՒՐՈՊԻՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅՆԵՐՈՒ ՀԱՑԵԱՅՑԸ ԲՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Նուէր

Նազելի օրիորդ Մարիմայ Յ. Միւնէնտիզեան

Դուք, օրիորդ, նշանաւոր արհեստագէտ Յովհաննէս Միւնէնտիզեանի զաւակ, հայկական դաստիարակութեան մեծացուցած էք և ֆրանսականը, այսինքն, ինչպէս ձեր մայրենի լեզուն էք սորվել, այնպէս էլ ֆրանսական լեզուն. որ մեր ազգայնոց դաստիարակութեան մի զարդն է ձեր մատղաշ հասակին ժամանակ, ինչպէս էր անցկացած ժամանակներուն՝ իտալերէն լեզուն, որուն յաջորդեց ֆրանսերէնը. ֆրանսերէնին էլ անգլիարէնը, այսօր էլ այդ երեք եւրոպական լեզուներուն յաջորդած է գերմաներէնը, որու փիլիսոփայութեան մասին էր մեր խօսակցութիւն անցած օրուայ մեր գիշերային տեսութեան ժամանակ։ «Ձեր այն հարցին թէ ինչ է materialisme, նիւթապաշտութիւնը, *այսինքն այն փիլիսոփայութիւնը՝ որ ամեն շնչաւոր և անշունչ արարածները, կամ թէ գործարանաւոր և անգործարանաւոր մարմինները նիւթէն առաջ եկած է համարում, ձեր ուշքն է գրաւել կարդալով լրագրերում, մանաւանդ* Սուրհանդակի. *Ծ. Մ. Գարաքաշեանի վարքագրութիւնը, թէ նա* Բիւխնէրի «Force Matiere» Ուժանիւթ *անուն գիրքը կարդալով խելքը գրաւուել է նիւթապաշտական փիլիսոփայութենէ և իր ուխտն ու կոչում դէն քցելով եղել է նիւթակրօն, այսինքն նիւթն է ընդունել արարիչ ու ստեղծիչ տիեզերքի, ուրանալով հոգեկանութիւնը, այսինքն հոգին և աստուածութիւնը։*

Այդ հարցիդ, նազելի օրիորդ, թէև կարճ ու անորոշ խոսքերով պատասխան տուի ձեզ այն գիշերաժամուն, սակայն այնքանով գոհ չեղաք և աւելի երկար և որոշ պարագայներով խնդրեցիք ինձմէ, որ տեղեկացնեմ ձեզ այդ մասին, ես էլ ձեզ գրով տալ խոստացայ և ահա հոգս

անձիս տալով՝ կատարեցի խոստմունքս։ Սակայն այդ ձեր հարցին, ձեզ և ձեզապիսիներուն գոհարար պատասխան, այսինքն ծանօթութիւն տալը եւրոպական փիլիսոփայութեան վրայ շատ հեշտ բան չէ և ոչ էլ դիւրալի, վասնզի ես էլ ունեմ իմ հայեացք քրիստոնէութեան վրայ և այդ իմ հայեացքով պէտք է որ, կամ պարտք է ինձ ծանօթացնել ձեզ այդ եւրոպացի փիլիսոփաներուն հայեացքը քրիստոնէութեան վրայ։

Վերևը ասացի, որ մեր նախորդ սերնդին դաստիարակութեան մի զարդը իտալերէն կամ լատիներէն լեզուն էր։ Այդ լեզուն մեր մէջ բերեց հռոմէական քրիստոնէութիւնը. ապա ինչպես ֆրանսերէնը՝ այդ լեզուին գիտութիւնն էլ մի տեսակ անտարբերութիւն բերաւ դէպի քրիստոնէութիւն և զանազան դրական մարդկանց վարդապետութեանց ըմբռնում։ Ֆրանսերէնին յաջորդեց, ասացի, Անգղիականը, որ յայտնի է թէ բողոքականութիւն և դրամ բերաւ մերայնոց ոմանց։ Մեր օրերում էլ գերմանական լեզուն Հ. Մ. Գարագաշեան՝ Հայկական և Եւրոպական լեզուներուն հմտութիւն իրան դրամագլուխ արած՝ նիւթապաշտութիւն բերաւ կամ նիւթապաշտութեան վարդապետին անունը և գործը, գերմանական փիլիսոփայութեան անունով։ Բայց իմ այդ մասին տալու պատասխանիս կամ ծանօթութեան մէջ չմտած, մենք մեզուսեզ հարցանենք թէ, ինչ բանէ, կամ ինչ պատճառով այդ հակաքրիստոնէական շարժում առաջ է եկած քրիստոնեայ Եւրոպիոյ մէջ և նախ այդքան պէտք է որ գիտենանք, թէև շատ բան հարկաւոր է գիտենալ՝ բանի խորն իմանալու համար։ Ըստ իմ գիտութեան, Եւրոպիոյ քրիստոնէից հայրապետը, որ պապ է կոչւում Հռոմայ, ինքնիրան աստուածացնելն է, ինչպէս արաւ Ինոովկենտ Գ. պապը, իսկ Գրիգոր Է. ուղեց և եղաւ բացարձակ կայսր և պապ։ Գերմանիոյ Հենրիկ կայսրը՝ ոտները բոբիկ իր դրան առաջ կանգնեցուց ապաշխարելու դատապարտելով։ Պապերն արքայութեան դռները բանալու համար, քաւարանի մէջ ապաշխարող մեղաւորներն ազատելու համար դրամով ներողութիւն

վաճառեցին։ Ի՞նչ եմ ասում։ Ամեն մարդ, որ առանց իր դայքէն կամ հարստութիւնէն մի մասն տալու եկեղեցուն, մեռնէր, որն ասումէ առանց արձակման կամ թողութեան մեռնել, զրկուած էր հաղորդութիւնէ և թաղելութիւնէ։ Թէ որ մէկն էլ մեռնէր առանց կտակ անելու, պէտք էր որ մեռնողին ազգականք եպիսկոպոսէն խնդրէին, որ իրանց հետ միասին միջնորդներ անուանէ՝ որոշելու համար ինչ որ մեռնող անձը պարտաւոր էր տալու, թէ որ կտակ արած լինէր։ Դեռ աւելին կայ։ Մի մարդ չէր կարող առագաստ մտնել իր պսակուածի հետ առաջին, երկրորդ և երրորդ գիշերներ առանց հրաման գնելու, կամ դրամ վճարած լինելու եկեղեցուն ևայլն.[1])

Այդ կերպերով Հռոմայ եկեղեցու պետերը՝ իրանց ժողովրդներէ դրամ կորզելուց յետոյ, նոյն այդ ժողովրդներու համար հաւատալիք հաւատալեաց վրայ աւելցուցին, ինչպէս որ մինչև այս օր էլ կան, և այդ հաւատալիք դաւանել տալու համար հարիւրներով միաբանութիւն հաստատեցին և հազար հազարներով էլ անկին, անորդի զանազան կարգի կարգաւորներ շինեցին, կոյս աղջկունք և ազապ կանայք, այն աստիճան որ, այդ հաւատալիք՝ ժողովրդներուն քթերնէն, պնչերնէն դուրս եկաւ։ Ալբիգինեցիք ԺԸ դարուն, Վալդոմեանք ԺԳ դարուն թրատուեցան, ջարդուեցան։ Սաւոնարոլ իտալացի Դոմինիկեանը ԺԷ դարուն. Յովհաննէս Հուս նոյն դարուն ողջ ողջ այրուեցան, մինչև որ Լուտեր Օգոստինեան կարդէն, Գերմանիոյ մէջ ժողովրդները ոտքի հանեց Հռոմայ եկեղեցուն դէմ բողոքելու և բողոքեցին ու եղան բողոքական՝ երսուն տարի հռոմէական քրիստոնեայներու հետ պատերազմելէն յետոյ։ Բայց բողոքականք էլ թէև պրծան Հռոմայ եկեղեցու անիմանալի հաւատալիքէն, նոյն եկեղեցու աններողական դրոշմ իրանց ճակտէ չջնջուեց։ Երիցականք Սկոմիայում իրանց երկարատև քարոզներով, անգլիական եկեղեցին իր պաշտօնականութեամբ, Լուտեր և Կալվին էլ իրանց կարգին,

1) Մոնտէսկիէօ, Ոգի Օրինաց. գիրք ԻԸ. գլ. ԺԴ. էջ 517։

իրանց համահաւատ չեղողները հալածեցին, կոտորեցին, իրանք էլ կաթոլիկներու նման հաւատաքննիչ եղան. թէև ս. գիրքն ժողովրդական և ամեն մարդ էլ իր հաւատքին տէրն արին։

Եւրոպիոյ քրիստոնէական կամ եկեղեցական իրողութեանց այդ հանգամանքում, եկեղեցու հաւատալեաց դէմ յարձակման կոչնակը Անգլիայում ածեցին, Լof անուն փիլիսոփան՝ առաջինն եղաւ կրօնքը՝ իր տարրաքննող և խորատես խելքին ենթարկողը և «փորձ մարդկային իմացողութեան վրայ» անուն գիրքը հրատարակեց, որով rationalisme հաստատողն եղաւ, այսինքն բանաւորականութիւնը, որ մերժում է Յայտնութիւնը և պնդում է բանականութեամբ ամեն բան բացատրել։ Դրան հետևողն եղաւ Ֆրանսացի Գօնտիլեակ անուն փիլիսոփան, որ այդ վարդապետութիւնը Ֆրանսիոյ մէջ տարածեց։ Բէյլը անուն Ֆրանսացին, ինչպէս նաև Շէֆտեբուրֆ անգլիացին. Scepticisme, սեպտիկականութիւն, այսինքն տարակուսական վարդապետութիւնը, որ պնդում է թէ մարդս անկարող է ճշմարտութեան հասնել։ Այդ վերջինը եկեղեցու հրահանգները հեգնեց ու ծաղրեց՝ ինչպէս նաև Յայտնութեամբ հիմնուած կրօնքները, որուն շինած գրքին անունն է. մարդկանց, բարուց, կարծիքներուն, ժամանակներու բնութեանցոյց գործերը, որուն աշակերտներն եղան Վոլտէր և ֆրանսական encyclopédiste-ները։ Այդպէս իրարու ետևէն մի շարք գրական մարդիկ աւելի յանդգնութեամբ հարուածեցին եկեղեցու հաւատալիքը իրանք իրանց Deiste ասուսաեան անուանելով, որոնք երեք անձով մի Աստուծոյ գաղափարի դէմ էին և միայն մի գերագոյն Էակ էին ընդունում։ Եղան փիլիսոփաներ Անգղիայում, որոնք մինչև անգամ նոր կտակարանի վաւերականութիւնը ուրացան և միայն pantheisme, այսինքն Ամենասուածութիւնը իրանց համար նշանակութիւն ունեցաւ։ Մի անձնաւոր Աստուծոյն և հոգւոյ անմահութեան հաւատն իրանց անապաշտութիւն թուեց։ Այդ փիլիսոփայներուն և իրանց նմաններուն գրուածքները թարգմանուելով ֆրանսացի գրական մարդ-

կանց ձեռքով, տարածուեցան, որոնք այդ տեսակ փիլիսոփայութեան մէջ դերազանցեցին իրանց վարպետները, որոնց պետն էր Վոլտէրի բարեկամ լորդ Բոլինգբրոկ: Դա իր ազգի մէջ ամենէն հանճարաւոր մարդն էր, քաջագրիչ ու ծանօթ էր մեծամեծներու հետ և նրանց մէջ տիրող խօսակցելու կերպին. բայց կրօնք և բարոյականութիւն չունէր: Պատմութեան ուսման վրայ գրած թղթերում, դրդուեց նրա առաքինութեան հաւատքը և անշահասէր հայրենասիրութիւնը, ինքնասիրութիւնը գլխաւոր շարժիչ համարելով ամեն տեսակ գործերու: Անգլիոյ երկու ամենամեծ պատմագրերը Կիբբոն, Հռոմայեցոց վատթարութեան և կործանման պատմութեան հեղինակը 1791 թ. և Հիւմ սկեպտիկեան փիլիսոփան, որ Անգլիոյ պատմութիւնն է գրած: Դրանք երկուսն էլ ֆրանսական ազդեցութիւնն էին կրած և մտերիմ յարաբերութեան մէջ էին Վոլտէրի և Փարիզու ազատախոհ մարդկանց հետ: ԺԶ. դարում նշանաւոր ֆրանսացի նիւթապաշտներն էին Հոբբ, Հոլբաք, Լամէդտրի, Դիդրոs, բայց այդ անաստուած փիլիսոփայութեան դէմ ղինուեցան ամեն ժամանակ երևելի փիլիսոփաներ: Դրանց վրայ շատ երևելի անուն ունէին իրանց գրականական ազդու կարողութեամբ, Վոլտէր, Մոնտեսկիիո և Ռուսսո, որոնց գրականական գործերը հիացուցիչ ոճով գրուած, ողջ լուսաւորուած եւրոպացիք կարդացին և որոնք բոլոր միւսներու վրայ աւելի նպաստեցին Հռոմայ եկեղեցու աւանդական գաղափարներու կերպափոխութեան, ինչպէս նաև իշխանութեան, արդարութեան, նախապաշարմանց ջնջման և ընկերական կեանքի հինումին սովորութեանց վերնալուն: Դրանց բռնած ճամբան իրարմէ տարբեր էր, սակայն նոյն և մի նպատակին էր տանում: Վոլտէր՝ 1692. 1778, կռուեց խելքի ու բանականութեան զէնքերով՝ հինցած, մաշած կարծիքներու դէմ: Մոնտեսկիիո. 1687—1755. հատատամիտ և վսեմախոհ գրական մարդ, ցոյց տուեց դոյութիւն ունեցած բաներուն անհամութիւնն ու անշահութիւն, դրանք լաւացնելուն փոխակերպելու դիտաւորութեամբ: Իսկ Ռուսսո՝

1712—78. մաքառեց իր ժամանակի հանգամանքներու դէմ։ Հրապուրիչ նկարագրութեամբ Հռոմայ եկեղեցու կարգաւորութեանց դէմ, որտի ու զգացմունքի մի հաւատ քարոզեց, իշխանութեան և ժողովրդի միջև համաձայնութեան համար դաշնադրութիւն անունով գիրք շինեց, մարդկանց կարգերու անհաւասարութեան վրայ ճառեր, և մարդկային ընկերականութեան համար մի պարզ և դիւրալի բնական կեանք ևայլն։

Կան և ուրիշ երևելի փիլիսոփաներ ԺԷ դարուն պատկանող. որոնք են Վէրոլէմի պարոն Բագոն, որ փորձառական methode-ի ստեղծողն եղաւ և աքօլաստիքներու մոլորութիւնը ջնջեց։ Նոյնպէս Դէկարs, հռչակաւոր ֆրանսիայի փիլիսոփան, որ բնագէտ, երկրաչափ և հեղինակ methode-ի վրայ ճառախօսութեան և որուն ասածն է (je pense donc je duis)։ Դարդէմեոս այդ ֆրանսացի փիլիսոփայի լատիներէն անունն է, շատ աշակերտներ է ունեցած, որոնց մէջ գլխաւորն է Սպինոզան, որ ամենատուաժեան է ճանաչուած։ Ահա դա ինչ է ասում Քրիստոսի համար. Աստուծոյ յաւիտենական որդին Քրիստոս չէ. հապա Աստուծոյ իմաստութիւնը, արդարութիւնը, ողորմածութիւնը, սէրը ևայլն, որոնք յայտնուում են տիեզերքում՝ նախ մարդկային բանականութեան մէջ և մանաւանդ Յիսուս Քրիստոսի մէջ ևայլն։ Մի երևելի փիլիսոփայ էլ գերմանացի Լէյբնիցն է, որ լաւագոյն աշխարհներու դպրոցի պետն է եղած, դրա բնութեանցոյց առածն է թէ՝ «Ամեն բան լաւութեան համար է», այդ փիլիսոփան էլ հաշտարար եղաւ, ամեն բան միացուցել ջանք արաւ, նոյն իսկ բողոքականութիւնն էլ կաթոլիկութիւնն էլ։

Այդ Եւրոպիոյ ԺԷ. ԺԸ. դարերու փիլիսոփայներու հանճարներուն աղատօրէն հորդան տուողներն եղան՝ նախ լեհացի Կոպէրնիկ աստղաբաշխը. ապա Գալիլէոս հռչակաւոր բնագէտ, աստղաբաշխ և մաթէմատիկոս իտալացին, որ դիտականապէս աշխարհիս օրական թաւալում հաստատեց, յետոյ Իսահակ Նիւտոն՝ նոյնպէս երևելի մաթէմատիկոս, բնագէտ, աստղաբաշխ և փիլիսոփայ անգլի-

ացի, դա դառաւ ծանրութեան օրէնքը և լուսոյ լուծանելիութիւնը։

Եթէ դառնանք հիմա դէպի ԺԹ դար, այսինքն մեր ապրած դարում՝ փիլիսոփայներուն հայեացքն էլ ճանաչելու քրիստոնէութեան վրայ։ Պէտք է գիտենանք որ, փիլիսոփայութիւնն գերմանիոյ մէջ շատ դերազանցեց նախընթաց դարերու փիլիսոփայութեան, ուստի հարկ է որ նրանց մասին էլ խօսեմ։ Եւրոպիոյ մէջ ամեն դրութիւն, ամեն կարգաւորութիւն կրօնական է եղել, փիլիսոփայական է եղել և քաղաքական, իր հակադրութիւնն ու հակակարգաւորութիւնն ունի, և այդ ամեն դրութեամբ և կարգաւորութեամբ կրօնք, փիլիսոփայութիւն և քաղաքականութիւն իրարու մօտ, իրարու հետ աճում են, կան ու կը մնան և խաղաղութեամբ ապրում են, ուստի և վերևն իմ առաջ բերած անգլիական և ֆրանսական ԺԸ դարու փիլիսոփայութիւնք էլ իրանց հակագործութիւն ունեցան և հակագործներու գլխաւորներն եղան գերմանացի փիլիսոփաները, որոնց մէջ առաջին տեղը բռնողն է Կանտ, որուն գործերն են—պարզ բանականութեան քննադատութիւն, գործնական բանականութեան քննադատութիւն և դատողութեան քննադատութիւն. այդ երեք գրուածքներ շատ յարգի են։ Միաստուածութեան ցուցմունքն ու ապացոյցները այդ մեծախոհ մարդուն գրչով ամենախիստ քննատադրութեան են ենթարկուած և գրեթէ ամենքն էլ հերքուած ու ջնջուած։ Նոյնպէս և վերջ է դնում նա այն ազատարձակ շատախօսութեանց, որ խանգարում են ԺԸ. դարու՝ իբր փիլիսոփայական գրուած բաները։ Կանտ՝ վերահաստատեց կրօնական ճշմարտութիւնը, նոյն իսկ երորդութիւնը մեկնած է իբրև բարոյական ճշմարտութեան խորհրդապատկեր։ Քրիստոնէութիւնն աստուածային է, ոչ թէ իբրև գերբնական ցայտնութիւն, հապա իբրև վեհագոյն բարոյականութիւն։ Ընդդիմադրութիւնը շարունակեց ԺԸ. դարու փիլիսոփայութեան, թէև հին վարդապետութեանց շատ հաւատ չէին ընծայում, սակայն ակում էին նրանց բանաստեղծական, բաղմիմաստ և վսեմ ճշմար-

տութեան նշանացոյց համարել։ Այդ հայացքն ունեցան Դր Ուէss և Շիլինկ։ Մարդեղութեան վարդապետութիւնը օրինակի համար, ուրիշ բան չէ, ասացին, հապա Յիսուսի կրօնական վսեմութեան նշանացոյց և այլն։ Իսկ Շիլինկ իր սկզբունքը պարզելով մտաւորականին և իրականին նոյնութեան մէջ, վճռում է, որ պարզ մտաւորականութիւնը յայտնւում է մշտնջենապէս իրականութիւն լինելով, բայց թէ այդ մտաւորականութիւնը բացարձակ կերպով չէ իրականութեան մէջ, հապա միայն իր մտաւորականութեան գիտակցութեամբ։ Այդ վարդապետութեամբ ճանաչում էր և ընդունում Հայրը, Որդին և Սուրբ Հոգին։ Այդ յետադարձը՝ դէպի հին վարդապետութիւն շատ գրական մարդկանց ուրախացուց և ցնծացուց։ Աշխարհիս իմաստութիւնը՝ գորոզ հեթանոսը ենթարկւում է, մկրտւում է և դաւանում քրիստոնէական հաւատը, բայց ինչպէս վերևն ասուեց, դրանց դէմ էլ մի հակասաց վեր կացաւ. Ստրաւս անուն գերմանացին, որ ֆրանսացի Էրնեsտ Ռընանի նման դա էլ զննեց, պրպտեց անհաշտ կերպով վերը յիշուած փիլիսոփաներու վարդապետութիւնքը իր frիստոնէական վարդապետութիւն անուն գրքովը, նմանապէս Ֆիշs ասում է որ, բանը մարմին է լինում ամեն մարդուս մէջ, որ խղճմտութիւնն ունի իր միութիւն Աստուծոյ հետ և Աստուծոյ առաջ եսականութիւնն ու անձնականութիւնը՝ իրմէ մերժում է։ Հէկէլն էլ ասում է—եկեղեցին վարդապետում է ժողովրդային ձևով, ինչ որ քրիստոնէութիւնը սորվեցնում է գիտութեան ձևով, այսինքն աշխարհիս կամ մարդկանց լինելուցն է շարունակ Աստուծոյ մարդեղութիւն. և թէ մարդուս խելքը կատարելապէս զարգանալով, դադարելու է նայել Աստուծոյն իբրև մի օտար և արտաքին էակի և այլն։ Մի ուրիշ գերմանացի էլ Ֆօէրբախ անուն, կարծեց տեսնել քրիստոնէական կրօնի էութիւնը՝ մարդուս իրան մատուցած պաշտաման մէջ հայելւոյն առաջ մտապատկերելով իր խելքով և ինչպէս մի անաստուած գերմանացի իր մանրաղնին կողմն ունի, դա էլ Երրորդութիւնը ընտանիքի պատկերին նմանեցուց—ինչպէս է՝ հայր, մայր և

որդի և Մարիամն էլ, ասում է նա, պէտք է որ և սուրբ Հոգւոյն տեղը բռնէ։ Վերջն ու վերջը՝ ինչ որ նշանակութիւն է ստանում այսօր Եւրոպիոյ գրական և գիտնական մարդկանց մէջ, վերջնադարեան քրիստոնէութիւնն է, կամ թէ ըստ իրանց՝ քրիստոնէական միստուածութիւնը, որն ասում են իրանք, թէ օր օրի վրայ հաստատւում է, ծաւալում գիտութեանց կարևոր արդիւնքներէ օգտուելով, ճշմարիտ միաստուածեաններուն համակրութիւնը և օրէցօր իրանց թիւն աւելցնելով։ Այն մեծ հանճարն, որուն կարելի է նկատել նախորդ դարուն իբրև սկզբնարար և իբրև մարգարէ այդ վերջնադարեան քրիստոնէութեան՝ մի աստուածաբան կամ վարդապետ չէ, հապա հոգևոր գրական մարդ Լէսսինկ անունով, որ առաջինն է եղել նշմարող և որոշող յայտնապէս Յիսուսի Քրիստոսի հաւատքը՝ նոյն իսկ իր ասելովն իր մասին Աւետարանում, Աստուածացած Յիսուսի Քրիստոսի վրայ եղած հաւատքն է։ Նմանապէս այդ Լէսսինկն առաջինն է եղել հասկացող հոգւոյ կամ խելքի քրիստոնէութեան գոյութիւնը՝ գրի և կղերի միջնորդութիւնէ դուրս։ Նախորդ դարու ֆրանսացոց մասին չեմ խօսում, վասն զի դուք, կարելի է ինձմէ աւելի ծանօթութիւն ունիք, գիտէք անշուշտ, որ վիպականութիւնն ու սկեպտիկութիւնը շատ նպաստեցին կրօնական հակազդեցութեան։ Առաջինը՝ միջին դարերու վրայ չափէ դուրս զարմանք ցոյց տալով, երկրորդն էլ աւելի խորը փորելով՝ քան թէ նախորդ դարու փիլիսոփաները մարդկանց հոգիներու մէջ թողած վիհը կաթոլիկ հաւատքէ դադրեցնելով։ Կամ ամեն բանի կամ ոչնչի հաւատալ, այդ եղաւ կրօնի դէմ եղած հակադրութեան սարսափելի երկայրաբանութիւնը։

Բաւ համարելով այդքան բան Եւրոպայի փիլիսոփաներու վրայ խօսելն, մի փոքր էլ իմ փիլիսոփայութեան վրայ խօսեմ։ Մի քանի տարի առաջ, քեզ նման մի նազելի օրիորդ, որ այսօր տանտիկնուհի է եղած, բաւական ուսումունք առած լինելով Գատի գիւղի աղջկանց վարժարանում և կարդացած լինելով լրագրերում՝ բնապաշտ,

իրապաշտ, ցիրթապաշտ բայլն բառերը, ցանկաց իմանալ ինձմէ, թէ ինչ տեսակ փիլիսոփայութիւնք են դրանք։ Ես նրա հետաքրքրութիւնը մի աստիճան գոհացնելու համար, պատմական փիլիսոփայութեամբ գրուած մի քանի գիրք տուի կարդալու, որոնք մեծ հաճութեամբ կարդաց ու ճաշակն առաւ։ Այժմ էլ դուք, նաղելի օրիորդ, միևնոյն ցանկութիւն էք ցոյց տուած ինձ և ահա Ձեզ աւելի մանրամասնօրէն մի կարճ ծանօթութիւն տուի եւրոպացոց փիլիսոփայութեան վրայ։ Կարդացէք ու նորէն կարդացէք ու մտածեցէք, վասնզի իրաւ է որ, այդ իմ գրուածքն մտածել տուող գրուածք է և պէտք է մտածել։

Ես մեր հայոցս համար այդ զանազան տեսակ փիլիսոփայական և կրօնական հայեացքներու կարևորութիւն և նշանակութիւն չեմ տալ, վասնզի դրանք հռոմէական քրիստոնէութեան են ուղղուած և ոչ հայոց արևելեան եկեղեցուն։ Կարելի է որ եւրոպացոց համար շատ լաւ բաներ են եղած դրանք, կարելի է որ վատ բաներ էլ են եղած։ Այս քաջ գիտեմ, որ մեզ արևելցի որդոց համար մեր ազգայնութիւն չինող և գրեթէ երկու հազար տարի պահպանող ու ապրեցնող կրօնքը՝ բարբարոս ժամանակներում, ոչ մի փիլիսոփայութեան հետ չեմ փոխել և միշտ սրտիս խորքում պահելով, պաշտել եմ, պաշտում եմ և պիտի պաշտեմ, մեր Աստուածային դորձարար Ս. Սահակ Պարթևի այն կտակն, որ վախճանելիս Նա պատուիրել է յատուկ մեր նախնեաց հաւատարիմ Մնալ Ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեան, որ ասել է, «Որդեակք փոխանակ իմ Տէր հովեսցէ զձեզ և ինքնին վերակացու լինիցի ձեզ»։ Այդ ասել է, «Աւետարանի Աստուածը լինի ձեզ առաջնորդ։ Այո, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Գ. դարու քրիստոնեայ է, ոչ կաթոլիկ է և ոչ էլ օրթոդոքս, դրանց տրուած այսօրուայ նշանակութեամբ, ինչպէս ջանք են անում անել նրան այսօրուայ կաթոլիկներն ու օրթոդոքսները։ Գ. դարու կիսուն, երբ Հռոմայ եպիսկոպոսները իրանք իրանց եպիսկոպոսներու եպիսկոպոս անուանեցին և վեր առին հեթանոս քահանայապետի souverainpontif այսինքն

միահեծան քահանայապետի տիտղոսը՝ և իրանք իրանց տուած այդ պաշտօնով միջամտեցին բռնակամ որոշումներով միւս եկեղեցիներու գործերուն։ Տէրտուղիան, Իրէնէոս, Կիպրիան և բոլոր փոքր Ասիոյ եկեղեցականք, մանաւանդ Կապադովկիոյ Կեսարիոյ Ֆիրմիլիանոս եպիսկոպոսը, հեռատիկոններու մկրտութեան մասին եղած կռիւներուն 253—257 Հռոմայ Ստեփաննոս եպիսկոպոսին հակաքրիստոնէական արարքը պարսաւելուց և կշտամբելուց յետոյ, յանդգնութիւն և ժպրհութիւն է ասացին և տարակուսի մէջ դրին Հռոմայ աւանդութեանց ճշմարտութիւնը, որոնք շատ բաներուն ասացին, հակառակ են Երուսաղէմի եկեղեցու աւանդութեանց և այլն։

Արդ թէ որ Կապադովկիոյ Կեսարիոյ աթոռը՝ հպատակ չէր եղած Հռոմայ եպիսկոպոսին, էլ աւելի Վաղարշապատու աթոռը չէր կարելի որ հպատակ եղած լինէր Հռոմայ աթոռին. հետևաբար պապական հայոց կարծիքական պնդապահանջողութիւնը ամենևին տեղիք չունի իրանց պապական կամ՝ կաթուղիկէ լինելու արդարացուցման՝ Գրիգոր Լուսաւորիչ կաթոլիկ էր ասելով։ Ոչ թէ միայն պապական կաթոլիկ չէր նա, հապա նաև այն եկեղեցուն էլ չէր պատկանում, որուն մէջ մարմնաւոր իշխանութիւնը սուրը ձեռին մտել էր և կարգաւորել էր պահանջում։

Պատմագրեց

Մարկոս Աղաբէգեանց

Պոյանի գիւղ 1903 Դեկտեմբեր 26.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Պրոֆ. Ի. Դ. Օրբանսկի

ԳԼՈՒԽ II.

Յատկութիւններ, որոնք թէ գիտակցութեան եւ թէ բնութեան համար միեւնոյն են:

Հոգեկան ու ֆիզիքական աշխարհները ոչ թէ ընդհանուր շատ կէտեր ունին և փոխադարձ կապերով կապուած են իրար հետ, այլև ունին ընդհանուր շատ տարրեր և յատկութիւններ։

Ինչպէս յայտնի է, բնութեան մէջ ոչ մի նիւթական երևոյթ չի կարող հասկանալի դառնալ առանց տարածութիւն երևակայելու։ Այսպիսով իւրաքանչիւր առարկայի ձևը ոչ այլ ինչ է, եթէ ոչ տարածութեան որոշ ձև. շարժումն անժխտելի կապուած է տարածութեան հետ և ինչպէս յայտնի է, ժամանակակից բնագիտութիւնը ձգտում է բոլոր ֆիզիքական, քիմիական, և բիոլոգիական (կենսագիտական) պրոցէսները (գործողութիւնները) բացատրել շարժման զանազան ձևերով։ Հռչակաւոր Լապլասը երազում էր գտնել մի ընդհանուր բանաձև (ֆորմուլայ) որով կարելի լինէր արտայայտել բոլոր այն գործողութիւնները (պրոցէսները), որոնք կատարւում են բնութեան մէջ։ Այդ պատճառով առաջ է գալիս շատ հետաքրքիր մի հարց. տարածութեան մասին հասկացողութիւնը ինչ չափով կարող է գործածուել հոգեբանական պրոցէսների շրջանում։ Ինքնագիտողութիւնը կամ մեր մէջ կատարուող հոգեկան երևոյթների անմիջական վերլուծութիւնը այդ հարցին բացասական պատասխան է տալիս։ Քննելով մեր սեփական մտքերը, մտապատկերները և այլ հոգեկան տարրեր, մենք չենք կարող երևայկայել այդ մտապատկերները որպէս տարածական ձև ունեցող։ Ճիշտ նոյն ձևով էլ մենք չենք կարող մտածել նրանց մասին, որպէս տարածութեամբ իրարից բաժան երևոյթների մասին։ Մեր

գլխում ինչքան էլ խառնուած լինին մտքերն ու մտապատկերները, մենք չենք կարող երևակայել մեզ այդ բոլորը իբրև կոյտ։ Որպէս զի կարողանանք երևակայել նրանց բաժան բաժան, մենք ստիպուած պէտք է երևակայենք ժամանակը, դիմենք ժամանակի օգնութեան։ Այսպէս ահա, ինքնադիտողութիւնը հոգեկան աշխարհից վանում է տարածութիւնը։ Բայց այդ վճիռն անմիջապէս փոխուում է, հէնց որ անցնում ենք ինքնադիտողութիւնից հետևեալ ձևի՝ ուրիշ մարդկանց հոգեբանական երևոյթների յատկութիւնների վերլուծութեան։

Իրապէս քանի որ մարդս հոգեկան աշխարհի մասին իւր ծանօթութիւնը սահմանափակում է ինքնադիտողութեան սահմաններով, նա ստանում է շատ թերի՝ սաղմնային ծանօթութիւն հոգեկան կեանքի մասին։ Բայց հէնց որ դիտողը մտքով փոխադրւում է իւր մերձաւորի ներքին աշխարհը, հիմք ունենալով այն՝ որի վրայ հիմնուած է ամբողջ հոգեբանութիւնը, որ այն բոլորն, ինչ որ կատարւում է իրեն սեփական հոգում, կատարւում է նաև ուրիշ մարդոց հոգւոյ մէջ. միայն այդ լուռ և բոլորից ընդունուած չափով, որ բոլոր մարդկանց հոգեկան կեանքը նոյն է. հոգին կարծես ազատւում է անհատական կեանքի նեղ շրջանակներից, փոխադրւում է ամբողջ մարդկութեան և դառնում, թէև որոշ չափով, ինչ որ առարկայական։ Անհատական ինքնադիտողութիւնը ընդարձակւում է և դառնում խմբակցական ինքնադիտողութիւն։ Այդ վերջինը մեր հոգեկան կեանքում բաց է անում այնպիսի յատկութիւններ և կողմեր, որոնք անհատական ինքնադիտողութիւնից խուսափում են։ Այդ յատկութիւնների թուին, որոնք յիշեալ ճանապարհով երևան են գալիս մեր հոգեկան աշխարհում, թէև կողմնակի, բայց պարզւում է տարածութեան տարրի անհրաժեշտութիւնը հոգեկան աշխարհում։

Եթէ սեփական գիտակցութիւնը գիտակցող անհատը տարածութեան կարիք չունի, դրա փոխարէն մեզ շրջապատող մարդկանց գիտակցութիւնը անխզելի կապուած

է այդ մարդկանց մարմնապէս երևակայելու հետ, այսինքն տարածութեան հետ։ Այլ մարդկանց գիտակցութիւնը գտեղուած է այդ մարդկանց մարմնի մէջ և եթէ անդամ մենք խօսում ենք այդ մերձաւորների մտքերի և զգացմունքների մասին կարծես ուշադրութեան չառնելով մոռացութեան տալով ֆիզիքական աստառը, մենք ոչ մի բոպէ չենք մոռանում այդ զգացմունքների և մտքերի անխզելի կապը նրանց տէրերի ամբողջ կազմուածքի հետ։ Ինչպէս առօրեայ, այնպէս էլ գրական և գիտական խօսակցութեան ժամանակ միշտ պատահում են այսպիսի պարբերութիւններ. «մտքի մեծութիւնը», «գաղափարների տարածումը», և այլն, որոնք ցոյց են տալիս, թէ ինչքան խորն է բուն գրած մեր մէջ հոգեկան աշխարհի տարածականութեան մասին անգիտակցական հաւատը։

Իսկապէս կողմնակի գիտողութեան առնուած միտքը, այսինքն ոչ իմ անձնական միտքս, այլ ուրիշների, միշտ կարող է տարածութեամբ դիտողութեան առնուել ճիշտ այնպէս, ինչպէս բնութեան իւրաքանչիւր երևոյթը։

Այն միտքը, որ զբաղեցնում է միլիոնաւոր մարդկանց գլուխները, ամենայն իրաւամբ կարելի է տարածութեամբ աւելի մեծ համարել, քան մի մարդու գլխում բուն գրած միտքը։ Բայց միևնոյն ժամանակ չըպէտք է մոռանալ, որ անհատականապէս, այսինքն իւրաքանչիւր մարդու մէջ առանձին վերցրած՝ հոգեկան աշխարհը չի կարող գտեղուել տարածութեան մէջ, այլ տեղաւորուում է միմիայն ժամանակի մէջ։

Յամենայն դէպս պէտք է նկատել, որ այլ մարդկանց հոգեկան կեանքն անհասկանալի է առանց տարածութեան և երկրորդ՝ որ մարդուս խմբակցական հասկացողութիւնը՝ որպէս խմբակցական ինքնադիտողութիւն, նիւթական աշխարհի նման ընդունում է տարածական դասաւորութիւն։

Այնուհետև նիւթական աշխարհի երևոյթների մասին մեզ յայտնի է, որ նրանք կատարուում են ժամանակի և տարածութեան մէջ։ Իսկ ինչ վերաբերում է հոգեկան երևոյթների, ինչպէս արդէն ասել ենք, մեր անձնական

անհատական դրութեանց վերլուծութիւնը պարզում է հոգեկան կեանքի հետևողականութիւնը ժամանակագրական կարգով։ Այդ հոսանքը մեր գիտակցութեանը ներկայանում է որպէս իբար անընդհատ յաջորդող և փոխարինող մտքեր և տրամադրութիւններ։ Այստեղ հարց է առաջ է գալիս, արդեօք իրենք հոգեկան տարրերը, մտապատկերներն ու զգացմունքներն ունին ժամանակական տևողութիւն, թե նրանք մեր գիտակցութեան մէջ պահպանւում են վայրկենաբար։ Ինքնադիտողութիւնը դրականապէս լուծում է այդ խնդիրն այն մտքով, որ իւրաքանչիւր առանձին վերցրած հոգեբանական երևոյթ որոշ ժամանակ դոյութիւն ունի գիտակցութեան մէջ և որ այդ ժամանակի մեծութեամբ փոփոխւում է ուշադրութեան՝ այսինքն հոգեկան էներգիայի (աշխուժի) ներքին ոյժը. հոգեբանութեան մէջ մինչև վերջին ժամանակներս դոյութիւն ունէր այն վարդապետութիւնը, որը որև է հոգեբանական երևոյթի կազմակերպութեան համար մերժում էր ժամանակի կարևորութիւն։ Պնդում էին, իբրև թէ ինքը՝ գիտակցութիւնը և այն՝ ինչ որ կատարւում է նրա մէջ, ծնունդ է առնում վայրկենաբար և որ մեր հոգու մէջ արտաքին գրգռիչների պատճառով ստացուող մտապատկերները իրենց ձևակերպութեան համար ժամանակի կարիք չունին։ Հոգւոյ այդ վայրկենականութեան մէջ նկատում էին իբր հոգւոյ նիւթական պայմաններից անկախ լինելու ապացոյցներից մինը, այսինքն մարդուս կազմուածքից և մասնաւորապէս ուղեղից անկախ լինելու ապացոյցը։

Հոգին, ասում էին հոգեբանները, կարիք ունի նիւթական աստառի, այսինքն ուղեղի՝ որպէս մի գործիքի արտաքին հում նիւթերից տպաւորութիւններ ստանալու և հոգւոյ հրամանները կատարելու համար։

Դեռ 1898 թուականին հռչակաւոր բնագէտ Միլլերը ասում էր.—«Ինչպէս որ չի կարելի հաշուել ծովափնեայ աւազի հատիկները, այնպէս էլ երբէք չի յաջողուիլ չափել կամ հաշուել հոգեբանական պատկերների ծագման արագութիւնը կամ ժամանակը»։

Սակայն մի քանի տարուց յետոյ Միլլէրի աշակերտ Հելմհոլցը չափեց այդ արագութիւնը և գտաւ շատ անշան։ Նա ցոյց տուեց, որ արտաքին որև է առարկան նկատելու համար, այսինքն այդ առարկայի մտապատկերը կազմելու, մարդուցս պահանջւում է մօտաւորապէս $^1/_{10}$ վայրկեան։

Ահա այդ դիտողով վճռական հարուած տրուեց հոգեկան աշխարհի լիակատար ինքնավարութեան և պարզուեց նրա ունեցած մօտն կապը ֆիզիքական աշխարհի հետ։ Եւ իրօք, չէ՞ որ, եթէ հոգեկան պատկերների ծագման համար ժամանակ է հարկաւոր, ապա ուրեմն պարզ է, որ այստեղ կատարւում է նիւթական գործողութիւն (պրոցէս)։ Մինչոյն ժամանակ հոգեկան մտապատկերների կազմակերպութեան համար ժամանակի անհրաժեշտութիւնը աւելի մօտեցրեց հոգեկան և նիւթական (ֆիզիքական) աշխարհները, վերացնելով ամենախորունկ տարբերութիւններից մինը, որը գտնում էին այդ երկու աշխարհների մէջ։ Այսուհետև մենք գիտենք, որ ամբողջ հոգեկան կեանքը՝ նիւթականի նման անձնականապէս տարածւում է ժամանակի ընթացքում և առարկայականապէս էլ ստեղծւում և զարգանում է ժամանակի ընթացքում։

Այժմ տեսնենք, թէ արդեօք մարդուս հոգեկան կեանքում կա՞յ այնպիսի ֆակտոր (գործոն), որը համապատասխանի նիւթական աշխարհի շարժմանը։ Ճիշտն ասած, անձնական հոգեկան կեանքում տարածութիւն չընդունելը անխուսափելիօրէն ասնում է մեզ հոգեկան կեանքում նաև շարժումն մերժելուն, որովհետև ուր որ չկայ տարածութիւն, չի կարող լինել և շարժումն։ Այդ պատճառով մեր հասկացողութեամբ չի կարող նոյն իսկ խօսք լինել զգայողութիւնների, մտապատկերների և մտքերի շարժման մասին այն մտքով, ինչպէս որ այդ հասկացւում է նիւթական աշխարհում։ Դրա փոխարէն, երբ հոգեկան աշխարհը չենք քննում սուբէկտիւ (անձնական) կերպով մեր անձնական գիտակցութեան մէջ, այլ քննում ենք մարդկութեան խմբակցական գիտակցութեան մէջ, արդէն

հնարաւոր է դարձնում շարժման հասկացողութիւնը, որովհետև այդ սֆերայում, ինչպէս մենք տեսանք, կարելի է հոգեկան երևոյթները դասաւորել տարածութեան մէջ։ Իսկ երբ մենք ընդունում ենք, որ միտքը տարածւում է, նշանակում է, որ նա շարժւում է։

Սակայն դառնալով կրկին (սուբեկտիւ) անձնական դիտակցութեան, մենք հիմք ունենք ընդունելու, որ այստեղ էլ հնարաւորութիւն կայ շարժման՝ միայն թէ որոշ մտքով։

Կրփորձենք պարզել, թէ ինչ ենք հասկանում շարժումն ասելով։ Մենք այդ բառի մեխանիքական մտքին այնքան ենք ընտելացել, այսինքն այն բանի, որ նա նշանակում է տարածութեան մէջ դրութեան փոփոխութիւն, որ մեզ համար նոյն իսկ դժուար է այդ տերմինը հասկանալ այլապէս։ Բայց կարելի է պայմանաւորուել շարժում բառի տակ հասկանալու ամեն տեսակ փոփոխութիւն երևոյթների կամ առարկաների փոխադարձ յարբերութեան մէջ՝ բոլորովին նկատի չառնելով տարածութիւնը։ Նոյն աեսակէտից կարելի է խօսել նաև հոգեկան շարժման մասին այն մտքով, որ դիտակցութեան մէջ հոգեկան որոշ տարրերին փոխարինում են միւսները և. որ իւրաքանչիւր զգացողութիւն և պատկերացումն՝ կարող է տևել՝—այսինքն շարժուել տևողաբար։ Եթէ ինկատի առնենք այն, որ դիտակցութիւնը միշտ կապուած է փոփոխութիւնների հետ և. որ փոփոխութիւնը հիմք է ամենայն տեսակ շարժման, ապա այդ դէպքում դիտակցութեան ամբողջ ընթացքը (հոսանքը) կարող է դիտելի դառնալ որպէս անընդհատ շարժումն։

Եթէ ինկատի ունենանք, որ հոգեկան երևոյթները դասաւորւում են ըստ ժամանակի և. որ հոգեկան մի խումբ պատկերներ կարելի է շարայարել միմիայն որպէս շղթայ անցեալից, ներկայից և ապագայից, որի միջոցին ժամանակագրական գիծը փոխարինում է տարածութեան, այդ դէպքում մենք իրաւունք ունինք ընդունելու հոգեբանական պատկերների շարժումն ըստ ժամանակի։

Նորից հանդէս է գալիս նիւթական աշխարհի և դի-

տակցութեան մէջ նմանութիւն (նոյնութիւն), ժամանակը հանդիսանում է տարածութեան համանշան, իսկ հոգեկան շարժումը մեքենայականի համարժէք։

Հոգեկան շարժման վերաբերեալ գաղափարը հոգեբանութեան մէջ վաղուց արդէն օգտուում է քաղաքացիականութեամբ։ Գերմանական փիլիսոփա Հերբարտը հնարաւոր դատաւ հոգեկան աշխարհի վերաբերմամբ գործածելու նաև արագութեան մասին հասկացողութիւնը գիտակցութեան մէջ առանձին պատկերների շարժման ոյժի և արագութեան մասին։ Նա փորձում էր մտցնել նաև հասկացողութիւն մասսայի մասին, որից կազմուած է որոշ մտապատկերը և ընդունում էր, որ առանձին մտապատկերների հոգեկան շարժման ժամանակ՝ այդ վերջիններն իրար վրայ ճնշում են գործ դնում։

Ըստ Հերբարտի զանազան մտապատկերների և հասկացողութիւնների փոխադարձ ազդեցութիւնը կատարւում է մեխանիկայի օրէնքներով՝ այն է ոյժերի դումարմամբ։ Իհարկէ գիտակցութեան և հոգեկան կեանքի վերաբերեալ օրէնքները մեխանիկայի ֆորմուլաներով բացատրելը պէտք է ընդունողութեամբ վերջանար՝ հէնց թէկուզ մի միայն նրա համար, որ մենք դեռ չափ չունինք հոգեկան ոյժերի և (հասկացողութիւնների) մտապատկերների մեծութիւնը չափելու, և այսպէս կոչուած հոգեկան շարժման ծաւալը որոշելու համար։ Յամենայն դէպս գլխաւորն այն է, որ հնարաւոր է գիտակցութեան երևոյթների, շարժման պրոցէսի և բնութեան ֆիզիքական ոյժերի փոխադարձ ազդեցութեան նմանութիւնը գտնել։

Եթէ դեռ հնարաւորութիւն կայ կասկածելու, որ հոգեկան աշխարհում գոյութիւն ունի շարժման նման մի բան, այնուամենայնիւ չի կարող գոյութիւն ունենալ ամենափոքր կասկածն անդամ, որ հոգեկան աշխարհում գիտակցութիւնը իւրաքանչիւր քայլափոխում արտայայտում է լարուած դրութիւն, եռանդ ու աշխատանք։

Մեր ինքնագիտակցութեան ներքին ձայնը իւրաքանչիւր քայլափոխում ասում է մեզ, որ մեր ամբողջ հոգե-

կան կեանքը ասպարէզ է մի ինչոր աշխատանքի, մի ինչոր անհասկանալի եռանդի սպառման, հոգեկան զանազան երևոյթների տարբերի և ոյժերի մի փոխադարձ կռուի և գործակցութեան։

Միտքը, կամքն ու զգացմունքը, պատկերներ, յիշողութիւններ, ձգտումներ և կրքեր անընդհատ երբեմն կռւում են իրար հետ, երբեմն դուրս կոչում ու վերարտադրում իրար, երբեմն իրար վրայ ճնշումն գործ դնում, ներգործում, երբեմն զօրացնում և ամրապնդում են իրար, երբեմն էլ ընդհակառակն՝ իրար դուրս վանում։

Հոգեկան բաժան երևոյթների կռիւը անընդհատ շարունակւում է գիտակցութեան մէջ՝ իշխելու, «ես»-ի վրայ տիրանալու և մեր կամքն ու ընթացքը կառավարելու համար։

Մենք պարզ գիտակցում ենք, որ մի որոշ միտք կամ զգացմունք մեր մէջ երբեմն ուժեղանում է, այսինքն ձեռք է բերում աւելի լարուած դրութիւն և ահագին ազդեցութիւն գործում մեր հոգեկան աշխարի վրայ, երբեմն ընկնում և բոլորովին թուլանում, նսեմանում է։ Մի խօսքով անձամբ մենք զգում և գիտակցում ենք մեր ներքին աշխարհը, ոյժերի ասպարէզը, որոնք՝ արտաքին բնութեան ոյժերի նման, երբեմն հակառակ են իրար և երբեմն գործակից։

Նոյն ձևով մենք հաւատում ենք, որ մարդուս գործողութիւնների մէջ արտայայտուած ոյժը, նրանց արագութիւնը և եռանդը թէ մեր մէջ և թէ այլ մարդկանց մէջ կախուած է մեր գիտակցութեան մէջ կատարուող հոգեբանական գործողութիւնների եռանդից և լարուած դրութիւնից։ Մենք համոզուած ենք, որ մարդուս գործողութեանց ժամանակ խիստ համապատասխան է նրա հոգեկան և ֆիզիքական եռանդը։

Դիտելով մարդկանց փոխադարձ ազդեցութիւնը և ներգործութիւնը, որ ունենում են մինի մտքերը, զգացմունքներն ու կամքը միւսների հոգու վրայ, մենք նոյնպէս համոզւում ենք, որ այդ ազդեցութեան մէջ արտայայտ-

ւում է էներգիա հաղորդելու (եռանդ ներշնչելու) օրէնքը։

Ուրիշների վրայ ազդելու ոյժը մարդկանց մէջ տարբեր է. զգացմունքներից և մտքերից մի քանիսը աւելի են ազդում շրջապատող մարդկանց վրայ, քան միւսները։ Մարդկանց կեանքն ու գործունէութիւնը ներկայացնում է հոգեկան եռանդի արտայայտութեան ամենատարբեր աստիճանները՝ ինչպէս զուտ հոգեկան, այնպէս ֆիզիքական՝ արտաքին արտայայտութեան ժամանակ։

Ամբողջ քաղաքակրթութիւնը, տեխնիկան և գեղարուեստը ամբողջապէս վերցրած, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդուս հոգեկան ոյժերի աշխատանքի արտայայտութիւն։

Եւ որև է հասարակութեան կամ ժողովրդի քաղաքակրթական աշխատանքի չափը պատմաբանի համար ծառայում է որպէս չափ հոգեկան էներգիայի, որով այդ ժողովուրդն օժտուած է եղել։

Վերջապէս լեզուն, մարդկութեան խմբակցական այդ խելքը, վաղուց արդէն նախազգուշացրել է գիտութիւնը, ստեղծելով որոշ արտայայտութիւններ և տերմիններ (գիտական արտայայտութիւններ), որոնք ցոյց են տալիս մարդուս հոգւոյ մէջ աշխատանքի, ոյժի և եռանդի գոյութիւնը։

Հզօր, խորունկ և կարող միտք, զգացմունքներ յատիրշտակող, բռնի երևակայութիւն, անյաղթելի կամք, անսպառելի հոգեկան եռանդ, մտքի բեղմնաւոր աշխատանք, ուժեղ և թոյլ անձնաւորութիւն, և այլ արտայայտութիւնները ցոյց են տալիս, թէ որքան խորն է մեր մէջ այն համոզմունքը, որ մեր հոգեկան աշխարհը ֆիզիքականի նման, ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգեկան առանձին եռանդի արտայայտութեան ասպարէզ։

Ցայսօր չի յաջողուել գտնել հոգեկան էներգիան չափելու եղանակը, դեռ չի գտնուած վերջնիս միաւորը. այդ պակասը լրացնելու խնդրով է զբաղուած ներկայումս փորձնական հոգեբանութիւնը։ Թէպէտ մենք դեռ հեռու ենք այդ նպատակից, սակայն նրան հասնելու յոյսը դեռ կորսուած չէ և կազմում է հոգեբաններին գրաւող ուղեցոյց աստղը։

Մեզ շրջապատող ամբողջ նիւթական աշխարհը կազմուած է երևոյթների երկու մեծ դասակարգերից՝—անշունչ, մեռած, կամ անօրգանական բնութիւնից և այսպէս կոչուած՝—կենդանական թագաւորութեան երևոյթներից։ Առաջին խմբի մէջ թագաւորում են բնական—մեքենական օրէնքներ, այստեղ ոյժերի թագաւորութիւն է. բազմազան երևոյթների ամբողջ հարստութիւնը բացատրւում է զանազան ձևի շարժումներով։

Կենսական երևոյթների շրջանում՝— բուսական և կենդանական թագաւորութեան մէջ՝ մենք տեսնում ենք աւելի բարդ ոյժերի արտայայտութիւն, քան թէ բնական և մեքենայականները. այն գործողութեան եղանակները (պրոցէսները) որոնք կազմում են կեանքը, գոնէ ցայսօր կարելի չի եղել շարժումով բացատրել։ Իսկ այդ ձևի երևոյթների ամենաբնորոշ առանձնայատկութիւնները կայանում են նրանում, որ նրանց մէջ արտայայտւում է որոշ ուղղութեամբ զարգանալու և կատարելագործուելու ընդունակութիւն։ Զարգանալու այս տրամադրութիւնը արտայայտւում է արդէն կենդանի էակների բնութեան հետ յարմարուելու մէջ, պահպանւում է և ամրապնդւում ժառանգականութեան շնորհիւ, երբ յարմարուելու արդէն մշակուած ձևերն հաղորդւում են սերնդէ սերունդ։ Միւս կողմից էլ կենդանի էակները իրենց փոփոխուելու ընդունակութեան հետ ունին նաև հակառակ առանձնայատկութիւն՝—պահպանելու մի անգամ ընդունած տիպը՝ ձևը։ Հիմնական տիպարը պահպանելու և փոփոխութեան տրամադրութեան երկու բևեռների վրայ է պահպանւում այն առանցքը, որի շուրջը դառնում է կենդանի էակների զարգացման դարաշրջանը։

Էվոլիւցիայի կամ զարգացման օրէնքի հիմնական արտայայտութիւններից մէկն է անհատների աճումն ու բազմանալը, որով բնութիւնը վճռել է անհատի պահպանութեան խնդիրն ու նրա փոփոխութիւնը ի դէմս իւր սերունդների։

Ընդհանրապէս կենդանի նիւթի և կենդանի էակների ամենահիմնական առանձնայատկութիւն է շրջապատող

*

բնութեան պայմանների հետ աստիճանական զարգացումն։

Անցնելով մեր հոգեկան աշխարհի, բնականաբար մեզ հարց ենք տալիս՝—արդեօք այստեղ էլ պատահում ենք նիւթական բնութեան նման երևոյթների։

Ինչքան էլ տարօրինակ է թւում այդ հարցը, սակայն հոգեկան երևոյթների ուշադիր վերլուծութեան ժամանակ մենք հանդիպում ենք բաւարար փաստերի, որոնք իրաւունք են տալիս դրած հարցին դրական պատասխան տալու։

Մարդուս ներքին հոգեկան աշխարհը մի անհրաժեշտ բան չէ, սակայն իւրաքանչիւր քայլափոխում տալիս է զարգանալու ընդունակութեան արտայայտութիւններ. իւրաքանչիւր առանձին վերցրած միտք կամ զգացմունք ընդունակ է աճելու թէ ծաւալով և թէ ոյժով։ Ցաճախ մի միտքը ծնում է ուրիշները, որը յիշեցնում է բազմանալու գործողութիւնը՝ (պրոցէսը)։ Մարդուս ամբողջ հոգեկան անհատական կեանքը՝ մանկան հոգու մէջ դիտակցութեան առաջին նշոյլից մինչև խորին ծերութիւնը՝ արդեօք մեր հոգեկան աշխարհի աճման ու զարգացման մի անընդհատ շարքը չէ։

Մարդկային քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը և մարդուս պատմական զարգացումը կրօնական, մտաւոր և բարոյական ուղղութեամբ հնարաւոր է մի միայն հոգեկան կեանքի ժառանգականութեամբ՝ այսինքն դէպի գիտակցութեան որոշ երևոյթները կազմակերպուած ընդունակութեանց ժառանգաբար՝ ծնողներից սերունդների անցնելուն։

Ցարմարուելն էլ հոգեկան կեանքի հիմնական յատկութիւններից մէկն է։ Քաղաքակրթուած մարդու բոլոր բարդ հասկացողութիւնները, զգացմունքներն ու հակումները առաջ են եկած արտաքին՝ ֆիզիքական և ընկերվարական կեանքի պայմանների մարդուս հոգեկան գործունէութեան վրայ ազդելուց։ Մեր ընկերվարական պահանջները, բնազդներն ու սովորութիւնները պարզ արդիւնք են մեր հոգու յարմարուելու ընդունակութեան։

Ցարմարուելու նոյն երևոյթները մենք գտնում ենք

իւրաքանչիւր անհատի հոգեկան կեանքի շրջանում։ Մեր հոգու մէջ իւրաքանչիւր նոր ծնունդ առնող պատկերը զարգանում է ոչ թէ մեր հոգեկան կեանքի ամբողջ կազմից անկախ, այլ ձևակերպւում է՝ ենթարկուելով արդէն կազմակերպուած իրեն նման պատկերներին և հոգեկան երևոյթներին։

Զընայած հոգեկան և ֆիզիքական կեանքի զարգացման (էվոլիւցիայի) այս զարմանալի նմանութեան, դարձեալ կարող էր կասկած մնալ, թէ արդեօք սա իսկապէս ներքին նոյնութիւն է, թէ արտաքուստ երևցող նմանութիւն։ Այս կասկածը տեղի պէտք է տայ խորին համոզման, երբ մենք յիշենք, որ կենդանի էակների ամբողջ սերիան (շարքերը), որոնք հոգեպէս մարդուց ստոր են, արտայայտում են պարզ գործունէութիւն հոգեկան այժերի՝ հոգեբանական ձևերի ասոցիացիոնական տոհմային զարգացման՝ սկսած ստորին՝ հաղիւ գիտակցող էակներից՝ մինչև այն կենդանիները, որոնք հոգեպէս արդէն բաւական մօտ են երկրի թագաւորին՝—մարդուն։

Այստեղից ակներև է դառնում, որ նիւթական ձևերի և հոգեբանական կեանքի զարգացումը կենդանական թագաւորութեան մէջ՝ մի ինչ որ մեզ անհասկանալի ձևով անխզելի կապուած են իրար հետ և որ ամենայն հաւանականութեամբ նիւթական և հոգեկան զարգացումը ներկայացնում են միևնոյն գործողութեան (պրոցէսի) երկու կողմեր։

Այս ձևով մենք կրկին գալիս ենք մեզ ծանօթ եզրակացութեան՝ մարմնաւոր և հոգևոր աշխարհների փոխադարձ կապի մասին և այդ երկու աշխարհների համար էլ ընդհանուր հիմունքների և սկզբունքների գոյութեան։

Մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհում կատարուող երևոյթների դիտողութիւնները մեր առաջ պարզում են այդ երևոյթների յարաբերութեանց երկու դասակարգը՝ որակական և քանակական։

(Շարունակելի).

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՇԱԼՈՅՍ“

գրական հասարակական, քաղաքական, տնտեսագիտական պատկերազարդ օրաթերթի,

որ լոյս է տեսնելու օգոստոս ամսի վերջերից՝ ռուսաց «Русскія Вѣдомости» *օրաթերթի մեծութեամբ (տարեկան բաժանորդագինը 7 ռ.)։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Թիֆլիսի եւ Ռուսաստանի համար՝	Արտասահմանի համար՝
4 ամիսը (սեպ.—յուն.) 2 ռ. 50 կոպ.	4 ամիսը 4 ռ.=9 մարկ
3 » 2 »	=11 ֆրանկ=9 շիլինգ
2 » 1 » 50 »	=2 դոլլար։
1 » » » 75 »	

Խմբագիր-Հրատարակիչ՝ Գ. Մելիք-Կարագեօզեան

Սոյն սեպտեմբեր ամսից Գ. Մելիք-Կարագեօզեանի հրատարակութեամբ սկսեց լոյս տեսնել նաև «Кавказскій Вѣстникъ» ռուսերէն ամսագիրը, որի նպատակն է նպաստել Կովկասի զանազան ազգութիւնների փոխադարձ մերձեցմանը, նրանց համախմբել ընդհանուր քաղաքակրթական շահերի շուրջը և միևնոյն ժամանակ ռուս հասարակութեան առաջ պատկերացնել Կովկասի ընթացիկ կեանքն ու կարիքները։

Այդ նպատակով արդէն համաձայնութիւն է կայացել վրաց առաջադիմական «Ցնօբիս Փուրցելի» լրագրի խմբագրութեան հետ։

«Кавк. Вѣст.»-ի բաժանորդագինն է 4 ամիսը (սեպ.—յունր.) 3 ռուբլի։

«Արշալոյս» և «Кавк. Вѣст.» միասին ստացողները պէտք է վճարեն տարեկան 10 ռ., իսկ 4 ամիսը—3 ռ. 95 կոպ.։ Բաժանորդագրուել կարելի է խմբագրատանը (Թիֆլիզ, Գանովսկայա փող. № 11). օտար քաղաքներից պէտք է դիմել. Тифлисъ, Редакція газеты «Аршалуйсъ» կամ Tiflis, Rédaction du Journal «Arschalouis».

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵՒՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Պրոֆ. Ի. Գ. Օրբանսկի

(Շարունակութիւն *).

Մարդուս մտքի մէջ քանակութեան մասին հասկացողութիւնը առաջ է գալիս իրաքանչիւր անգամ, երբ մեր աչքի առաջ կրկնւում է իրար ամեն կերպ նման առարկաների շարքը։ Ա.յդպիսի դէպքերն են օրինակ՝ երբ մենք հայացք ենք ձգում նոյն տեղի անասունների նախրի վրայ։ Ա.յդ պատկերի մէջ թէպէտ իրաքանչիւր կենդանին ունի որոշ առանձնայատկութիւններ, սակայն դերիշխող է հանդիսանում ամբողջ խմբի բաժան անհատների միատեսակութեան, նմանութեան և լիակատար համեմատութեան տպաւորութիւնը՝ մանաւանդ երբ դիտում ենք որոշ տարածութիւնից։ Ա.յս տեղից է առաջ գալիս քանակութեան մասին հասկացողութիւն։

Քանակութեան մասին հասկացողութիւնը ամենից աւելի պարզւում է շարժման միջոցին, որովհետև տարածութեան մասերը, կամ շարժման ճանապարհները շատ աւելի հեշտ համեմատելի են և ընութեան աւելի միատեսակ երևոյթ։ Ա.յս դաղափարն ըմբռնելու և մշակելու դործում մարդիկ ամենից շատ պարտական են արտաքին ընութեան մէջ դոյութիւն ունեցող բազմաձիւ միատեսակ կրկնուող երևոյթներին և շարժումներին՝—որոնք են ասողը, դաղանները, ծառերը, ցերեկուայ և դիշերուայ կանոնաւոր յաջորդութիւններն և այլն։

---

*) Տես Արարատ № 9.

Սոյն յօդուածը շարունակութիւն է տեսութեամբերի համարի մէջ տպուածի, որը սխալմամբ մնացել է և հսկեմբերի համարի նիւթից առաջ չի տպուել։

*

Քանակութեան մասին հասկացողութիւնն էլ միւս կողմից ապացոյց է երկու կամ մի քանի երևոյթների որմատական տարբերութեան, նրանց համեմատելու անհնարինութեան և անհամանմանութեան։ Այդպէս են դոյները ձայների հետ համեմատած և կենդանիները՝ բոյսերի նկատմամբ

Մարդկային գիտութեան յառաջադիմութեան պատմութեան մէջ կարելի է նկատել ձգտումն աւելի և աւելի որոնելու և գտնելու քանակութիւնն այնտեղ, որտեղ առաջ ենթադրում էր յատկութեան տարբերութիւն։

Բնախօսութեան յաջողութիւնները մեր առաջ բաց են անում նեբքին (նմանութիւնը) ազգակցութիւն արտաքուստ տարբեր թուացող ֆիզիքական երևոյթների մէջ։ Այսպէս զանազան բարձրութեան ձայներն իրարից տարբերւում են մի միայն օդի տատանման (ալիքների) քանակութեամբ։

Քիմիան տարբալուծել է օրգանական բնութեան հազարաւոր իրարից տարբեր մարմիններ և. ապացուցել, որ այդ մարմիններից շատերը, որոնք ըստ երևոյթին նման չեն իրար, բաղկացած են բոլորովին համանման տարրերից, որոնք միայն միացած են տարբեր համեմատութեամբ (տարբեր %-ով)։

Կարելի է ասել, որ բազմաթիւ դէպքերում գիտութեան իւրաքանչիւր նոր յաղթանակը հասցնում է մեզ թուական յարաբերութեան այնտեղ, ուր մինչև այդ ենթադրում էին որակական տարբերութիւն։

Անցնելով հոգեկան աշխարհին՝ գիտակցութեան երևոյթներին, մենք այստեղ էլ գտնում՝ ենք ինչպէս որակական տարբերութիւն, այնպէս էլ քանակական յարաբերութիւն՝ մեր հոգեկան կեանքի բաժան երևոյթների մէջ։

Երբ մենք ստիպուած ենք լինում տարբերել մեր զգացմունքներն ու յիշողութիւնները և նրանց իրար հետ համեմատելով՝ վճռել որակով են տարբերւում նրանք, թէ քանակով, մենք զեկուցարում ենք այն մասշտաբով, որը

մեզ ծառայում է շրջապատող բնութիւնը համեմատելիս։

Այստեղ՝ դիտակցութեան մէջ էլ մենք որակով տարբեր ենք ընդունում մեր այն տրամադրութիւնները, որոնց իրար հետ համեմատել չի կարելի և տարբեր են։

Դասաւորելով լուսոյ, գոյների կամ տեսողութեան մասպատկերները ձայների մասպատկերների հետ, ոչ մի կերպ հնարաւորութիւն չենք գտնում այդ երկու՝ ըստ երևոյթին իրար հետ ոչ մի նմանութիւն չունեցող մասպատկերների շարքերն իրար հետ համեմատելու։

Ձայնն ու լոյսը դիտակցութեան մէջ միշտ իրար խորթ տպաւորութիւն են մնում,—դիտակցութեան համար նրանք հանդիսանում են զանազան դասակարգերի երևոյթներ, այսինքն նրանք յատկութեամբ տարբեր են։

Իսկ երբ մենք դիտակցութեան մէջ համեմատում ենք լուսոյ տպաւորութիւնների երկու տեսակը, օրինակ կարմիր և դեղին լոյսը, այդ դէպքում չը նայած այդ տպաւորութիւնների ամբողջ տարբերութեան, մենք նրանց մէջ գտնում ենք ընդհանուր տարրեր՝—լուսաւորութիւն և տեսողութիւն։ Երբեմն մենք նկատում ենք երկու տպաւորութիւնների խառնումն և նրանց մէջ միջին տպաւորութիւնների առաջ գալը։ Ահա թէ ինչ պատճառով այդ երկու տպաւորութիւններն իրենց յատկութեամբ մեզ այլ ևս տարբեր չեն երևում՝ ինչպէս գոյնն ու ձայնը։

Միևնոյն շարքի տպաւորութեանց սահմանում, ինչպէս օրինակ կարմիր գոյնի, մենք գտնում ենք ուժեղութեան որոշ աստիճաններ, գոյնի խտութիւնը, լուսաւորութեան պայծառութիւնը, և այդպիսի դէպքերում մեր մէջ արմատանում է այն համոզմունքը, որ այդ բոլոր տպաւորութիւններն իրենց յատկութեամբ համանման են և իրարից տարբերւում են մի միայն թուով։

Բարձրանալով վեր՝ դէպի հոգեբանական տպաւորութիւնների աւելի բարդ երևոյթները, մենք այստեղ էլ գտնում՝ ենք որակ և քանակ։

Մեր զգայմունքները բնաւորութեամբ երբեմն խստիտարբերւում են իրարից, ինչպէս զայրոյթն ու սէրը, ցաւը, երկիւղը և ուրախութիւնը. կամ ներկայանում են որպէս միևնոյն զգայման տարբեր աստիճաններ՝—ինչպէս օրինակ—ուրախութիւնը, բաւականութիւնը, յոյսը և դեղագիտական բաւականութեան զանազան տեսակները՝—օրինակ՝ տեսողականը, երաժշտականը և այլն։

Երկնային լուսատուների շարժման պարբերականութիւնը, հիմք կազմելով բնութեան մէջ ժամանակի և շարժման մասին մեր ունեցած հասկացողութեան, միևնոյն ժամանակ ծառայում է որպէս աղբիւր թուի և քանակութեան մասին ունեցած տպաւորութիւնների՝ ինչպէս ֆիզիքական աշխարհում, այնպէս էլ դիտակցութեան մէջ։ Այստեղ ի մի են ձուլուած կրկնողութիւնն ու արտաքին և ներքին, ֆիզիքական և հոգեկան համանմանութիւնը։ Այստեղ է թուի մասին հասկացողութեան սաղմը, որը միատեսակ չափով ընդգրկում է արտաքին բնութիւնն ու դիտակցութեան աշխարհը։

Մարդուս հոգեկան աշխարհը իրար վրայ ներդրօծող ոյժերի ասպարէզն է, որտեղ շարժւում և փոխադարձ աղդում են մտքի և զգայմունքների առանձին հեռանքները։

Այս փաստերի մէջ արդէն անմիջական կերպով բովանդակում է այն օրէնքը, որ հոգեկան աշխարհն հանդիսանում է մի ամփոփ ամբողջութիւն, որի մէջ բոլոր տարրերը, այսինքն առանձին մտապատկերներն, հասկացողութիւններն և այլն, դտնւում են սերտ փոխազդեցութեան մէջ և նրանց մէջ կատարուող փոփոխութիւնը պէտք է փոխադարձաբար կապուած լինի։ Ուրիշ խօսքով մեր հոգեկան՝ ինչպէս և նիւթական աշխարհում պէտք է իշխի պատճառականութեան խիստ օրէնքը, որի հիման վրայ ոչ մի փոփոխութիւն չի կատարւում առանց նրա նախորդ փոփոխութիւնների։

Դիտակցութեան մէջ այդ պատճառականութեան օրէնքներն ըմբռնելը շատ էլ դիւրին գործ չէ։ Հէնց հոգեկան երևոյթների կարճատևութիւնն ու շուտափոյթ փոփոխութիւնը դիտակցութեան մէջ, նրանց երբեմն առանց յայտնի շարժառիթների երևան գալը գլխաւոր պատճառն է, որ մեզանից խուսափում է մեր դիտակցութեան մէջ շարժուող մտապատկերների կապը, իսկ նրանց երևան գալն ու անյայտանալը մեզ թւում է որպէս պարտականութեան մի խաղ։

Բացի դրանից մեր հոգեկան կեանքում կան որոշ առանձնայատկութիւններ, որոնք աքօղում են հոգեկան երևոյթների պատճառական կապը և նրանց կանոնաւոր հետևողականութիւնը։ Մենք խօսում ենք այն ցնորքի մասին, որը մեզ հարկադրում է հաւատալ մեր կամքի ազատութեան, այսինքն որ նա անկախ է մեր հոգեկան գործունէութիւնից, մոտիւներից (պատճառներից), զգացմունքներից և այլն։

Կամքի ազատութիւն ընդունող հոգեբանները երբէք չեն մերժել այն բոլորի ներքին կապը, ինչ որ կատարւում է մեր հոգու մէջ, և ոչ էլ հոգեկան առանձին գործողութիւնների պատճառական հետևողութիւնը։

Բայց, «կամքի ազատութիւն» ընդունելով, հոգեբանները դրանով արտայայտում են այն միտքը, որ ընտրութեան և վճռի բուն գործողութիւնը առանձին տեսակի գործողութիւն է, որի մէջ մտնող հոգեբանական տարրերից բացի, ինչպէս մտապատկերներ, դատողութիւններ, զգացմունքներ և այլն, մասնակից է առանձին մի ոյժ, կամ առանձին հոգեկան օրգան՝—մեր եսը, որ վերջնական ուղղութիւն է տալիս կամքի վճռահատութեան։

Նոյն իսկ այն ենթադրութիւնը, որն ընդունում է առանձին ոյժի դոյութիւն և կամքի գործունէութիւն, որը կառավարում է հոգեկան բաժան գործողութիւնները

և նրանց միջից ընտրութիւն անում, դեռ ապացուցուած չէ։ Կարելի է կամքի գործունէութեան մէջ երևան եկող ընտրութիւնն ու վճիռը բացատրել նրանով, որ հոգեբանական բաժան գործոնների մեր հոգու մէջ որոշ լոպէյում կատարուող մրցման (կռուի) մէջ հոգեբանական ոյժերի փոխադարձ ազդեցութեան օրէնքով առաջ է գալիս հաւասարաղօրութիւն, որը հէնց այն է, ինչ որ մենք զգում ենք մեր ներսը և ընդունում իբրև առանձին գործողութիւն մեր ազատ կարծուած կամքի։

Ցամենայն դէպս մեր ինքնագիտակցութեան ներքին ձայնը խօսում է յօգուտ ազատութեան, այսինքն հոգեբանական երևոյթների պատճառական անողոք օրէնքի դէմ։

Ուրիշ՝ ոչ պակաս լուրջ արդելքը, որը մարդկանց խանդարում է անպայման հաւատալ, որ հոգեկան աշխարհում կայ պատճառական հետևողութիւն, գոյութիւն ունի անգիտակցական երևոյթների մէջ։ Հոգեբանական գրութիւնների գիտակցականից միշտ անգիտակցականի փոփոխուելը և ընդհակառակն, մոռացկոտութիւնն ու յիշողութիւնը, զգայախաբութիւնն ու զառանցանքը, այդ բոլորը միասին վերցրած հնարաւորութիւն չի տալիս, որ ամրապնդուի այն հայացքը, թէ գիտակցական աշխարհն ինքն ըստ ինքեան ամփոփ ամբողջութիւն է, որտեղ կատարուածը որոշւում է սեփական ոյժերով ու գործողութիւններով։

Այդ փաստերը պէտք է ըմբռնէն ի նկատի ունենալ։ Ակներև է, որ ընդարձակելով հոգեկան աշխարհի մասին հասկացողութիւնը, ընդարձակելով այն և անգիտակցական շրջանի վրայ, կարելի է փարատել ամենայն կասկած, որ ամբողջ հոգեկան աշխարհը նոյնչափ խիստ ենթակայ է պատճառական կապի, ինչպէս և նիւթական աշխարհը։

Ժամանակակից գիտական հոգեբանութեան տեսակէտից, որը հոգեկան աշխարհում տեսնում է նիւթականի արտացոլացումն, այդ ինքն ըստ ինքեան ակներև է և ոչ մի

ապացոյցի կարիք չունի։ Եթէ զգայմունքները մեր գիտակցութեան մէջ ծնունդ են առնում արտաքին բնութեան ազդեցութեան շնորհիւ՝ մեր զգայարանների և նեարդային սիստեմի գործունէութեան հետ կապուած, եթէ հոգեկան անգիտակցական կեանքը հետևանք է ուղեղի անզգայ (աւտոմատ) գործունէութեան, եթէ հոգեբանական որ և է երևոյթի գիտակցական դրութիւնից անգիտակցականի անցնելն ու ընդհակառակն կապ ունի որոշ տրամադրութեան՝ այսինքն նեարդային կեդրոնների գործունէութեան հետ, այն ժամանակ հասկանալի է, որ հոգեկան կեանքի ամբողջ ընթացքում ընդհատումներ ու թռիչքներ տեղի ունենալ չեն կարող և նա հոգեկան և ֆիզիքական ոյժերի գործողութիւնների ամբողջական անընդհատ մի շղթայ է։

Այդ շղթայի մէջ որ և է հոգեբանական երևոյթի դրութեան իւրաքանչիւր փոփոխութիւնը, գիտակցութեան մէջ լինի այն, թէ գիտակցութիւնից վեր, գիտակցութեան մէջ որոշ մտապատկերի, զգացման երևան գալը, այդ երևոյթների ուժեղանալն ու թուլանալը, նրանց ժամանակաւորապէս անգիտակցական դրութեան հասնիլը և նրանց փոխադարձ ազդեցութիւնը, բոլորը խստիւ ստորադրուած է հոգեբանական ոյժերի օրէնքներին, թէ և իրենք՝ այդ ոյժերը և ինքը՝ փոխադարձ ազդեցութեան օրէնքը դեռ ծածկուած է մեզանից։

Հոգեբանական երևոյթների այս թռուցիկ տեսութիւնը մեզ հասցրեց այն եզրակացութեան, որ հոգեկան աշխարհը երևան է հանում այն հիմնական բաղմաթիւ դծերն ու յատկութիւնները, որոնք յատուկ են ֆիզիքական բնութեան։ Թէ այստեղ և թէ այնտեղ մենք դտնում ենք ներքին ոյժերի գործողութեանց արտայայտութիւն և փոփոխութիւններ, որոնք կատարւում են տևողութեամբ և տարածութեամբ։

Գիտակցութեան՝ ինչպէս և ֆիզիքական բնութեան մէջ պատահում են դծեր, որոնք բնորոշում են կեանքի՝

այսինքն զարգացման երևոյթներ։

Բանականութեան մասին հասկացողութիւնը որոշ չափով կարելի է գործադրել նաև հոգեկան աշխարհի վերաբերութեամբ, վերջապէս հոգեկան կեանքն էլ նոյնպէս պատճառական կապակցութեան օրէնքի ենթակայ է այսպէս, ինչպէս ամբողջ բնութիւնը։

Այդ բոլորը միասին վերցրած՝ իրաւունք է տալիս յուսալու, որ վաղ թէ ուշ հոգեբանական երթոյթների խորհրդաւոր աշխարհը նուաճուած կլինի գիտութեան համար։ Մարդուս խուզարկու միտքը հաստատուն դիրք է ձեռք բերել՝ հոգեպէս յաղթանակելով ֆիզիքական բնութեան վրայ։ Մի և նոյն ղէնքի, այսինքն այն եղանակների օգնութեամբ, որոնք նպաստեցին նրան բնութեան օրէնքներին տիրանալու, նա կը թափանցի և իւր սեփական հոգու ամենադաղանի ազբիւրների խորքերը։

(Շարունակելի)

Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառւում են

	Ռ.	Կ.
1. Ժամագիրք միջագիր (կազմած)	2	—
2. Ժամագիրք գրպանի (կազմած)	1	50
3. Մեղուաբուծութիւն Գ. Ղազարեան . . .	—	50
4. Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Մկրտչեան . . .	—	50
5. Աղէքսանդր մեծ թարգ. Վրթանէս քհ. Մովսիսեան	—	50
6. Հայկականք Գ. Տ. Մկրտչեան	—	50
7. Աստուծուն թէ՞ Մամոնային. թարգ. Մամբրէ վարդ.	—	3
8. Բանաստեղծութիւնները և Կիրակոսի հարսանիքը. գրաշ. Ներսէս Տ. Աւետիքեան . . .	—	50
9. Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին. խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի . . .	—	40
10. Մարդուս շատ հող է հարկաւոր թարգ. Վրթանէս քհ. Մարգարեան	—	5
11. Հազար ու մի խաղ. Կոմիտաս վ. և Մ. Արեղեան Ա. յինեակ	—	15
12. Նոյնը Բ. յինեակ	—	20
13. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ. .	—	10
14. Բարի սերմեր թարգմ. Մամբրէ վարդ. . .	—	10
15. Էջմիածնի ծոցի օրացոյց 1905 թուականի . .	—	20
16. Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան . .	2	—
17. Գելցեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
18. Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք, Գարեգին վարդ. Յովսէփեան	1	20
19. Հայոց նոր վիպաներ, Մանանդեան և Աճառեան, դիտական	3	—
20. Նոյնը ժողովրդական Ա. հատոր . . .	—	50
21. » » Բ. հատոր . . .	—	50
22. Համառօտ տեսութիւն Հայրապետական Աթոռի մասին. Յուսիկ եպիս. Տ. Մարգարեան . . .	—	30
23. Ջէմս քրայս. Կրօնը և եկեղեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներում. թ. Ե. Ծ. վ. Մ. . . .	—	25
24. Տօլստոյի երկերի ժողովածուի առաջի գիրքը՝ Կրէյցերի Սօնատը, Կրէյցերի Սօնատի վերջաբանը, Կանանց և Սէր Ե. Ծ. վ. Մ.	—	60

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1905

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է { Ռուսաստանում 4 ր.
Արտասահմանում 5 ր.

Խնդրում ենք Արժ. Գործակալներին յայտնել այն բաժանորդների ճիշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարներ ստանալ փոստից։ Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առհասարակ նորա ցրումը կանոնաւորելու համար ամեն հոգ կտարուի։

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Типографическому Комитету

Արտասահմանի համար՝ Rédaction de la Revue „Ararat".
Etchmiadzine (Caucase)